

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ  
ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ 2016

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

АЭЛИТА ДОЛУХАНЫАН

ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ

ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

ПОЭЗИЯ АЛИСИИ

КИРАКОСЯН

ԵՐԵՎԱՆ 2016

*Տպագրության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան  
գրականության ինստիտուտի գիտական խորհուրդը:*

**Խմբագիր՝** բանասիրական գիտությունների դոկտոր  
**Նորայր Ադալյան**

*Գիրքը առաջին ամբողջական ուսումնասիրությունն է՝  
հայերեն լեզվով, ռուսերեն հավելվածով, նվիրված մեր ժա-  
մանակների նշանավոր բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոս-  
յանի ստեղծագործությանը: Այն հասցեագրված է գրականա-  
գետներին, պոեզիայի աշխարհը պաշտոդ ուսանողությանը,  
ընթերցողական լայն լսարանին:*

*Նվիրվում է Ալիսիա Գիրակոսյանի  
ծննդյան 80-ամյակին:*





## Աելիտա Գուրգենի Դուլուխանյան

Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: 2012-ին արժանացել է Հայաստանի մշակույթի վաստակավոր գործչի կոչմանը: 29 գրքի և շուրջ 350 գիտական հոդվածների հեղինակ է: Նրա աշխատությունները լույս են տեսել ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, լեհերեն: Թարգմանություններ է կատարում ռուսերենից, անգլերենից, ֆրանսերենից:

Ունի բազմաթիվ պարգևներ, այդ թվում՝ Մովսես Խորենացու մեդալ (2003): «Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ» գրքի համար արժանացել է Հայաստանի գրողների միության «Նիկոլ Աղբալյան» մրցանակին (2008): Հիմնել է «Եվրոպացի հայագետներ» մատենաշարը:

Professor Aelita Dolukhanyan holds a post-doctoral degree in philology, and is a Correspondent Member of the Armenian National Academy of Sciences. She is the first woman who was elected as a Correspondent Member of the Armenian National Academy of Sciences in the area of humanities. Prof. Dolukhanyan is the Chair of the Department of Ancient and Medieval Armenian Literature and Its Teaching Methodology at the Khachatur Abovian State Pedagogical University in Yerevan, Armenia. On 23 May 2012, the President of the Republic of Armenia bestowed on Prof. Dolukhanyan the honorary designation of Outstanding Contributor to Culture and Arts of the Republic of Armenia. Prof. Dolukhanyan has written 29 books and nearly 350 scholarly research articles.

Prof. Dolukhanyan's work has been published in Armenian, Russian, English, French, and Polish languages. She has also translated numerous research and literary pieces into Armenian from Russian, English, and French. Prof. Dolukhanyan has received many awards, including the Movses Khorenatsi Medal in recognition of her contributions to literary studies (2003). Her book "Frederic Feydit: an Armenologist" received the Nicol Aghbalian prize awarded by the Union of Writers of Armenia (2008). She has founded the "European Armenologists" literary series of books.

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

«Ալիսիա Կիրակոսյանի քնարերգությունը» գրքիս վերահրատարակման գաղափարը ծնվեց 2015 թվականի ամռանը, երբ մանրամասն ծանոթանում էի Բուենոս Այրեսի ու նրա շրջակայքի տեսարժան վայրերին, նաև վայելում աշխարհի բնական յոթ հրաշալիքներից մեկի՝ Իգուազուի բացառիկ գեղեցկությունը:

Քանի որ Ալիսիա Կիրակոսյանը որպես հիանալի բանաստեղծ իր ձայնը հնչեցրել էր հենց Բուենոս Այրեսից, և ես տարված էի Վահագն Դավթյանի վարպետ թարգմանություններով, իմ մեջ արթնացավ ուսանողական օրերի երազային աշխարհը: Հիշում եմ, թե ինչպես, երբ արդեն դոցենտ էի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի հայ գրականության ամբիոնում, ինձ մոտեցավ Վարուժան Խաստուրը մի քանի տղաների հետ (այն ժամանակ բանասիրությունը շարունակում էր մնալ տղաների բնագավառ) և խնդրեց հանդիպում կազմակերպել Ալիսիա Կիրակոսյանի հետ: Ես պետք է լինեի հիմնական գեկուցողը և հանդիսությանը պաշտոնական տեսք տվողը: Երբ դիմեցի հայ գրականության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Վաչե Պարտիզունուն և բանասիրականի դեկան Վաղարշակ Քոս-

յանին, երկուսն էլ պատրաստակամ աջակցեցին ինձ: Այդ հանդիպումը անշլազ (апплат) էր, այնքան ուսանողներ էին եկել նաև ուրիշ բուհերից: Երբ հանդիպումից հետո հավաքվեցինք դեկանի կաբինետում՝ սուրճի սեղանի շուրջ, Ալիսիան ավելի մտերմիկ ձևով մեզ հավաստիացրեց, թե ինքը որոշել է դառնալ Նոբելյան մրցանակի առաջին հայ դափնեկիրը: Չգիտեմ մյուսներին ինչ խոհեր պաշարեցին այդ ժամանակ, սակայն ես սրտանց ցանկացա, որ դա դառնա իրականություն: Մի՞թե իր խոր մարդասիրական գրականությամբ Վիլյամ Սարոյանը չէր կարող դառնալ այդ դափնեկիրը, կարող էին դառնալ նաև մեր դասական գրողներից ոմանք, թե արևելյան և թե արևմտյան հատվածներից:

Հետո՝ տարիներ անց, ես, ինձ հետ նաև ուրիշ գրականագետներ, առաջադրեցինք Ալիսիայի թեկնածությունը Նոբելյան Կոմիտեին, ստացանք պատասխան, որ նա գրանցված է որպես մրցանակի հավակնորդ: Սակայն նա չստացավ այդ մրցանակը: Գրիգոր Նարեկացու հանճարեղ ավանդներով սնված հայ քնարերգությունը չստացավ այդ մրցանակը:

2016 թվականին լրանում է Ալիսիա Կիրակոսյանի ծննդյան 80-ամյակը և, ցավոք, երկու տարի է, ինչ նա վերնականների մոտ է, որոնց մասին այնքան գրում էր, որոնց հետ խոսում էր անդենական փիլիսոփայական գրույցներում: Իմ

ձեռքին է 2005 թվականին Երևանում հրատարակված Ալիսիա Կիրակոսյանի «Ամբողջական երկեր» գիրքը, որն իսկապես ամբողջական ձևով ներկայացնում է Ալիսիա Կիրակոսյանի կյանքը և գործը, այսինքն նաև «Ստեղծագործական կենսագրությունը»:

Ալիսիան որպես գրական երևույթ արժանացել է բազում հիացական գնահատականների՝ հայ թե օտար երևելի անհատների կողմից: Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, հիանալի բանաստեղծ Հրաչյա Թամրազյանը 1996-ին գրում է. «Ալիսիա Կիրակոսյանի հանճարին քաջ ծանոթ եմ շատ վաղուց: Ինձ համար իրոք գյուտ է նրա բանաստեղծությունը: Ալիսիան տեղ է գրավել մեր բանաստեղծության պատմության մեջ՝ մեր մեծ անունների կողքին»:

«Ալիսիա Կիրակոսյանի քնարերգությունը» մենագրությունը որոշ չափով վերանայված է, ավելացել են մի քանի կենսագրական փաստեր և մի շարք քերթվածների վերլուծականներ: Նույնությամբ թողել եմ «Մուտք» հատվածը առաջին հրատարակությունից: Որպես հավելված ավելացրել եմ „Литературная Армения” ամսագրում տպագրած հոդվածս և Ալիսիայի մի քանի բանաստեղծությունների ռուսերեն հոյակապ թարգմանությունները տաղանդավոր թարգմանիչ և բանաստեղծ Ալբերտ Նալբանդյանի թարգմանությամբ:



*Ալեխտա Դոլուխանյան*



Հանդիպում Խ.Աբովյանի անվան ՀՊՄԻ  
բանասիրական ֆակուլտետում:

Ձախից երկրորդը՝ Վ.Քոսյան,  
երրորդը՝ Ալիսիա Կիրակոսյան, չորրորդը՝ Վ.Պարտիզունի,  
հինգերորդը՝ Ա.Դուլիսանյան



## Մ Ո Ւ Տ Ք

Սա մի մենագրություն է, որը նվիրված է մեր ժամանակների հրաշալի բանաստեղծներից մեկի՝ Ալիսիա Կիրակոսյանի ստեղծագործությանը:

Հետազոտման մեջ հիմնականում օգտագործված են զուգահեռներ բանաստեղծուհու և հայ գրականության մեծերի քերթությունների միջև: Ալիսիա Կիրակոսյանի բանաստեղծական հրաշքը ծնվել է հայկական գենից՝ իր մեջ ներառելով համաշխարհային գրականության և մշակույթի ակնառու երևույթներն ու նվաճումները: Բանաստեղծուհին ձայնակցում է աշխարհի նշանավոր գրողներին՝ անցյալի, ներկայի և, համոզված ենք, ապագայի: Այս երևույթը սուսկ նրա կրած ազդեցությունների ոլորտում դիտելը պարզունակություն կլիներ, մեծերը հաճախ կրկնում են իրար, միմյանցից անկախ և այնքան նորովի՝ հենց սրա մեջ է նրանց անզուգականության գաղտնիքը:

Գրքի սկզբում շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանին՝ բանաստեղծուհու «Երկերի լիակատար ժողովածուն» մեզ տրամադրելու համար:

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ալիսիայի կյանքի սկիզբը նման է բոլոր սփյուռքահայերի այն սերնդի ճակատագրին, որը ծնվեց եղեռնից մազապուրծ ծնողներից, աչք բացեց օտար ափերում, իմացավ, որ ինքը ծագումով գտարյուն հայ, բայց հանգամանքների բերումով և բնականաբար կրողն է արդեն իր համար երկրորդ, գուցե և առաջին հայրենիք դարձած նոր երկրի, որի կրթությունը, դպրոցն ու բուհը, բարոյահոգեբանական մթնոլորտը նրան դաստիարակել են որպես մի պատվաստ այլ արմատի վրա. արմատը հին է և վաղնջական՝ այն հայկական է: Նմանատիպ երևույթները հիմա պատկերվում են գրականության և արվեստի մեջ. դրանք շատ են, բայց ուզում ենք հիշել միայն երկուսը: Կա մի հիանալի գիրք, որը կոչվում է «Հայաստան – 1900», այն ավելի շուտ հայերի դեմ թուրքերի իրագործած եղեռնը մերկացնող մի պատկերազարդ պատմություն է՝ հեղինակած ֆրանսիացի բժիշկ, վիրաբույժ Իվ Տերնոնի և հայ տպագրիչ Ժան Պոլ Քեբաբջյանի կողմից: Դա երևակայական որբի մի պատմություն է: Տեր Զորից մազապուրծ փրկված որբի՝ հոր բզկտված օրագիրն է, որի էջերից կարոտ է ծորում դեպի Վանը՝ իր ծննդավայրը, երկիր դրախտավայրը: Պատահական

չէ հայկական իմաստության բանաձևումը՝ ժողովրդական ասացվածքի մեջ. «Այս կյանքում Վանը, այն կյանքում դրախտը»: Ծագումով բոլոր վանեցիները հոգեկան վարակիչ պահեր կապրեն այդ գրքի տողերին հաղորդակցվելիս. այնտեղ տեսանելի է Վան քաղաքը՝ իր շրջակա գյուղերով, իր այգեստաններով, արհեստագործական ճյուղերի զարգացածությամբ, հողի եռանդուն աշխատավորով, որն իր աշխատասիրության շնորհիվ վայելում էր բարեբեր հողի պարզևած բարիքները՝ ապրելով պարզ, բայց գեղեցիկ կյանքով՝ հիշելով հեթանոս ժամանակների ավանդությունները, պաշտելով Քրիստոսին՝ ջանալով իր կյանքում հետևել աստվածաշնչային պատգամներին, մինչև որ քոչվորական բնագրով առաջնորդվող նախճիրն ու վայրագ կողոպուտը ոչնչացրին հային իր բնիկ երկրում, իսկ մագապուրծ եղածները աշխարհասփյուռ եղան: Ահա այս է Ալիսիա Կիրակոսյան բանաստեղծուհու գենետիկ ծննդյան վկայականը: Նա ծագումով վանեցի է. այդ նույն տեղեկանքը կարելի է տալ շատերին, ինչպես նաև հանճարեղ նկարիչ Արշիլ Գորկուն՝ Ոստանիկ Ադոյանին, որի հուշերը և նկարները այնքան հուզաթաթավ ներկայացնում են իր ծննդավայրը՝ Վանը, նրա կարոտը ամբարելով իր մոր գեղանկարի չքնաղ ու թախծաշաղախ աչքերում:

Այդպես է զգում նաև իր նախնիների հողը երիտասարդ բանաստեղծուհին՝ Ալիսիա Կիրակոսյանը, երբեք դեռ հայրենիքը չտեսած, իր երևակայության ու սրտի մեջ այն ունենալով գրում է. «Ես ուզում եմ դիպչել այն հեռավոր հողին, բույրերի մեջ նրա իմ անցյալը զգալ և բույրերից նրա իմ ավիշը կազմել»:

Եվ ահա 1967-ին բանաստեղծուհին այցելում է Հայաստան՝ արդեն ունենալով առաջնակարգ բանաստեղծի համբավ իր ծննդավայր հայրենիքում՝ Արգենտինայում:

Այս այցելությունը ուժեղացնում է կապը արմատի հետ և հարստացնում է բանաստեղծուհու ներաշխարհը նոր հայտնություններով, ինքն ու իր քերթվածները իրենց հերթին մի հրաշք հայտնություն են դառնում հայկական իրականության համար:

Ալիսիա Կիրակոսյանի բանաստեղծությունները սկզբում (1967-ին) լույս տեսան նշանավոր բանաստեղծ Վահագն Դավթյանի ընտիր թարգմանությամբ (տողացին իսպաներենից կատարել էր Մ.Ղրղյանը):

Կյանքի ընթացքը, նոր հանգամանքները ստիպում են, որ բանաստեղծուհին իսպաներենին զուգընթաց իր համար գրոց լեզուներ դարձնի անգլերենը և հայերենը: Սկսվում է ինքնակատարելագործման տքնաջան, ինքն իրեն խաչ հանելու մի ճանապարհ և այն պսակվում է հաջողությամբ: Ճոխա-

նում է բանաստեղծուհու պապենական լեզուն, հղկվում, բյուրեղանում, ու թեև նա խոսում է արևմտահայերեն, սկսում է գրել արևելահայերեն, այդպես են նրան թելադիր լինում սիրտն ու միտքը:

Սկսվում է եռալեզու բանաստեղծությունների ժամանակը, ըստ որում նույն բանաստեղծությունը նա ինքն արդեն թարգմանում է այդ երեք լեզուներից ցանկացածով՝ իսպաներեն, հայերեն, անգլերեն: Իսկ ո՞ր լեզվով է նա մտածում, ինքը հավատացնում է, թե հենց այն լեզվով, որով գրում է, կամ մի լեզվով հավանաբար, որը վերին ոլորտների հետ է կապվում ու նոր միայն իջնում թղթին՝ վերածված որևէ լեզվի բառերի ու նախադասությունների:

Լեզվական այս փոփոխությունները, հատկապես անգլերենին անցնելը, նաև բնակավայրի փոփոխությունների հետ էին կապված: Բուենոս Այրեսից բանաստեղծուհին տեղափոխվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ամուսնանում, հաստատվում Լոս-Անջելեսում, ուր և ծնվում է նրա կյանքի մեծագույն պարզևն ու իմաստը՝ դուստրը՝ Լարան: Ինչպես երևում է իր գրած խիստ համառոտ կենսագրական նախաբանից, Լոս-Անջելեսյան հայկական գաղութի և բանաստեղծուհու միջև հաստատված են բարդ հարաբերություններ, որից ելք նա գտել է գաղութից հարկադիր ինքնամեկուսացման մեջ: Քիչ չեն եղել նաև



կենցաղային, առօրեական կամ հանապազօրյա դժվարությունները, որոնց աննկուն ձևով ինքը դիմադրում է՝ փարվելով ստեղծագործական աշխարհին:

Հայրենիք այցելելուց և Լոս-Անջելես տեղափոխվելուց հետո նրա ստեղծագործական ուղու մեջ տեղի է ունենում ևս մի բեկում. նա ամբողջությամբ մտնում է հայկական կեղևի մեջ՝ այդ ձևով մնալով մարդկության խոհերի կրողը. փիլիսոփա բանաստեղծուհին այլևս իր գերտարածական ճամփորդությունը կատարում է իր արմատից՝ մակրոկոսմի և միկրոկոսմի, մարդու և տիեզերքի, Աստծու և մարդու, հավերժականի և ունայնության մշտնջենական խնդիրներին անդրադառնալով ընտանի, պապենական դիտակետերը իր մեջ ավելի շոշափելի զգալով: Նա չի գալիս դեպի ազգային նեղ սահմանափակում, որովհետև սահմանափակմանը չեն պատկանում այն երգերը, որոնք ասվում են բոլոր ազգերի համար, քանզի բոլորինն են սերը, մայրության սրբազան զգացումը, աստվածային խորհրդապաշտությունը:

Ինքը՝ բանաստեղծուհին, մատնանշում է, թե եռալեզու գրելը կամ բազմալեզու ստեղծագործելը եզակի երևույթ չէ քնարերգության բնագավառում, ինքը գիտի հայերից Մայաթ-Նովային, որը հավասարապես գրում էր թուրքերեն, հայերեն, վրացերեն, մի խաղ ունի նույնիսկ չորս լեզվով, այսինքն՝ նախորդ երեքին գումարած պարսկերենը: Մայաթ-Նովան

բուրբ լեզուների մեջ էլ իրեն զգում էր տիրակալ, այս երևույթն, իհարկե, եզակիություն չէ, բայց օրինաչափ էլ չէ:

Հայերեն գրելու պատճառը բանաստեղծուհին տեսնում է նաև կարևոր մի հանգամանքում: Հայ բանաստեղծությունը, սկիզբ առնելով հնագույն դարերից, ստեղծել է մի փայլուն դպրոց, որը պատիվ կրերի աշխարհի ցանկացած գրականության: Տեղին է հիշել Արշակ Չոպանյանի „La Roserie d'Arménie” սովարածավալ եռահատոր գիրքը՝ լույս տեսած Փարիզում 1918, 1923 և 1929 թվականներին<sup>1</sup>, և Վալերիի Բրյուսովի „Поэзия Армении” ժողովածուն 1916 թվականին<sup>2</sup>, Մոսկվայում՝ 1915 թվականի ազգակործան եղեռնից հետո: Երկու հեղինակներն էլ՝ և՛ Արշակ Չոպանյանը, և՛ Վալերիի Բրյուսովը, տիրապետում էին եվրոպական լեզուներին և բազմագիտակ մտածողներ էին: Նրանք երկուսն էլ փաստերով հիմնավորում են հայ միջնադարյան քնարերգության համաշխարհային արժեքը:

Ալիսիա Կիրակոսյանը գիտի հայ քնարերգության դասականությունը, սակայն նա տեղյակ է նաև մի ցավալի փաստի. հայ պոեզիայի բարձրարժեքությունը հայտնի է միայն հայագիտական շրջաններին, բայց ոչ երբեք լայն գրական

---

<sup>1</sup> „La Roserie d'Arménie”, Paris, t. 1, 1918, t. 2, 1923, t. 3, 1929.

<sup>2</sup> „Поэзия Армении с древнейших времен до наших дней”, редакция, вступительный очерк и примечания Валерия Брюсова, Москва, 1916.

շրջանակներին, առավել ևս լայն ընթերցողական լսարանին: Բանաստեղծուհին իրեն համարում է հայ բանաստեղծության այն ներկայացուցիչը, որը որպես մունետիկ պատռելու է ազգային նեղ շրջանակների իմացության սահմանները և հայ հանճարի գոհարները դուրս է բերելու դեպի մեծ աշխարհ, հոգևոր հարություն տալու համար այն մեկ ու կես միլիոն գոհերին, այն 200 ընտիր մտավորականներին ու գրողներին, որոնք գոհ դարձան բիրտ ուժին: Այսպես իրենով, իր ստեղծագործությամբ, բոլորին հայտնի դառնալով միջազգային ճանաչման խոստովանությունը կգա դեպի իր ժողովրդի հնամենի բանաստեղծական հանճարը, դեպի բոլոր նրանց, ովքեր հանիրավի ճանաչված և ընդունված չեն մարդկության հանուր մշակութային գանձարանում:

Բանաստեղծուհին իր գրական վարքագծով կատարում է ևս մի կարևոր քայլ, խոսելով արևմտահայերեն և գրելով արևելահայերեն, նա հավատում է, թե որքան անհեթեթ է այդ երկու հարուստ ու կենդանի լեզուների՝ արևմտահայերենի և արևելահայերենի շուրջ ծավալված բանավեճը՝ ամեն մի գրագետ հայի համար, երբ երկու լեզուներն էլ կենսունակ են, և նրանք հրաշալի կատարում են աստվածային իրենց գործը:

Ալիսիա Կիրակոսյան քնարերգուին առաջին հայտնաբերողը եղել է, իհարկե, նշանավոր բանաստեղծ Վահագն

Դավթյանը, որը ոչ միայն սովորական թարգմանիչ չէր, այլ մեզանում այդ բանաստեղծուհու առաջին մեկնիչը: Նա Ալիսիա Կիրակոսյանի պոեզիան գնահատում է 20-րդ դարի իսպանագիր նշանավոր բանաստեղծների՝ Գարսիա Լորկայի, Ռաֆայել Ալբերտիի, Պաբլո Ներուդայի և մյուս նշանավորների տեսադաշտում, և նրա կարծիքով Ալիսիա Կիրակոսյանը ոչ միայն հաղորդ է ժամանակակից պոեզիայի նվաճումներին, այլև գտնվում է այդ նվաճումների բարձրության վրա: Ավելի բարձր գնահատական դժվար է տալ երիտասարդ բանաստեղծուհուն: Միաժամանակ նա նշում է, որ Ալիսիա Կիրակոսյանի ստեղծագործությունը առնչվում է նաև հայկական թեմային, քանզի նրա մեջ խոսում է արյան ձայնը:

Վահագն Դավթյանը 1967թ. լույս տեսած «Արմատ և էություն» գրքի «Երկու խոսք» նախաբանում գրում է. «Ծանոթացա այդ բառացի թարգմանություններին, և դրանց տողերի տակից իսկ բարձրացավ ինքը՝ նորին մեծության պոեզիան՝ վավերականը, ճշմարիտը, հրաշալին: Զտարյուն պոեզիայի լույս էր խաղում այդ տողերի մեջ, իր հետ բեկբեկելով մարդկային սերն ու թախիժը, հիացումն ու տառապանքը, զարմացումն ու հավատը: Դրանք տողեր էին, որ թափանցում էին սրտիդ ու

մտքիդ այն խորշերը, որոնց մուտքը մատչելի է միայն մեծ զգացմունքով ու մեծ մտքերով շաղախված պոեզիային»<sup>3</sup>:

Վահագն Դավթյանն իր համառոտ խոսքում խոսուն փաստեր է բերում Ալիսիա Կիրակոսյանի մասին՝ նրա գործերը հայտնի են իսպանախոս երկրներին, այն թարգմանվում է ֆրանսերեն, այն արդեն հրատարակվել է իտալերեն, և նկարագարդել է նրա ժողովածուն աշխարհահռչակ Պաբլո Պիկասոն:

Նրա գրքի՝ «Հեղինակի կողմից» սեղմ խոսքում բանաստեղծուհին խոստովանում է փոքր-ինչ ձևափոխված Հուլիոս Կեսարի հայտնի խոսքերով՝ «Եկա, տեսա, հաղթվեցի» և մարգարեաբար հայտարարում. «Պոեզիան, մագնիսական ուժը, ներըմբռնողությունը գոյության հյուսթը ճանաչելու նախնական տարրերն են: Այդ իսկ պատճառով կարող եմ ասել, որ սկսում եմ ճանաչել Հայաստանը, որի գույները պոեզիայի հիացումն են պարզևում ինձ, որի հողը ձգում է, դառնում ներըմբռնողականություն, և ի վերջո, ինձ կձուլի իր հետ»<sup>4</sup>:

Ալիսիա Կիրակոսյանի բանաստեղծությունների երկրորդ հայտնաբերողը մեզանում, անշուշտ, կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանն է, որը լսեց նրա պոեզիայի մեղեդին

---

<sup>3</sup> Ալիսիա Կիրակոսյան, Արմատ և էություն, Երևան, 1967, էջ 3:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 9:

և երգերի մի փունջը վերածեց հրաշք երգերի, ու այդ երգերը դարձան 60-ականների վերջերի և 70-80-ականների երիտասարդության և ընդհանրապես մտավորականության սիրելի մեղեդիները:

Ալիսիայի բանաստեղծությունները հրաշալիորեն ձուլվում են մեղեդու հետ, ինչպես բանաստեղծուհին է բազմիցս վկայում, իսկական քնարերգությունը ունի գույն, երանգ, մեղեդի:

Անտիկ աշխարհի նշանավոր բանաստեղծների քերթվածները երգում էին, բավական է միայն հիշել Օրփեոսին և Ամփիոն Թեբացուն: Գրիգոր Նարեկացին իր «Երգ-երգոցի» առաջաբանում հաղորդում է, թե Սողոմոն Իմաստունին վերագրված «Երգ երգոցը» երգվում էր տաճարում: Երգվում էին միջնադարյան հայ քնարերգուների գործերը՝ շարականները, տաղերը, գանձերը, միջնադարյան ձեռագրերում նրանք խազագրված են, այսինքն ներկայացված են իրենց ձայնանիշերով՝ նոտաներով: Ալիսիայի բանաստեղծությունները նույնպես երգում են: Նրանք ունեն իրենց հատուկ մեղեդայնությունը՝ նայած ինչ հույզ և ինչ խոհ են արտահայտում:

Ալիսիա Կիրակոսյանի բանաստեղծություններն այժմ թարգմանված են աշխարհի շատ լեզուներով. այդ մասին մանրամասն տեղեկանք է տալիս նրա 1997-ին հրատարակված «Երկեր» հատորի «Հեղինակի գրական կենսագրություն»

բաժինը՝ էջ 383-405, նաև 2005-ին հրատարակված «Ամբողջական երկեր» հատորը (էջ 477-513):

Նրա երկու գրքերը՝ «Արմատ և էություն» և «Նամակ առ Հայաստան», եղել են «բեստ սելլըր» և սպառվել են ակնթարթային արագությամբ:

Ալիսիա Կիրակոսյանին նկարել են և քանդակել նշանավոր և անվանի արվեստագետներ Մարտիրոս Սարյանը, Քնարիկ Վարդանյանը. Արմինե Կալենցը, Արա Շիրազը, Խուան Կարլոս Բենիտեսը, Սարա Ռեբուլը, Էլպիո Ֆերնանդեսը և ուրիշներ, իսկ նրա պղնձե կիսանդրին 1992-ից տեղադրվել է Հայաստանի Հանրապետության Գրականության և Արվեստի Պետական թանգարանում: Նրա երկերի ամբողջական հրատարակությունները 1997 թվականին լույս տեսան Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Լոս-Անջելեսում՝ հայերեն, իսպաներեն և անգլերեն լեզուներով, նաև 2005-ին Երևանում:<sup>5</sup>

Ալիսիա Կիրակոսյանի պատվին ստեղծագործական բազմաթիվ երեկոներ են կազմակերպվել աշխարհի ամենատարբեր երկրներում և քաղաքներում՝ Բուենոս Այրեսում, Լատինական Ամերիկայի ուրիշ շատ քաղաքներում՝ Մոնթեվիդեո, Բոգոտա, Մեքսիկայում, Փարիզում, Լյուքսեմբուր-

---

<sup>5</sup> Ալիսիա Կիրակոսյան, Ամբողջական երկեր, Երևան, 2005:

գում, Եգիպտոսում, Աթենքում և Սելանիկում, Լոնդոնում, Վիեննայում, Հալեպում, Մադրիդում, Մոսկվայում, Ստոկհոլմում, իհարկե ամենից շատ Միացյալ Նահանգների համալսարաններում և մշակութային կենտրոններում:

Իսկ Երևանում ուսանողության հետ կազմակերպված հանդիպումները վերածվել են իսկական տոնախմբության: Նա ստացել է մի շարք միջազգային մրցանակներ, դիպլոմներ, պատվոգրեր, ընտրվել հեղինակավոր հանձնաժողովների անդամ:

1993-ին Բրազիլիայի Սան Պաբլո քաղաքի պետական համալսարանում Ալիսիա Կիրակոսյանի ստեղծագործության ուսումնասիրության հիման վրա պաշտպանվել է դոկտորական ատենախոսություն:

Ալիսիա Կիրակոսյանի մասին գրվել են բազմաթիվ հոդվածներ, տրվել ամենատարբեր բնորոշումներ՝ դրանց հեղինակների մեջ կան աշխարհահռչակ գրողներ՝ Վիլյամ Սարոյան, Խորխե Լուիս Բորխես, Ժակ Պրևեր, Խուանա դե Իբարբուրու: Եղիշե Չարենցից հետո 20-րդ դարի հայ նորագույն շրջանի ամենամեծ բանաստեղծը՝ Պարույր Սևակը, նրան կոչել է դարիս ամենամեծ բանաստեղծներից մեկը, ֆրանսիացի հռչակավոր բանաստեղծ Ժակ Պրևերը նրան՝ իր ստեղծագործության համար կոչել է մի գիսաստղ, մի արև, Խուան Բլարիան՝ Ուրուգվայի Գրողների Միության նախա-



գահը, Ալիսիա Կիրակոսյանի մասին 1970-ին գրել է. «Ալիսիա Կիրակոսյանը սահմանում է մարդու վիճակը՝ սահմաններից այն կողմ: Նրա պես կանայք կերտում են հոգու պատմությունը»: Ուրուզվացի բանաստեղծուհի Ալբա Ռոբայուն, որը եղել է Ուրուզվայի մշակույթի և կրթության նախարարը, Ալիսիա Կիրակոսյանին անվանում է աստվածների ընտրյալը, որի ստեղծագործությունը հաղթել է մահվանը:

Ուշագրավ է մեր ժամանակների հայ ամենանշանավոր բանաստեղծուհու՝ Սիլվա Կապուտիկյանի, ի դեպ, նա նույնպես ծագումով վանեցի է, բնութագրականը. «Բանաստեղծություններ, որոնք նմանը չունեն մեր՝ այնքան ճոխ, բազմադարյան և հայերգության մեջ և չէին էլ ունենա: Դարավոր մեր ընթացքի մեջ նոր մի շրջանի ծնունդ են այդ բանաստեղծությունները: Լինելիության մի նոր ձևի արտահայտություն, աղոթքի հմայություն, արարման պահի խորհուրդ և հանդիսավորություն կա Ալիսիայի տողերում, անիմանալի մի ուժ... Այդքան ալկոծ մի ներշնչում, այդքան մտածում ու խռովք, այդքան հասունություն ու խորություն: Ալիսիա Կիրակոսյանի պոեզիան արտահայտում է ժամանակի գերզգայուն նյարդային բջիջի ամենանրբին շարժումն արձանագրող, վերացականության մոտեցող մտածողությունն ու ձևը: Ո՞ր ոլորտներից, ո՞ր մոլորակից հնչեց այս աղջկա ձայնը և մեզ հմայեց... Ազգի տառապանքը հնչեցնում է այնպիսի մի գործությամբ, որ ես զարմա-

նում ես՝ ինչպես է կարողացել հեռվից հեռու այս չորս տարիների մեր հուզումները, մեր հուսահատությունները, մեր բողոքը խտացնել սքանչելի քերթվածներում, որ պատիվ են բերում ամեն բանաստեղծի, ամեն հայրենասերի»:

Միլվա Կապուտիկյանը բանաստեղծուհու քերթվածներին անդրադարձել է 1976 և 1992 թվականներին:

Ալիսիա Կիրակոսյանի մասին հիացական խոսքեր են ասել Գևորգ Էմինը, Հովհաննես Շիրազը, Մարո Մարգարյանը, Սերո Խանգադյանը, Ռուբեն Մելիքը, Անդրանիկ Ծառուկյանը, Հակոբ Կարապենցը, Ջահրատը, Հրաչյա Հովհաննիսյանը: Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին 1984-ին գրում է. «Ձեր գործերը անդիմադրելի հմայք մը ունին, թե խորհուրդներու՝ միաժամանակ փիլիսոփայական խորութենեն, թե կանացի նրբագացութենեն, թե ներաշխարհեն՝ մանավանդ հղիություն և մայրություն ներաշխարհին խորիմաստ զննումեն: Հայերեն լեզուն շատ հարուստ է ածականներով՝ հրապուրիչ, դյութիչ և այլն: Բոլորը գումարեցեք ձեր ստեղծագործությունը որակելու համար»:

Ալիսիայի ստեղծագործությունը ջերմորեն են գնահատել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Ռուբեն Ջարյանը, Գևորգ Բրուտյանը, Սերգեյ Համբարձումյանը, Ռադիկ Մարտիրոսյանը, Գևորգ Բաղդասարյանը, բազում ուրիշ գրողներ, գրա-

կանազետներ, արվեստագետներ, մտավորականներ ու մշակութային գործիչներ:

Գրականության մեծ սիրահար ու գիտակ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն, 1985 թվականին գրում է. «Դուք որպես վավերական բանաստեղծուհի, ձեր գրչով և ազնիվ ներշնչումներով հայ և օտար ընթերցողներին հաղորդակից դարձրեցիք մեր նախնիներից ժառանգած մեր հոգևոր և ազգային հարստություններին և վսեմ ձգտումներին»:

Ալիսիա Կիրակոսյանի պոեզիան նաև բեմադրվել է համապատասխան երաժշտությամբ: 1969 և 1973-ին Բուենոս Այրեսում բեմադրվել է նրա «Պեղրո Ամորը», երաժշտությունը գրել է Ասթոր Փիացոլան:

Որպես հայրենասեր գրող Ալիսիան իսպաներեն է թարգմանել Բաֆֆու «Խենթը»: Երազում էր, գուցե և քայլեր է կատարել Գր.Նարեկացու «Մատեան ողբերգութեան» հանձարեղ քերթվածը իսպաներեն թարգմանելու:

Ի թիվս արտասահմանյան տարբեր երկրներում ստացած պատվոգրերի և մրցանակների՝ Ալիսիա Կիրակոսյանը հայրենիքում արժանացել է Խաչատուր Աբովյանի անվան մրցանակի, Մովսես Խորենացու մեդալի (2012), իսկ 2005-ին ՀՀ ԳԱԱ նրան շնորհել է ակադեմիայի պատվավոր դոկտորի կոչումը:

Ալիսիա Կիրակոսյանի բանաստեղծությունները հենց հեղինակի կատարմամբ վերածվել են ձայներիզների և տարածվել տարիների ընթացքում: Դրանցից մեկը հեղինակի հրաշալի կատարմամբ և կոմպոզիտոր Կոստանդին Պետրոսյանի երաժշտությամբ վերարտադրում է «Սիրո մեկ ու կես հազարամյակ» ժողովածուի քերթվածները:

# ԱՌԱՋԻՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Ալիսիա Կիրակոսյանի առաջին հայերեն ժողովածուն հրատարակվել է 1967-ին՝ Երևանում, միանգամից հոգեցունց անակնկալ պարզելով պոեզիայի սիրահարներին:

Գրքի երկրորդ բանաստեղծությունը ինքնակենսագրական բովանդակություն ունի, նրանում եղեռնի թեման արծարծվում էր բոլորովին նոր ձևերով, հոգեկան ուրույն մեկնությամբ.

*Ես ուզում եմ գտնել*

*Իմ մանկության դեմքը...*

*Գաղթողների խմբից հանել նրան*

*Ու նկարել այնպես, որ քաղաքում մի այլ*

*իմ պատճենը լինի (էջ 15):\**

Առաջին հայերեն ժողովածուն խորագրված էր «Արմատ և էություն», ավելի շատ նրանում, իհարկե, արմատից բխած էությունն էր: Ներքին մի մղումով բանաստեղծուհին

---

\* 2005-ին տպագրված Ա.Կիրակոսյանի «Ամբողջական երկերում» կան բնագրային փոփոխություններ, սակայն իմաստը նույնն է – Ա. Դ.:

ջանում է պատկերացնել իր կորցրած հայրենիքը, նրա կոթոնների քարե շքերթը, անցյալ դարերը, խաչքարերը, և թեպետ ինքը անձնական հուշեր չունի, չի եղել պապենական հողում, բայց արյան կանչով կարոտում է նրան: Ապրող, շեն հայրենիքի գաղափարը խաչաձևում է կորստի ցավի հետ, մոխի՛ր, մոխի՛ր, լռութ՛յո՛ւն. ահա այն, ինչ մնացել է հայրենիքի կորստի ցավից: Ինչպես Վահան Տերյանը իր հայրենիքի ապագան տեսնում է առասպելական փյունիկ թռչունի կերպարանքով՝ մոխիրներից վերակենդանացած, այնպես էլ Ալիսիա Կիրակոսյանը հայրենիքի վերածնունդը տեսնում է մի մենավոր աղոթքի, մի բողբոջի, մի լույսի կերպավորմամբ, որոնք մոխիրներից հետո բացեցին նոր արշավույս:

Վահան Տերյանը գրում է.

*Որպես Փյունիկ կրակից կելնես, կելնես նոր  
Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:<sup>1</sup>*

Ալիսիա Կիրակոսյանի և Վահան Տերյանի մոտ մոխրի, լույսի, հարություն առնելու, կյանքի վերադառնալու խորհրդանիշերը նույն համեմատական գուգորդման մեջ են: Ա. Կիրակոսյանը գրում է.

---

<sup>1</sup> Վ. Տերյան, Երկերի ժողովածու, Հ. 2, Երևան, 1961, էջ 72:

*Մոխիրներից հետո,  
Մոխիրներից հետո  
Մի մենավոր աղոթք,  
Մի բողբոջ կար,  
Մի լույս  
Ու նոր բացվող երկինք (էջ 27):*

Ալիսիա Կիրակոսյանը մտահոգ է մարդ անհատի կյանքում թողած հետքով, նա ուզում է անանձնական մի հրաշք թողնել ապագային, մարդկանց, որով կարդարացվեր իր երկրային գոյությունը, այնպիսի մի բան կատարել, որն իրեն անմահացներ, իհարկե իր սխրանքի ոլորտը պոեզիան է, որն այնքան հեռու է կյանքի պրոզայից.

*Օ՛, եթե կյանքում կարողանայի  
Կտակել ընտիր,  
Շատ ընտիր մի բան,  
Որն ուժ ունենար  
Ինձ անմահացնել,  
Բան, որ չի գտնվում  
Ոչ մի շուկայում,  
Բան, որ կարենար  
Ինձ արդարացնել... (էջ 50):*

Ընդհանրապես բանաստեղծուհին շատ է խորհում քնարերգության դերի մասին, փիլիսոփայական մտածումների մեջ նա բացատրում է՝ ի վերջո ո՞րն է պոեզիայի դերը մարդու իրական կյանքում. այս խոհերով նա Աստծու հետ կիսվում է նաև տարիներ անց գրված «Զրույցներ Աստծո հետ» պոեմում: Մարդը իր ողջ կյանքում որոնում է ճշմարտությունը, և այդ որոնումների ուղիներից մեկն էլ յիշման է, որը ստիպում է հաղորդակցվել միմյանց հետ, ականջալուր լինել իրար, խառնվում են պատմությունները, ժամանակները, ծնվում է կերպավորված բանաստեղծությունը.

*Եվ բեկանեյով*

*Պատմություններն ու ժամանակները,*

*Կերպարը ծնվեց (էջ 55):*

Մարդու և Աստծու փոխհարաբերությունները պատկերված է արդեն այս անդրանիկ ժողովածուում: Ինչպես ամեն բանական ու նրբազգաց մարդ, բանաստեղծուհին Աստծու գոյությունը շարունակ զգում է իր կողքին՝ ինքը, իր մենությունը և Աստված: Սա մի երրորդություն է՝ բանաստեղծուհու երրորդությունը, որը նույնպես դառնում է նրա քնարի հիմնական լարերից և հաճախ է հնչում տարբեր



տարիների քերթվածներում՝ պահպանելով նույն մեղեդայնությունը, ուժգնանալով կամ թուլանալով:

Հրաշքի նման է ժողովածուի «Էություն» բաժինը, որը ներկայացնում է Ալիսիա Կիրակոսյանի սիրերգությունը. սա մի նոր դյութիչ մեղեդի է հայ սիրային քնարերգության մեջ, որն այնքան հարուստ ավանդույթներ ու գանձեր ունի:

Մի թե քուչակյան սիրո հայրենների շարունակությունը չէ իմաստուն այն բանաձևումը, որ բանաստեղծուհին նվիրում է ամեն մի ճշմարիտ սիրահարի.

*Մերը գոյության հանճարն է միակ,*

*Միրո հակառակն*

*ամեննին էլ*

*Չսիրելը չէ,*

*մահն է պարզապես...*

*Միրահարները*

*Անմահությունն են վերանորոգում (էջ 62):*

Միայն այս նորօրյա և մշտահույզ գողտրիկ բանաստեղծությամբ Ալիսիա Կիրակոսյանն արդեն կարող է իրեն համարել առաջնակարգ բանաստեղծ:

Ու սկսվում է սիրո զգացման խորախորհուրդ աշխարհի նրբին ծալքերի թերթումը, կամաց-կամաց բացվում են

էջերը. որքան գեղեցիկ են դրանք, որքան վայելում են դրանք մարդուն՝ աստվածային այդ արարչագործությանը: Սերը շատ նուրբ և քնքուշ զգացմունք է. նրան ուղեկցում է լռությունը և խորհուրդը սրբազանության, սիրուց անդին ամայություն է: Սերը, ըստ քանաստեղծուհու, նույնիսկ հնարավոր չէ արտահայտել բառերով:

Հնուց անտի սերը համարվել է կյանքի շարժիչ ուժը: Այդ մասին իր բացառիկ ուշագրավ բացատրությունն ունի Գրիգոր Նարեկացին հայտնի «Երգ երգոցի» մեկնության առաջաբանում: Նա բացատրում է, թե ինչու Սողոմոն Իմաստունը կնոջ և տղամարդու սիրո և կապվածության այլաբանական պատկերով ներկայացրեց Աստծու և Եկեղեցու սերը միմյանց նկատմամբ, և արդյոք հարմար էր հոգևորը այդ աստիճան մարմնական պատկերներով ներկայացնելը: Գրիգոր Նարեկացին դրան տալիս է մարդկային կյանքի իմաստը խորհրդանշող մի ձևակերպում, որը սպառնիչ պատասխան է բոլոր նրանց համար, ովքեր շփոթվում ու զարմանում էին քրիստոնեական ասկետիզմ քարոզող սրբազան մատյանում «Երգ երգոցի» հանդես գալուց. «Արդ չիք յերկրի պատուականագոյն եւ առաւել, քան զսէր առն եւ կնոջ»<sup>2</sup>:

---

<sup>2</sup> Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 275:

Միջազգային բանասիրության մեջ նկատված է «Քրիստոնեական խորհրդապաշտության մեջ առկա է երոտիկ տարրը: Խորհրդապաշտների սիրելի գրքերից էր «Երգ երգոցը», որի մեկնությունը գրել են շատ խորհրդապաշտներ»<sup>3</sup>: Այս բնութագրականը զգալի է առանձին միջնադարյան խորհրդապաշտների գրական ժառանգությունն ուսումնասիրելիս:

Ըստ բանաստեղծուհու՝ սերը բացում է մարդու աչքերը, ուժեղացնում է կյանքի իմաստը ընկալելու հնարավորությունը, իմաստավորում է կյանքը, այն Աստծու անմահության տիրույթներում է: Միբուն ուղեկցում է սպասումը, որն իր դժվարագույն ծանրությամբ համեմատ է խոր ճիշի.

*Սպասումն իմ ճիշ է,*

*Առողջ*

*Ու խոր մի ճիշ...*

*Եվ այդ ճիշը գիտեմ,*

*Փերիների հյուսած*

*Միբոն պատմությունն է... (էջ 84):*

---

<sup>3</sup> В.Хвостов, Очерк истории этических учений, Москва, 1912, с. 73.

Սպասումը հզոր փորձություն է, նրան համեմատ է միայն մարդաշատ քաղաքը, որն իր լույսերը վառած սպասում է.

*Լույսերով առատ,  
Աչքերով առատ,  
Ձեռքերով առատ,  
Մի քաղաք եմ ես,  
Որ բերնեբերան  
Լեցուն է կյանքով  
Եվ ապրողների  
Համար բաց է միշտ:  
(Մեռնում են նրանք,  
Ովքեր գոյություն  
Չունենին երբեք (էջ 88):*

Մարդկային աչքը, հայացքը պոեզիայի հավերժական թեմաներից են. մի թե կարող է լինել սեր առանց հայացքի, մի թե հայացքը սիրո անխարդախ թարգմանը չէ, ամենապերճախոսը, գուցե ամենաանթերին, աստվածային է սիրո հայացքը.

*Աստված,*

*Որ կյանքում հայացք ստեղծեց (էջ 91):*

Ուրեմն, սերը բաղկացած է բառից, սպասումից, հայացքից աչքերի, և այդ հայացքը ուղեկցում է սիրող էակին ամենուր, նա վերածվում է աստվածային հավերժության.

*Քո աչքերի հետ*

*Ես հավերժաբար*

*գրույց եմ արել,*

*Սակայն եղել եմ*

*Ուրիշ մաշկի մեջ,*

*Ուրիշ երկրի մեջ,*

*Ուրիշ մի վայրում...*

*Բայց իմ գրույցը քեզ հետ է եղել,*

*Քո աչքերի հետ:*

*Դու նա ես, որ իր բացակայությամբ*

*Դատարկ է թողնում իմ էությունը (էջ 92):*

Սիրո բացակայությունը էության համար սարսափելի վտանգ է, այն կարող է դատարկվել և գուցե այլևս չլցվի:

Իմպրեսիոնիստական ազդեցություն են թողնում ընթերցողի վրա Ալիսիա Կիրակոսյանի սիրերգերը: Կեսգիշերային ավազի վրա թողած սիրելի անունը երևում է արշա-

լույսի առաջին ցողերի մեջ, իսկ սիրո խոսքը պարուրված է սիրող էակի ձայնի մշուշով:

Լռությունը, ցավը նույնպես սիրո երանգապանակի գույներն են, նրա լսելի և ենթադրելի, բայց չլսված ձայները: Որքան մեծ դեր ունի լռությունը.

*Այս լռությունը շատ է կարևոր,  
Քանզի լռությունն  
ավելի լավ է  
լսելի լինում:*

Սիրո զգացման մեջ այնքան անմեկնելի իրողություններ կան, և սերը երբեմն փոփոխական է, ինչպես բնությունը: Սերը բանաստեղծուհու կարծիքով նաև մեծագույն ցավ է, դառը, հոշոտող աստվածային մի ցավ, երագողների համաճարակ է: Այդ ցավը ուժգնանում է սիրո բովանդակության ջերմությունը գիտակցելիս կամ այն կորցնելու փաստը ընկալելիս, և ուժեղ են նրանք, ովքեր չեն լալիս, աչքերն իրենց շրջում են դեպի ներս և արժանապատիվ հեռանում:

Սիրահարների հեռանալը, մոռանալը, բաժանվելը ողբերգական է ընկալվում թե հայ, թե համաշխարհային քնարերգության մեջ, ինչպես նաև բանահյուսության մեջ բազում ձևերով արտացոլված է այս երևույթի հոգեկան բովանդակու-

թյունը: Հայկական ժողովրդական ասացվածքն ասում է. «Աչքից հեռու, սրտից հեռու», իսկ Կոմիտասի գրառած և մշակած սիրո մի չքնաղ խաղիկում սիրոդ էակը խնդրում է իր սիրելիին չհեռանալ իրենից, բայց եթե ճակատագրորեն որոշված է, և նա պիտի հեռանա, ապա թող տարածությամբ իրենից հեռու գտնվելով անգամ գոնե չմոռանա, և ինքը կապրի այդ չմոռացված լինելու գիտակցման ջերմությամբ.

*Չինար ես, կեռանա՛լ մի,  
Մեր դրոնեն հեռանա՛լ մի,  
Յա՛ր, քո Աստված կը սիրես,  
Հեռու ես, մոռանա՛լ մի։<sup>4</sup>*

Ալիսիա Կիրակոսյանն էլ անդրադարձ ունի հեռացման, բացակա լինելու իրողություններին, որոնք այլ լուծում են ստանում, երբ բացակայությունը շատ է երկարել, գուցե սպանել է սերը, որի վերադարձն այլևս հնարավոր չէ, որովհետև այն ձևափոխվել է արդեն մի վերացարկման, թանկ, բայց արդեն ոչ առարկայական.

*Ինձնից այնքան ես բացակա եղել,*

---

<sup>4</sup> Կոմիտաս և Մ.Աբեղյան, Հազար ու մի խաղ, Ժողովրդական երգարան, Երևան, 1969, էջ 12-13:

*Որ ներիր, արդեն պետք չէ*

*քո սերը...*

*Ու ես քեզ այնքան, այնքան եմ հիշել,*

*Որ մոռացել եմ*

*ներկայությունդ...*

Բանաստեղծուհու սիրո մեղեդիները իրենց նոր հնչե-  
րանգներն են ստանում հետագա տարիների քերթվածնե-  
րում:



## Ն Ա Մ Ա Կ Ա Ռ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Ալիսիա Կիրակոսյանի երկրորդ ժողովածուն լույս տեսավ 1979-ին, վերստին Երևանում և նորից Վահագն Դավթյանի թարգմանությամբ: Այս ժողովածուն բերում էր երկու բոլորովին նոր գյուտեր, առաջինը «Նամակ առա Հայաստան» բանաստեղծությունն էր՝ գրված ասես ամեն մի հայրենակարոտ սփյուռքահայի սրտից, և երկրորդը՝ մայրության թեման՝ այնքան անսպասելի իր գաղտնարանների փիլիսոփայական մեկնությամբ:

«Հայաստան» բանաստեղծությունը ևս այդ ժողովածուից է և նվիրված է անվանի սայաթնովագետ, հնագետ, Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մորուս Հասրաթյանին, որին այցելել էր բանաստեղծուհին, և որի կախարդական խոսքը հմայել էր նրան: Բանաստեղծուհին սկսում է ճանաչել իր պապերի հայրենիքը, հաղորդակցվել նրա ներկային, իմանում է արդեն նրա դարավոր երթի պատմությունը, և, ճանաչելով հինավուրց այդ երկիրն ու նրա մարդկանց, ճանաչում է ինքն իրեն.

*Ճանաչեցի ես քեզ:*

*Եվ դու ճանաչեցիր դրոշմն այն հետքերի,*

*Որ ինքդ էիր դարեր թողել վրաս:  
Ճանաչեցի ես քեզ, իմ Հայաստան,  
Եվ քեզ ճանաչելով,  
Ես ինձ ճանաչեցի... (Էջ 22):*

Նա այլևս իրեն համարում է Հայաստանի մի մասնիկը՝ նրան հմընթաց քայլելու ներքին որոշմամբ:

«Նամակ առ Հայաստան» բանաստեղծությունը առանձնանում է Ալիսիա Կիրակոսյանի քնարերգության մեջ, այն շատ է տարողունակ և փաստորեն իր մեջ պարունակում է հետագա հայրենասիրական քնարի բոլոր էլման կետերը: Բանաստեղծուհին ներքին մի վերածնունդ է ապրում պապենական հողում, նա իրեն ամուր է զգում այդ հողի վրա, նա սիրում է այդ հողը, սիրում է այդ երկիրն իր դժվար անցյալով:

*Գիտե՛ս,  
Իմ ու քո միասնությունը  
Վաղնջական է:  
Ես կամ առաջին քո հուշերի մեջ (Էջ 27):*

Ընդհանրապես կա սրբազան մի հասկացություն՝ հայրենիք, հայրենիքը և՛ վերացական է, և՛ անշուշտ կոնկրետ ու

դրվագային, հատված առ հատված, առարկայական. այն մայր հողն է, պապենական արյունը, լեռները, սովորույթները, երաժշտությունը, փառքերը, բանաստեղծները և այլն: Այդ ամենի մեջ է հայրենիքը, Հայաստանը որպես հայրենի խորհրդանիշ ունի նաև Արարատը՝ աստվածաշնչային այդ լեռը.

*Եվ ամպերի տակ տեսա բաբախը*

*Արարատ լեռան,*

*Արարատ լեռը՝*

*Սհեղ մի պայթյուն,*

*Որ ինձ հրկիզեց*

*Առանց լավայի... (էջ 28):*

Հայաստանը սփյուռքահայ մարդու առաջ կանգնում է իր անցյալով ու ներկայով և այնժամ հայրենիքը սիրող մարդունն են դառնում և՛ հայրենի փառքերը, և՛ կսկիծները, և՛ նրա հարատևման համոզումն ունենալու բերկրանքը.

*Հիմա ես ու նա՝*

*Միասնություն ենք*

*Եվ ամբողջությամբ մեր ճշմարտության*

*Եվ եթերային մեր երազներով,*

*Անցյալի դեմքով տանջահար ու հեզ  
Եվ ճերմակ ու ջերմ օրորոցներով...  
Մենք պահանջ չունենք խոսքի ու բառի  
Ձի հոգիները լռության մեջ են  
միանում իրար (էջ 9):*

Բանաստեղծուհին այլևս իրեն տերն է զգում իր հայրենիքի հինգ հազար տարվա պատմության և շատ է զարմանում այն հարցից, թե արդյոք Հայաստանն իրեն դուր է եկել: Այդ մարդկանց ինքը կարող է պատասխանել, որ ինքը Հայաստանը զգում է իր մաշկով, կարոտում է նրա բույրերին, զգում է նրան իր արմատներով.

*Ես չգնացի նրան տեսնելու և հավանելու,  
Գնացի այնտեղ նորից ծնվելու  
Եվ որոնելու լույսն իմ նախնական  
Եվ սկսելու իմ գրո դարից:  
Դու, որ ինձ գիտես  
Եվ հասկանում ես իմ ճիշդ անգամ,  
Գիտե՞ս, թե որքան դժվարանում եմ  
Քո մասին խոսել  
Աշխարհիկ լեզվով,  
Մեր հանդիպումը*

*Ամենավերին երկինքներում է,  
Որտեղ խոսում են,  
Մակայն չեն զգում բայերի կարիք (էջ 30):*

Բանաստեղծը օրհնում է իր հայրենիքին և այդ օրհնությունը համարում է ինքնաքաջալերում. հայրենի հողը, նրա դրոշմը դառնում են բանաստեղծուհու սրբությունները:

«Նամակ առ Հայաստան» ժողովածուն լի է իմաստասիրական խոհերով՝ մարդու ոգու, հավերժության, գոյի առեղծվածների վերաբերյալ: Օրերից մի օր, ոչ ոք չգիտի, մարդը կթողնի մարմնի պատյանը, և այդ կարճատև պահին կհավերժանա մահվան խորհուրդը.

*Կտրվի չափը  
Անսահմանության ու անմահության (էջ 51):*

Մարդկային կյանքի խնդիրները նա հանձնում է բանաստեղծությանը, այդ առեղծվածի առեղծվածն է սերը:

Սերը բանաստեղծուհու համար անձկությունների հուռույթ է և Աստված, այն երակների հորդացող արյան բերկրանքն է, ուժերի ուժը: Մակայն որտե՞ղ է այդ ամենը. ինքը երագում է նրան, բայց նա չի գալիս վերջ տալու իր սպասումներին:

Մերը ինքնահաստատման միջոց է, եթե մարդ սիրում է, ուրեմն նա կա, գոյություն ունի: Մերը հնարավորություն է տալիս մարմնով պատած հոգուն խոսել աստվածների լեզվով:

Միջնադարի հայ նշանավոր բանաստեղծ Կոստանդին Երզնկացին, որը հայ սիրերգության հիմնադիրն է ճանաչված, իր սիրո տաղերից մեկում հայտարարում է, թե ինքը սիրո զգացումը չունեցող մարդուն կոչում է անբան անասուն.

*Ով չունի սիրելի սիրով հետ քեզ վառ,  
Դու անբան և անասուն զնա կոչես...<sup>1</sup>*

Միրելու ունակությունը մարդու կարևորագույն առաքիլություններից է. նշանավոր ֆրանսիացի գրող Ալբեր Կամյուն իր պատմվածքներից մեկում ասել է, թե սիրված չլինելը ձախորդություն է, իսկ չսիրելը՝ դժբախտություն:

«Նամակ առ Հայաստան» ժողովածուն ավարտվում է «Մայրություն» հատվածով, որի մեջ առաջին անգամ հայ պոեզիայում պատկերված են մոր խոհերը կապված դեռ չծնված զավակի հետ, որոնք ցնցող են իրենց աստվածային

---

<sup>1</sup> Կոստանդին Երզնկացի, Լոյսն առաւօտուն, Երևան, 1981, էջ 154:

խորհմաստությամբ, մայրանալու, հավերժանալու երևույթը պատկերելու նորահայտությամբ:

Մայրությունը սրբազան երևույթ է, մայրն է ապահովում մարդկության սերնդափոխումը, մարդկության հարատևումը, մայրը կենաց ծառի հիմնամաս է, իսկ կենաց ծառը վաղնջական ժամանակներից անտի սրբացված է՝ թե հեթանոսական ժամանակներում, թե քրիստոնեության օրերին, և այդ սրբազան ընկալումը շարունակվում է մեր օրերում:

Մեր գրականության մեջ մոր կերպարն առաջին անգամ մարմնավորել է Գրիգոր Նարեկացին իր «Օննոյան» տաղում: Այդ տաղը հիացումն է այն մոր նկատմամբ, որն աշխարհին պետք է պարզներ Աստծու որդուն՝ Փրկչին, և այդ մայրը անթերի է իր կանացի նրբագեղության մեջ:

Ավետիք Իսահակյանը իր գլուխգործոցում «Աբու-Լալա Մահարի» պոեմում, արտահայտելով իր ծայրահեղ հիասթափությունը մարդկային հասարակությունից, մերժելով բոլորին և ամեն ինչ, վերապահում է միայն մի սրբություն՝ մորը:

Մոր թեմային Իսահակյանը ձոնել է ուրիշ շատ գործեր, որոնց մի մասը վերցրել է հայ ժողովրդական բանահյուսությունից: Այդ գործերում Իսահակյանը բացահայտում է մոր անձնուրաց նվիրումը դեպի իր զավակը, որին նա կարող է ինքնակամ տալ մարդու համար ամենաթանկը՝ կյանքը:

Մայրը ներում է անգամ մայրասպան որդուն, նրա սիրտը միշտ հեծեծում է որդու մի փոքր ցավի համար անգամ: Մայրը իր մահվանից հետո էլ կարծես մտածում է իր զավակի մասին, մոր համար փաստորեն կյանքի հիմքը իր զավակն է: Մայրական թեմայով հրաշալի բանաստեղծություններ ունեն Եղիշե Չարենցը, Հովհաննես Շիրազը, Պարույր Սևակը, շատ-շատերը: Սակայն Ալիսիա Կիրակոսյանի պոեզիայում մայրությունը դիտարկվում է նոր հորիզոններից, բացվում են մոր հարուստ ներաշխարհի անտեսանելի խորքերը, և այդ բացողը հենց մայրացող բանաստեղծն է, որի զգացումներն արտահայտում են աշխարհի բոլոր մայրերի նրբին ապրումները:

Չավակի սպասումն իր մեջ միստիկական խորհուրդ ունի, դեռ չծնված, բայց մոր ներսում արարվող էակը դառնում է մոր համար ամենաթանկը, որին դեռ չտեսած սիրում է, որին նա զգում է ու սպասում: Չծնված զավակը և նրան սպասող մայրը փոխադարձաբար լրացնում են իրար.

*Այն գոյությունն էս,  
Որ գիշերներինս անքնության մեջ  
Ավետել է ինձ,  
Այն ձայն էս,  
Որ իմ ուղեղի միջից*



*Իր անձկությամբ է անվերջ մորմոքել:*

*Մարդիկ կարծում են,*

*Թե ես եմ, որ քեզ ծնունդ եմ տալիս,*

*Չգիտեն սակայն,*

*Որ մենք երկուսս էլ արարում ենք լուռ՝*

*Ես՝ զավակ,*

*Դու՝ մայր...*

*Դու այն հրաշքն ես,*

*Որ այս աշխարհում արարում է մայր (էջ 166):*

Բանաստեղծուհին իր սրբազան զգացմունքը՝ կապված ծնվելիք զավակի հետ, համեմատում է աղոթքի հետ: Աղոթքը առկա է դեռ հեթանոսական ժամանակներից: Աղոթքը լայնորեն սփռված է Աստվածաշնչի Հին կտակարանում, իսկ Ավետարանում կոնկրետացվում է աղոթքի նշանակությունը, նպատակը, կիրառական արժեքը, նրա նկատմամբ ներկայացված աստվածային պատվիրանը. «Եվ երբ աղոթես, չլինես կեղծավորի նման, որոնք սիրում են ժողովարաններում և հրապարակների անկյուններում աղոթքի կանգնել, որպեսզի մարդկանց երևան. ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը: Այլ դու երբ աղոթես, մտի՛ր քո սենյակը, փակի՛ր քո դռները և ծածուկ աղոթի՛ր քո

Հորը, և քո Հայրը, որ տեսնում է ծածկապես, կհատուցի քեզ հայտնապես»<sup>2</sup>:

Բանաստեղծուհին իր ապագա զավակին երգում է ներքին երջանկության հրճվանքից արբեցած, ծնվում են սուրբ արցունքները.

*Եվ դրա համար*

*Ես երգում եմ քեզ այն սուրբ արցունքով,*

*Որով լացել են*

*Առաջին աղոթք հնարողները (էջ 166):*

Դեռ չծնված երեխայի լեզուն բանաստեղծուհուն թվում է մի օրենսգիրք, որը դեռ անհայտ է մորը: Նա աշխատում է փնտրել այնպիսի աղոթքի բառեր, որոնք միայն իրենը լինեն և մաշված չլինեն ու սիրո, հույսի ճանապարհներով, որոնք ամենամաքուրն են աշխարհում, սպասման տվայտանքները նրան հանգեցնում են միայն լուսավոր հույսին:

Մարդը տիեզերքի մի մասնիկն է, և այդ մասնիկը արարում է մայրը, փաստորեն մայրը արարիչն է հենց փոքր տիեզերքի՝ նրա բանական հյուլեի: Մայրը՝ նոր տիեզերքի արարիչը, նաև գիտե, որ իր զավակը կյանքի բերկրանքը

---

<sup>2</sup> Մատթեոս, Զ-5-6:

վայելելուց բացի, ծնունդից սկսած պետք է կրի նաև կյանքի դժվարությունների խաչը.

*Ոչ ոք չի կարող*

*Փախչել իր խաչից (էջ 171):*

*...Լինելով նաև մասնիկն անհունի,*

*Պիտի վշտերի ընդերքը փորես (էջ 172):*

Մայրը և զավակը միասնական են, մի մարմին են մինչև երեխայի ծնունդը, սակայն այդ միասնությունը, արյան կանչը նրանց շարունակում է պահել ընդհանուր ներդաշնակության մեջ: Մինչ ծնվելը երեխայի նկատմամբ ծնվում է մի անսահման սեր, սպասման սեր.

*Մինչ աճում ես դու,*

*Ինձ սերն է խեղդում,*

*Սերս,*

*Որ իր լուռ անշարժության մեջ*

*Սպասում էր քեզ (էջ 173):*

Զավակը մոր արարիչն է, մոր ամենամեծ երազանքը, ամենաթանկ հիացումը, մայրական փառասիրության գագաթնակետը.

*Դու պիտի դառնաս  
Անհասանելի իմ երազանքի  
Մեծ արարիչը...  
Այն գինին,*

*Որով*

*Իմ բջիջները պիտի հագենան (էջ 174):*

Չճնված զավակի և մոր միջև սկսվում է մի զրույց, որի ընթացքում մոր շուրթերից արտաբերվում է «զավակս» բառը: Բանաստեղծուհին ուզում է պարզել, թե արդյոք զավակը մի օր իր ամբողջության մեջ ամփոփելու է «մայր» բառի տարածությունը.

*Կարևորն այսօր*

*Քեզ հետ խոսելն է,*

*Կարևորն այսօր*

*Մեր հոգիների զրույցն է հիմա (էջ 176):*

Զավակն առաջին հերթին լույս աշխարհում էլ մորն է հանդիպում, և մինչև այդ հանդիպումը մայրը գիտե, որ զավակին սպասում են կյանքի նույն բարդությունները, որն զգում և հաղթահարում է ամեն մի եկող սերունդ: Նրա կարծիքով երեխայի առաջին բառը՝ մայրը, ասում է ամեն ինչ,

մայրը երեխայի տիեզերքն է, մայրը երեխայի պահապան հրեշտակն է, մայրը երեխայի Աստվածն է:

Բանաստեղծուհին մոր և զավակի ներքին զրույցի ընթացքում վերստին փիլիսոփայում է.

*Մրափիր հանգիստ մինչև այն օրը,*

*Երբ կհասկանաս,*

*Որ կյանքը,*

*Կյանքը*

*Հոգնություն է մեծ (էջ 177-178):*

Մոր համար ամենաերջանիկ պահը իր զավակի ծնվելու երանավետ ընդունումն է, և բանաստեղծուհին այդ էլ հանձնել է բանաստեղծության տարեգրքին: Մայրը զավակի առաջին ճիշի հետ միասին ունենում է երանության գլխապտույտ: Մայրը վերածնվում է ամեն մի զավակի ծնունդի հետ, այդ անօգնական էակի առաջ նա իրեն զգում է և՛ պահապանի, և՛ ենթակայի դերում, և՛ տիրոջ, և՛ ծառայի, այն ամեն մոր կյանքի նոր սկիզբն է.

*Լաց եղար ճիշով,*

*Որ ես հալվեցի,*

*Ես փռշիացա*

*Ճամաճուռ դեմքիդ քնքշանքների մեջ:*

*Չկարողացա*

*Արմատից պոկել քո ցավը անգետ:*

*Չկարողացա*

*Քո ճիչը շնչել.*

*Միայն նայեցի և ճանաչեցի*

*Իմ նոր սկիզբը (էջ 182):*

Մայրը, եթե սիրում է իր զավակին մինչև ծնվելը, նրան պաշտում է լույս աշխարհ գալուց հետո, և այդ պաշտամունքը այնքան մոգական ու խորհրդապաշտական է, որ բառերն անգամ անգոր են արտահայտել՝ լռությունը դառնում է ամենախոսունը:

Մայրության թեման բանաստեղծուհին նորովի է արձարձում «Խորան» ժողովածուի մեջ:

## Խ Ո Ր Ա Ն

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի «Ծիսական բառարանում» «Խորան» հոդվածն ունի հետևյալ բովանդակային մասը. «Խորանը բեմի հետևի մասն է, որը կամարով վրայից փակված վրանաձև տեղ է կազմում, խորանը պար-

փակված է չորս սյուներով, որոնք չորս ավետարանիչների անվանն են նվիրված: Խորանը, ինչպես ասացինք, ոչ ամբողջ, այլ կես վրանի պես է ներկայանում, առջևից բոլորովին բաց լինելով, վերին կողմից քառորդ գունդի նման կամարով փակված, շուրջանակի կիսաբոլոր, որի մեջտեղը կանգնած է սեղանը և նրա հետևում բարձրանում է խաչկալը, իսկ սեղանի ու խաչկալների հետևից ազատ անցք կա, որտեղից կատարվում են վերաբերումն ու խնկարկությունները և սեղանի սպասավորումը: Կողմնակի պատերի վրա բացված են խորհրդանոցի խաչերը, աջ կողմինը հասկացված են պատարագի, նվերների և ս. Հաղորդության, իսկ ձախակողմյանը՝ մյուռոնի և այլ սրբությունների պահպանությունը: Խորանի միջից մեկական դուռ է բացվում դեպի երկու կողմերի ավանդատները, որը շարունակ բեմի առջևից չերթնեկելու համար մեծապես հեշտացնում է սեղանի սպասավորությունն ու լուսարարի աշխատանքը»<sup>1</sup>: Սա խորանի ծիսական մեկնությունն է:

Ըստ բանաստեղծուհու՝ խորանը պաշտամունքային մի վայր է, որի առաջ ասված ամեն մի խոսք նախ անկեղծ է, երկրորդ՝ այն խոստովանանք է, որն ուղղվում է Բարձրյալին: Խորանը յուրօրինակ մի մենատուն է դառնում Ալիսիա

---

<sup>1</sup> Մաղաքիա արք. Օրմանյան, Ծիսական բառարան, Երևան, 1992, էջ 88:

Կիրակոսյանի համար, մի խոստովանատեղի, ուր նա ուզում է ասել ամեն ինչ, այն, ինչը հուզում է, տազնապ պատճառում մարդ էակին, այն, ինչը թանկ է, այն, ինչը ըղձանքների աշխարհում է, այն, ինչը հավերժին է միտում:

«Խորան» ժողովածուն տրոհված է հետևյալ բաժինների մեջ՝ «Խորան I, «Մայրության», «Խորան I, «Սիրոյ», «Խորան I, «Բացակայության», «Խորան II, «Զրույցի», «Խորան II, «Զգացմունքների», «Խորան III, «Մարգարեության», «Խորան III, «Արվեստի», «Խորան III, «Հիշատակի», «Խորան IV, «Արմատի», «Խորան IV, «Խորանից դուրս»:

Ալիսիա Կիրակոսյանի հայերեն լեզվով գրված «Խորան» ժողովածուն լույս է տեսել Լոս Անջելեսում՝ 1989-ին: Այն կազմված է ճաշակով, նրանում ի մի են բերված քանաստեղծուհու անցած գրական ուղին՝ կենսագրական մանրամասներով, ստեղծագործական հաղթափուլերով: Ժողովածուն նկարագարդել են նշանավոր նկարիչներ, այդ թվում՝ ի թիվս նշանավորների կան նշանավորագույն Պաբլո Պիկասո և Գառզու, որոնք վրձնել են հատուկ Ալիսիա Կիրակոսյանի քանաստեղծությունների համար:

Բանաստեղծուհին իր նոր ժողովածուն կոչել է «Խորան»՝ մեծ խորհուրդ դնելով այդ խորագրի մեջ: Ժողովածուն սկսվում է քանաստեղծուհու նախաբանով, որը յուրօրի-



նակ ինքնավերլուծական է, ինքնամտորում, միաժամանակ խոսք և խոստովանություն առ ազգիս Հայոց: Բանաստեղծուհին գիտակցում է, որ հայ ժողովուրդն ունի իր Բանաստեղծության կարիքը և դրա համար նրան է դիմում առանց միջնորդի, այսինքն՝ թարգմանչի, ինչպես ինքն է խոստովանում. «Այսօր հայերեն գրելը միջոց մըն է ինձի համար աշխատանքս հաշտեցնելու կյանքիս հետ, էությունս հաշտացնելու արմատներուս հետ»: Խորանը հնարավորություն է ընձեռում նրան դիմել առ Աստված, կիսել նրա հետ խոհերը, մտածունները՝ մահկանացու մարդու կյանքից չվիատված, ոգեղեն երազանքներ ունեցող, մայրական ջերմ զգացմունքներ փայփայող, իրեն ծնած ժողովրդի ճակատագրով մտատանջվող ու ապրող:

Մայրության թեման դարձել է «Խորան» ժողովածուի հիմնական մոտիվներից մեկը: Բանաստեղծուհին իր գավակի մեջ տեսնում է իր իսկ շարունակությունը, որը, սակայն, ավելի է, քան իր եսը, որի համար նա պատրաստ է անհնարինը դարձնել հնարավոր: Հարատևելու գաղտնիքը Բանաստեղծուհին գտնում է երկու եղանակով՝ գավակի կյանքը և իր քերթվածների գոյությունը լինելու են նրա կյանքի շարունակությունը.

*...Ու զգացի, որ այն օրը,*

*Երբ մարմինս անհետանա  
Հոգնած իմ կյանքի բեռից,  
Ես շարունակեմ պիտի  
Մեջդ ապրել,  
Ինչպես ապրում եմ  
Քերթվածներիս հոսանքում:*

Մայրության հետ մեկտեղ բանաստեղծուհու ներաշխարհը ներկայացվում է սիրո իր ողջ բովանդակությամբ: Սիրո հինավուրց հեքիաթը նա յուրովի հյուսել է տարբեր ժողովածուներում՝ թախծոտ ու տառապալի, բոցակեզ ու պայծառ էջերում: Այնքան ջերմ ու վարակիչ զգացմունքներ են դրանք, որ կարծես ընթերցողի մեջ վերարթնացնում են կամ զուգորդում ամեն մի եսի սեփական սիրո աշխարհի նրբին գաղտնարանները և ձայնակցում են ու ձայնակցում, խնկարկում են՝ բերելով հոգեկան տագնապների քաղցր հանգստացում, դառնում են յուրովի բալասան, մեծ ապրումները ճիշտ գնահատելու չափանիշ:

*Առանց քեզ  
Միայն սպասումն եմ  
Հավատքի ճամփին,  
Չավարտված մի ալիք եմ*

*Կանգնած բախումի կեսին,  
Մի թռիչք անկապ,  
Մի կոթող տիրության:*

Ալիսիա Կիրակոսյանի քերթվածներում կա սիրո փիլիսոփայությունը, այն խորին ծալքերում պարփակում է այդ զգացման լայն հորիզոնները, որոնք թերևս հասու են ոչ բոլորին: Բանաստեղծուհին զարմանալիորեն այն ընդգրկում է ամբողջովին: Նա սիրո գուշակ է, ոչ ամենակարող դիցուհի, այլ միայն լայն ընդգրկման տեր իրական մի կին.

*Բայց ափսոս,  
Ափսոս, որ կյանքս սահեցավ  
լիաձեռն,  
Որ քմծիծաղը ճակատագրի  
Նոր ակոսների  
Բացումն է կատարում  
Հոգու վերքերում  
Ու արձանագրում է  
Նրանց մեջ  
Մի դառն հիշատակ,  
Մի անհատակ ցավ,  
Որոնք ծերանում են անվերջ,*

*Սակայն չեն կարող մահանալ:*

«Խորանի» «Զգացմունքներ» բաժնում բանաստեղծուհուն հաջողվել է մարմնավորված ներկայացնել մարդկային անհուսությունը: Ժողովածուի այս հատվածում առավել զգացվում է միջնադարյան մեծ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու շունչը, նրա ներշնչմամբ նա դիտում է կյանքը, որը շատ է անկատար, դիտում է անցյալը, որն ունի շատ խոցող էջեր, սակայն լրիվ չի հուսահատվում և ապավինում է լույսի հուսադրող ավիին, մնում է անհամբեր երազող.

*Ու մնում եմ այսպես*

*Մի աշխարհաչափ սպասման*

*Անհամբեր երազող:*

Կյանքում կա չարը, կա նախանձը, որոնք մարդու հոգեկանը քարուքանդ են անում. կան ագռավներ, որոնք ոչ թե մեռած մարմին են ուտում, այլ ուտում են մարդկային հոգիները.

*Եվ ինչ անենք,*

*Որ չարն ու նախանձը*

*Մեր հանգիստն են քանդել:*

*Ինչ անենք,  
Որ ազնավները բզբտիչ  
Մեր հոգին են կերել:*

Իր ուժերի ներածին չափով բանաստեղծուհին աշխատում է քննել մարդու և աստվածայինի փոխկապակցությունը, ուզում է կռահել կյանքի կառույցից այն կողմ եղածը և ուզում է յուրովի մարգարեանալ:

«Խորան» ժողովածուն աղերսվում է ոչ միայն Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկին, այլ ինչպես զգացվում է, բանաստեղծուհին ուրիշ քրիստոնյա ժողովուրդների գրողների նման առնչվում է Աստվածաշնչի Հին ու Նոր կտակարաններին, մարդկության հնագույն մտածողության արմատներին, որի կարևոր արտահայտություններից է Սողոմոն Իմաստունին վերագրվող «Ժողովողը»: Այսպիսով «Ժողովողը», Գրիգոր Նարեկացին մտնում են բանաստեղծուհու աշխարհը, և նրանց դիտակետից նայելով՝ քնարերգուն գնահատում է կյանքը, մարդկանց վարքագիծը, քննում դժբախտ լինելու իրական պատճառները, քրիստոնեական մարդասիրության ոգով սահմանում երջանիկների առավելությունները: Բերված համեմատություններում երևում է անբախտների և երանելիների հակոսոնյա տարբերությունը: Անբախտ են նրանք, ովքեր ատում են, ովքեր եսասեր են,

ովքեր նախանձում են, ովքեր ծախու են, ովքեր ստրկացնում են, ովքեր անարդար են, ովքեր խոշտանգում են, ովքեր դավաճանում են, մինչդեռ երանելիները նրանք են, ովքեր գթասիրտ են, անկեղծ, աղոթում են և սնում հոգին, արդար են, չեն քծնում, չեն նախանձում, հավատարիմ են և ի վերջո.

*Երանելի են նրանք,  
Ովքեր սիրում են,  
Քանզի  
Պիտի ճանաչեն  
Կյանքի ուժն իսկական,  
Երանելի են,  
Երանելի են նրանք:*

«Խորան» ժողովածուի մեջ հայրենասիրական մոտիվով քերթվածները փնջված են «Արմատի և բողոքի» խորագրի ներքո: Այստեղ հայրենի մասունքներն են և ներկա իրականությունը: Փառաբանվում են ազգային սրբությունները՝ հայոց հավատի տուն Էջմիածինը, հայ գրերի հանճարեղ արարիչ Մեսրոպ Մաշտոցը: Նա հիշում է իր ժողովրդի մշտամոռմոք ցավը՝ 1915 թվականի ազգակործան եղեռնը: Բանաստեղծուհին մի լուսեղեն աղոթք է հղում Աստծուն, կամենում է հին վիշտը փարատել նորովի, սպասվելիքի

արդարությամբ և երագում է իր ժողովրդի համար  
խաղաղությունը տեսնել որպես Երգ երգոց.

*...Եվ այդ վշտից  
ծնվեն արևներ,  
Եվ արևներն այդ  
ժամը լուսավորեն,  
Երբ արդարությունը  
Աստծո հետ ձեռք-ձեռքի  
ծունկի գան  
Քո առաջ,  
Եվ խաղաղությունը դառնա  
Երգ երգոց:*

Բանաստեղծուհին լայնախոհ է, նա բոլորովին լավկան  
չէ, սթափ գիտակցում է, որ պատմական ճակատագրով է  
կերտվել հայի դեմքը, նրա հոգու արտացոլքը՝ աչքերը, որոնք  
ինչքան էլ ժպտում են, բայց նրանց ժպիտի մեջ հարություն  
են առնում հին մահերը: Նա ձգտում է Աստծուն մասնակից  
դարձնել հայի դատին, որովհետև այդ դատը նաև Աստծուն է  
պատկանում, ճիշտ այնպես.

*Ինչպես պատկանում է  
Վիշտը տիեզերքի:*

Բանաստեղծուհին իր մեջ ամբարել է սեփական ժողովրդի արդար ցասման պահերը, դրանցից մեկն է Վանա հերոսամարտը իր դյուցազուններով՝ Անդրանիկ, Դրո, Խեչո, Վարդան, Համազասպ: Նա համոզված է, որ այդ հերոսամարտի ժամանակ ցուցաբերած միասնության դասերը երբեք չեն մոռացվի:

«Խորան» ժողովածուն մի կենդանի ապացույց է այսօրվա հայ ժողովրդի քաղաքական և իրական կյանքի: Մեր ազգի համար կիզակետային դարձած դարաբաղյան շարժումը բանաստեղծական լիցքավորմամբ երևում է այդ ժողովածուի մեջ: Ալիսիա Կիրակոսյանը համոզված է, թե իր ժողովրդի ազատության ճիչը լսվելու է աշխարհում, որովհետև մարդը կոչված է ազատ ապրելու, ուրեմն՝ ազատ ապրելու է կոչված նաև հայր:

Բանաստեղծուհին իր քնարական խոհերում անդրադառնում է նաև 1988թ. դեկտեմբերի 7-ի չարաղետ երկրաշարժին: Կյանքի դաժանության համալսարաններում քանիցս կրթված, աքսոր, գաղթ, բռնաբարություն, ջարդ, գերություն տեսնելուց հետո, հիմա էլ երկրաշա՞րժ: Նա վրդովված է Ամենակարողի անկարողությունից, ինչ-որ չափով սփոփված համայն աշխարհի գթասրտությունից և գոտեպնդվում է ապրելու այն ջերմ սիրուց, որ գուշակում է



լինելիության հարատևում իր ազգի համար: Երկրաշարժի կողքին Բանաստեղծուհու մտապատկերում միշտ կա ու կա Տեր-Ջորի ահասարսուռ պատկերը: Այդ հիշելիս նարեկյան պոռթկումներ են խաչաձևում նրա կոկորդում, որովհետև.

*Մնապատը այրում է ներքաններս,  
որ կանգնել են  
մեր պապերի աճյունների վրա:*

Բանաստեղծուհու արդար ճիշը ուզում է արթնացնել անմեղ գոհերին, հարության կոչել, բերել դեպի աստվածային խորան, նա սրբազան երդումով հավատացնում է փոշիացած գոհերին, թե հայր նորոգելու է իր պատմությունը և հավաստելու է իր գոյությունը՝ որպես պատգամ էության:

Մտերմիկ մի զրույց է վարում Ալիսիա Կիրակոսյանը աստվածային խորանում, ուր, ինչպես Գրիգոր Նարեկացու մատյանում, հաճախ այդ զրույցը վերածվում է խորագնա մենախոսության:

«Արվեստի» և «Հիշատակի» խորանները նրբերանգային ձևով ներկայացնում են Բանաստեղծուհու ինքնարտահայտման նոր եղանակները: Նրանցում առկա է զրույց Կոմիտասի, Հովհաննես Շիրազի հետ՝ նորից ու նորից իր ազգին հուզող հարցերը պարզելու համար:

Ինչպես բոլոր իսկական բանաստեղծները, Ալիսիա Կիրակոսյանն ունի մի գերխնդիր երազանք՝ տեսնել մարդ արարածին կատարելագործված, մարդկային կյանքի արատներից մաքրված, մարդու մեջ աստվածայինը նշմարելու հույսով, այդ մղումներով նա շարունակ հետևում է կյանքին, բայց, ավա՛ղ, այդ ամենը հաճախ ավարտվում է ոչ ցանկալի մի եզրահանգումով.

*Մի ամբողջ կյանքի ապրեցի ես  
Կիսաստվածներ որոնելով,  
Բայց ճամփին իմ անիրավ  
Կարողացա ես գտնել  
Միայն ու միայն  
Կիսամարդիկ:*

Ալիսիա Կիրակոսյանի բանաստեղծական աշխարհը հարուստ է և լի ներհայեցողական իրողություններով՝ տիպիկ կանացի, նաև ոչ կանացի, մարդկային ընդհանրապես:

Բանաստեղծուհին իր ճանապարհն սկսել է իսպանալեզու քերթվածներով և ապա քայլ առ քայլ մոտեցել է իր արմատներին, ու այդ մոտեցումն այնքան հաստատուն է, որ այժմ նա մասնիկ է դառնում հայ բազմադարյան քնարերգության, ժառանգորդը Գրիգոր Նարեկացու, Եղիշե Չարենցի

և Պարույր Սևակի: Ինչպես տիեզերքը, այնպես էլ բանաստեղծական աշխարհն անսահման են իրենց ընդգրկումներով, և ճշմարիտ բանաստեղծները, աստվածային կոչումին հետևելով, ընդգրկում են բանաստեղծական աշխարհի նորանոր հորիզոններ:

Ալիսիա Կիրակոսյանի քնարերգության մեջ ուրույն արտացոլում ստացավ հայերի ցեղասպանության թեման, այն բանաստեղծական մտասուեռման նոր հաղթանակ է. բանաստեղծուհին իր ժողովրդի ճակատագրական ողբերգությունը ներկայացնում է անցյալի, ներկայի, նույնիսկ ապագայի դիտակետից: Հիանալի ուսումնասիրելով Հայոց եղեռնի մանրամասները՝ բանաստեղծուհին դրանք վերապրել է իր ներաշխարհում և իր խոհերի ու զգացումներին մեկնաբանումով մատուցում է ընթերցողին: Մակրոկոսմը և միկրոկոսմը, տիեզերականն ու աստվածայինը, մարդկայինն ու ազգայինը, իր արմատները սնուցող պապենական հողը զուգահեռվում են հայերի ցեղասպանության փաստի շուրջ: Արդյոք հնարավոր է մոռանալ 1915թ. եղեռնը՝ այդ մեծագույն անարդարությունը, որ բանաստեղծուհու խորին համոզմամբ իրագործվել է Աստծու տիեզերական մի ճամփորդության պահի, երբ նա կարծես թե կարճ ժամանակով մոռացել է իրեն այնքան նվիրված մի ժողովրդի:

*Արդարությունը գալիս է  
Դարեր ու դարեր հետո:  
Մի՛ լռիր, Աստված,  
Դու չես կարող  
Մեղսակից լինել  
Աշխարհի աղետներին:  
Դու չես կարող  
Մեզ լքել մենակ:  
...Բայց ես հարց եմ տալիս  
Այս իմ մարդկային  
Հարցազրույցի լուսանցքներից.  
Ի՞նչ տիեզերական  
Ճամփորդությամբ էիր  
Ժամանակդ վատնում,  
Երբ հայեր էին ջարդվում:*

Ցեղասպանությանը Ալիսիա Կիրակոսյանը նվիրել է քերթվածների մի ստվար փունջ, որը գետեղվել է 1992-ին լույս տեսած «Խորան արմատի և բողոքի» հատվածում: Ժողովածուն բանաստեղծուհու այն ինքնագիր գիրքն է, որում նա ընթերցողին դիմում է պապենական լեզվով՝ արևելահայերենով, որոշ արևմտահայ շաղախումներով: Սակայն ակնառու է մի իրողություն: Ալիսիա Կիրակոսյանի

այս նոր ժողովածուն, ինչպես նաև վերոհիշյալ հատվածը, կրում է Գրիգոր Նարեկացու հզոր ազդեցությունը: Նարեկյան շնչով է բանաստեղծուհին դիմում Աստծուն՝ ազդարարելով, թե անհնար է մոռանալ այդ, քանզի հավերժ հիշվելու է, եթե անգամ աշխարհի վրա մնա վերջին կրողը հայկական արյունի, և համոզված է՝ հայոց դատին պետք է միանա հենց ինքը՝ Աստված, որովհետև ինչպես տիեզերական վիշտը, այնպես էլ հայերի ողբերգությունը Աստծունն են.

*Եվ գնդիկների վրա  
Դրոշմված ցավն այս  
Ժառանգվելու է  
Սերնդից սերունդ:  
Իսկ եթե մի օր ցնդեն  
Գոյության  
Հիշողությունները բոլոր,  
Ու միայն ու միայն մնա  
Հայի մի կաթիլ արյուն՝  
Նա կրկնելու է, գիտեմ,  
Թաքուն մի ձայնով՝  
«Դեռ հիշում եմ,  
Հիշում եմ,  
Հիշում»:*

Ինչպես «Մատյան ողբերգության» երկում Գրիգոր Նարեկացին շարունակ դիմում է Աստծուն անսահման հավատալով նրան, ուզում է իր ու համայն քրիստոնյաների համար, ներկա ու ապագա մարդկության համար պարզել մարդկության ճակատագիրը և միշտ հենվում է Աստվածաշնչի վրա, այնպես էլ Բանաստեղծուհին, նույնպես վերհիշելով աստվածաշնչյան ավանդություններն ու պատմությունները, չի մոռանում, որ իսրայելցիների սարսափելի սովը տևում է յոթ տարի, միչդեռ հայերի համար այդ ո՞րերորդ անգամ է կրկնվում յոթն այդ:

«Խորան արմատի և բողոքի» հատվածն սկսվում է «Հայ լինել» քերթվածով: Հայ լինել, ըստ Բանաստեղծուհու, նշանակում է երբեք չմոռանալ անապատում դժոխք գտած ծերերին, կանանց, երեխաներին, որոնց կոկորդում խեղդվեց կենսասիրության երգը:

Վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը Բանաստեղծ լինել նշանակում է լինել իր ժամանակի անհանգիստ խիղճը: Ամեն տարվա ապրիլ ամիսը Բանաստեղծուհու մեջ վերածնում է մշտապես ուղեկցող հոգեկան ցավը, պատճառում է չսպիացած վերքի տառապանքը և նրա համար մնում է միայն աղոթել առ

Աստված, որ այսուհետև խաղաղությունն իր ժողովրդի համար դառնա «Երգ երգոց»:

Ալիսիա Կիրակոսյանի մի բանաստեղծությունը սկսվում է Տեր Ջոր բառով: Այս քերթվածում կա ապրող հայի մարդկային ու հարազատական ցավը՝ ինչո՞ւ, ինչո՞ւ իր նախնիներին բաժին ընկավ այդ դժոխքը, ինչպե՞ս ապրել, երբ այդքան անարդար մահերը ճնշում են, սարսափեցնում քեզ: Մարդն ուզում է գերմարդկային ձայնով գոռալ ու սպասել հրաշքի, սպասել, որ արթնանան անմեղ զոհերը, հարություն առնեն, կանգնեն կենդանի հայերի կողքին: Տեր Ջորի անմեղ նահատակները պիտի հարություն առնեն հայի նորոգված կերպարում, որն աշխարհին պարզելու է վերածննդի հաղթական դրոշը:

«Խորան» ժողովածուին կցված «Նախաբանում» Ալիսիա Կիրակոսյանը մի համառոտ ակնարկում անկեղծորեն խոստովանում է իր անցած ուղու ոչ հեշտագնա, բայց հարուստ պատմությունը՝ առաջին գրքից մինչև վերջինը: Ներկայացնում է եղեռնից հրաշքով վերապրած գաղթականի ճակատագիրը, մեկնում օտար հողի վրա ապրող հայի ներաշխարհը:

Ուշագրավ է բանաստեղծական էության մի հատկանիշ նս. բոլորովին լավկան չեն անցյալի սև հուշերի վերապրումները, այլ լի են արժանապատվությամբ, ոճրագործ

անարդարությունը ցասումնալից մերժելու վճռականությամբ, ազգի ապագային ուղղված լավատեսության զգացումով, դրա համար էլ նա ժողովածուի այդ հատվածին գումարում է նորելուկ հայ ազգային անկախության փափագելի իրողությունը և Ղարաբաղյան շարժման խորին խորհուրդը:

Բանաստեղծական իր մտորումներում Կիրակոսյանն արձանագրում է ցեղասպանության ահասարսուռ օրերին հայերի ըմբոստացման փայլուն օրինակները ևս: Դրանցից մեկն է Վանի հերոսամարտը: Վասպուրականը, Վանը դիտվում է որպես հայերի բնօրրան հին Ուրարտուն, դրախտների երկիրը, մուսանների աղբյուրը, Կոմիտասի ներշնչման հիմքը: Վանը սնվել է ազատության տեսիլներով, նրա հերոսներն են եղել Անդրանիկը, Դրոն, Խեչոն, Վարդանը, Համազասպը: Վանի հերոսամարտը կարծես իրականացել է Աղթամարի վանքի շլացնող լույսով ու Գրիգոր Նարեկացու աղոթքների մոզական ուժով: Վանի հերոսամարտը բանաստեղծուհին պատկերել է հայ հին վիպասքի առասպելաշունչ ոգով:

Արձանագրելով 1915 թվականի եղեռնի սարսափազդու դրվագներն ու նրանց թողած անանց ու տառապագին հուշերը, բանաստեղծուհին խոր խոցումով գրում է Մուսգայիթի եղեռնի մասին, որն ազդակ դարձավ Ղարաբաղյան շարժմանը:



Ալիսիա Կիրակոսյանի «Խորան արմատի և բողոքի» հատվածն ավարտվում է «Անկախություն» քերթվածով: Նա համոզված է, որ անկախությունը վերջ է դնելու հայ ժողովրդի կորուստներին, և անկախության դողանջները խառնվելու են Պարույր Սևակի «Անլռելի զանգակատան» դողանջներին՝ բացելով նոր առավոտ հայոց երկրում:

*Լսե՛ք, մարդի՛կ,  
Ինչպես Պարույրի  
Անլռելի զանգակատան  
Ղողանջները մաքուր  
խառնվում են  
Մեր ժողովրդի երգերին,  
Մեր ազատության ճիչերին  
Երբ բոլորս ոտքի ենք կանգնել  
Նույն իրավունքի պատվանդանում:  
Տեսե՛ք:  
Տեսե՛ք՝  
Ինչպես նոր առավոտ է բացվել  
Հայ երկնքում:*

## Զ Ր Ո Ւ Յ Ց Ն Ե Ր Ա Ս Տ Ծ Ո Ւ Հ Ե Տ

Ալիսիա Կիրակոսյանի առաջին իսկ քերթվածներից երևում է փիլիսոփայական մտածելակերպը, բանաստեղծում է ներքին հանգով, խորքային մտածական չափեր են արտահայտում նրա հույզերը, որոնք վերնականների հետ շփվելու եզրեր ունեն կարծես:

Նրա ավելի հասուն շրջանի քերթվածներից է այն հատորը, որն ինքը խորագրել է «Հարցազրույց Աստծո հետ»:

Համաշխարհային գրականությանը հայտնի են բանաստեղծի, այսինքն՝ մարդու հանգամանալի հարցադրումները Աստծուն, Ալիսիան դնում է իր հարցադրումները, ու երբ իր ծավալուն քերթվածի առաջաբանում նա խոստովանում է, թե փիլիսոփայական խնդիրներում և դիմումներում ինքը չի հետևում և՛ ոչ մի բանաստեղծի, և՛ ոչ մի փիլիսոփայի, պետք է հավատալ: Այդ զրույցի մեջ ինքն անկաշկանդ է. կա Աստված, որին ինքը պաշտում է, կա փոքրիկ հյուլե՝ բանաստեղծուհին, ժամանակից ու տարածությունից պոկված, ժամանակի ու տարածության դրոշմը կրող, և կա հավերժը՝ Արարիչը:

«Հարցազրույց Աստծո հետ» պոեմը գրականագիտական լիիրավ սահմանումներով քնարական է, ինչպես Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությունը», ինչպես 11-

րդ դարի բյուզանդացի նշանավոր միստիկ Սիմեոն Նոր Աստվածաբանի «Հիմները»:

Ըստ բանաստեղծի՝ ամեն մի հավատացյալ երագում է մարդու և Աստծու հանդիպումը, այսինքն՝ իր և բարձրյալի, մղվում է դրան և այդ այնժամ, երբ մենակ է, ինքն իր հետ, հատկապես մտորում է և խիզախում նոր ձեռնարկ սկսելու, երբ գիտակցում է, թե կյանքում անում է իր ինքնուրույն գործնական առաջին քայլերը, չէ որ ամեն մի բանական մարդ շարունակ մտածում է Աստծու մասին, նրան նեցուկ ունենալու մասին, բոլոր դժվար պահերին, բոլոր անհույս բույներին, չարին դիմագրավելու և ընդդիմանալու իր ջանքերի ժամանակ: Ի՞նչ է լինելու վերջը, ոչ ոք չգիտի, բայց գիտի միայն նա, որն անտեսանելի է, անհասանելի, անիմանալի և ամենակարող ու հավերժական.

*Մտվ ու ոսկորով մտել եմ  
Մի երագի մեջ,  
Որ գալիս է ապագայից  
Եվ հայտնում է ինձ  
Քո վճիռները վերջնական:<sup>1</sup>*

---

<sup>1</sup> Ալիսիա Կիրակոսյան, Երկեր, Գլենդել, 1997, էջ 21: Այսուհետև այս գրքից բերվող մեջբերման էջը կնշվի միայն վերևում (Ա. Դ.):

Ալիսիան էլ ունի նույն հարցումները, ինչ նրանից առաջ կատարել են Գրիգոր Նարեկացին և Սիմեոն Նոր Աստվածաբանը: Նրան էլ հուզում է կյանքի ճշմարտությունը, որովհետև հաղթանակողը հաճախ հակառակորդն է.

*Դու՛ որ ձևակերպողն ես  
անսահմանության,  
Եվ արարիչը մեր սահմանված կյանքի՛  
Օգնի՛ր մեզ որսալ  
ակունքը ճշմարտության,  
Ողողի՛ր մեզ նրա էությանմբ,  
Որ կարողանաք մերժել  
արմատները չարիքի (էջ 23):*

Տեսնենք ինչպես էին նույն խնդիրները Աստծուն առաջադրում խորհրդապաշտ հզոր բանաստեղծները՝ Սիմեոն Նոր Աստվածաբանը և Գրիգոր Նարեկացին, որոնք նման փիլիսոփայական խորհրդածություններ կատարել են իրարից անկախ ու միմյանցից անտեղյակ, բայց նույն ոգով, նույն մտահոգությամբ.

*Բայց և այնպես ես հիմա կասեմ բոլորին,  
Այն, ինչ դու իրավունք ես սովել ասելու,  
Օ՛, մարդկային ողջ ցեղ՝  
Թագավորներ և իշխաններ,*

*Հարուստներ ու աղքատներ,  
Հոգևորականներ և աշխարհիկներ  
Եվ բոլորը, ովքեր խոսում են երկրի վրա,  
Լսեցե՛ք հիմա ինձ՝  
Մարդկանց համար պատմելու  
Աստծո սիրո մեծությունը։<sup>2</sup>*

Միմեռն Նոր Աստվածաբանը հատուկ շեշտում է, թե ինքը մտահոգ է երկրի վրա բոլոր խոսողների համար. նույն միտքը, կապված բառի, խոսքի նշանակության հետ, արծարծում է Ալիսիա Գիրակոսյանը, իր պոեմի այլ հատվածներում, որոնց կանդրադառնանք հետագա շարադրանքի համապատասխան հատվածում:

Գրիգոր Նարեկացին էլ Աստծու տիեզերական նման ընկալման մեջ է մտնում և լայնատարած սրտով իր հարցումների մատյանի նպատակը ձևակերպում է հետևյալ կերպ.

*Նորակերտ մատյանն այս ողբերգության,  
Ուր պատկերված են, նշավակվելով  
Ամենատարբեր կրքերն ամենքի՝  
Իբրև ամենայն վիշտ ու ցավերի*

---

<sup>2</sup> Syméon le Nouveau Théologien, Hymnes, t. 2, Paris, 1971, p. 317.  
Տողացի թարգմանությունը ֆրանսերենից մերն է (Ա. Դ.):

*Մասնակից, հաղորդ, մեծապես գիտակ  
Ու ճշմարտացի մի պատվեր, ավանդ,  
Հանձնարարվում է այս երկրի վրա  
Հաստատված բոլոր բանականներին,  
Համայնատարած քրիստոնյաների  
Տիեզերագումար ամբողջ բազմության...<sup>3</sup>*

Ալիսիա Կիրակոսյանի պոեմի կենտրոնում դրվում է մարդ անհատի հոգեկան մենության խնդիրը, փոխվում են ժամանակները, կյանքն ընթանում է դեպի գիտատեխնիկական առաջընթացը, բայց առաջին պապիրուսե գրքից մինչև ռոբոտների դարաշրջանը մարդկային հասարակության շրջապատում, զգայուն մարդու մեջ շարունակ խլրտում է մենակության գաղափարը. այն հատկապես ծանրանում է լինելիության բեռի ահավորությունից: Բանաստեղծուհին տարանջատում է մարդու գոյության ռեալականությունը տիեզերական հավերժությունից, այն դնում է մանրադիտակի տակ, դիտում է, և որքան շատ է դիտում, այնքան ավելի համոզվում է չբացահայտվածի ահռելիությունը: Բյուր ձևերով նա կրկնում է մարդու և տիեզերքի, մարդու և Աստծու ընդհանրությունների առկայությունը և խոստովանում մար-

---

<sup>3</sup> Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Տաղեր, թարգմանություն, Վազգեն Գևորգյանի, Երևան, 1979, էջ 21:

դու էության լրիվ ընկալման անհասելիությունը. մարդը խաղալիք է ճակատագրի ձեռքին, թե՞ կարող է կառավարել իր ճակատագիրը դույզն-ինչ. սրանք հարցեր են, որոնք առաջադրում են փիլիսոփաները, աստվածաբանները, բանաստեղծները, արվեստագետները.

*Ի վերջո կյանքն ի՞նչ է,  
Եթե ոչ դեպի մահ ընթացող  
Մի անավարտ մենախոսություն (էջ 25):*

Արդյոք արժե՞ պտտվել կյանքի կրկնվող կարուսելում: Իհարկե, արժե, կենսահաստատ հայտարարում է բանաստեղծը, որովհետև իրական կյանքի մեջ կան այնքան գեղեցկություններ, որոնց համար արժե ապրել և մեռնել:

Մենության երևույթը, բարձրյալին առանձնացված դիմելը՝ գոյի հարցերը պարզաբանելու նպատակով, կան բոլոր հայտնի կրոնական ուսմունքներում: Բոլոր կրոններն ի վերջո պատկերում են մարդու առաջնահերթ մղումը՝ հաղորդակցվելու բարձրյալին, ստանալու նրա պատգամները, ըստ դրանց կառուցելու մարդկային կյանքը, ճշտելու, թե մարմնական կյանքի ժամանակավոր ընթացքի համար ո՞րն է կարևոր, ի՞նչ է անհրաժեշտ կատարել, որ մարդ արարածի մեջ չմոլեգնի անասնականը, որ նրանում գերիշխի աստվածա-

յինի հետ կապվող բանականը, սերը թագավորի մարդկային հարաբերություններում, գերիշխի առաքինի նվիրումը, և մարդկային սերունդները հարատենն ներդաշնակության, խաղաղության և բարեկեցության մեջ:

Բանաստեղծուհին շերտում է աստվածային հավասարության խնդիրը, երկու հարցում նրանում շեղում չկա. դրանք են՝ կյանքը և մահը: Բոլորը հավասար են, երբ ծնվում են, անձամբ ոչինչ չբերելով, բոլորը հավասար են, երբ մեռնում են, նույնպես մերկ, ոչինչ չտանելով անդրաշխարհ:

Ի դեպ, այս խորհրդածությունները կան Աստվածաշնչային «Ժողովողում», որն ավանդաբար վերագրվում է Սողոմոն Իմաստունին, և բոլոր քրիստոնյա փիլիսոփա գրողների մտածողության հենակետն են. «Ինչպես իր մոր որովայնից ելավ, այնպես մերկ պիտի դառնա, ինչպես եկավ, այնպես էլ պիտի գնա, ու իր աշխատածից որևէ բան իր հետ չի տանելու: Եվ դա մեծ ցավ է, որ ինչպես եկավ, ճիշտ այնպես էլ պիտի գնա»<sup>4</sup>:

Բանաստեղծուհին առաջադրում է ավետարանական մի կարևոր պատգամ՝ ճանաչիր ինքդ քեզ: Նա հավատացած է՝ մեծագույն գյուտ է, երբ մարդն ինքն իրեն ճանաչում է, գոնե մասամբ, բայց մարդու երկվությունը, նրա կասկածա-

---

<sup>4</sup> Ժողովող, 5, 6 (15-16):



մտությունը շարունակ տարուբերում են մարդու հոգեկան էությունը, իսկ որքան իշխող է գործի և խոսքի հակասությունը նույն անհատի մոտ. մարդը շատ հաճախ չի կատարում այն, ինչը քարոզում է, չի կատարում այն, ինչը խոստանում է, իսկ երբեմն կատարում է ճիշտ հակառակը:

Աշխարհի մեծագույն մտածողների մի մասի կյանքի պատմությունն ուսանելիս հանկարծ հիասթափվում ես՝ իմանալով նրանց իրական կյանքի ստվերոտ մանրամասները, չէ որ նրանք աստվածային լույսի պատգամն են բերում իրենց արվեստով, սակայն կյանքի վարքագծով հակասում են աստվածային պատգամներին: Մի՞թե այս իրողությունը արվեստի ու գրականության հավերժական թեմաներից չէ:

«Հարցազրույց Աստծո հետ» պոեմի ենթախորագրերից մեկը կոչվում է՝ «Ունայնություն», ընդհանրապես պոեմը բաղկացած է չորս ծավալուն գլուխներից, որոնք բաժանված են ենթավերնագրերով:

*Այստեղ,*

*Այս հողի ճամփաներում,*

*Այնքան ցեխ կա,*

*Այնքան թույն,*

*Որ քայլերը վարակվում են*

*հոգեվարքով (էջ 30):*

Ասում է Ալիսիա Կիրակոսյանը՝ մտահոգ աստվածային պատգամների մեջ մնալու դժվարությունից. ինչպես Սայաթ-Նովան էր պնդում, թե պետք է ապրել ու անել այն, ինչը «հոգու և մարմնի կարգումն է»<sup>5</sup>: Իսկ Գրիգոր Նարեկացին իր հանճարեղ երկի մի շարք գլուխներով մանրախույզ ձևով բացատրում է Աստծուն, թե մարդու համար շատ դժվար է մնալ Աստվածային օրենքների սահմաններում և ապրել հրաշքի օրենքներով, որովհետև մարդու մարմինը մակարդվել է մեղքից, իսկ ցանկություններն այնքան երկրածին են: «Ունայնություն» հատվածը առավել համահունչ է Աստվածաշնչային «Ժողովողին»:

*Ոչինչ:*

*Ոչ ոք վերադարձնելու չէ մեզ*

*պահերն այն,*

*որ խլվեցին կյանքից:*

*Ոչ ոք քար ու տախտակ չի հավաքելու,*

*որ տուն կառուցենք,*

*Միայն դասավորելու են*

---

<sup>5</sup> Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Սորոս Հասրաթյանը, Երևան, 1963, էջ 28:

*մեզ համար՝  
Քայլ առ քայլ  
Մի շքեղ ունայնություն,  
որ բորբոքում է  
ու հանգիստ չի տալիս... (էջ 32):*

«Տառապանք» ենթաբաժնում առկա են մարդկային կյանքի ցավերի և տվայտանքների մասին խորհրդածությունները, որոնք մասնավորվում են իր ցեղին բաժին ընկածով:

Հին է տառապանքի բեռը իր նախնիների, նրանք մի աշխարհից են, որի անցյալը թեև հայտնի է, բայց այնքան է վաղնջական, որ իր խորքերում ունի նաև մույթ էջեր: Անշուշտ բանաստեղծուհին ակնարկում է թուրքական պատմագրության համար քրեատոմատիական ճշմարտություն հայտարարված այն կեղծիքը, թե հայերի պատմությունը սկսվում է Տիգրան Մեծից, և թե հայերը իրենց պատմական տարածքում եկվորներ են:<sup>6</sup> Դժվար է ճշմարտության ճանապարհը, այն ամենից ավելի դժվար է իր ժողովրդի համար, որովհետև նա ավելի շատ է տառապում իր

---

<sup>6</sup> Այվազյան Արմեն, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ, քննական տեսություն, Երևան, 1998, էջ 85 և այլուր:

ուզածին հասնելու համար: Ցավը դառնում է կյանքի շարժիչ ուժը, ինչպես Պարոյր Սևակն է ասում.

*«Ցավն է հաճախ անաջ մղում»:*

Ալիսիա Կիրակոսյանը ցավը կոչում է մեծագույն ուսուցիչը, որից ստիպված հաճախ դասեր է առնում մարդը, որի մտրակի տակ հասունանում է, իմաստնանում, չէ որ աշխարհի մեծ մտածողները նաև մեծ տառապյալներ են եղել հաճախ: Ցավը դառնում է մի փորձաքար, զուր չէ, որ հայերին համեմատել են Աստվածաշնչի Հոբ Երանելիի հետ՝ քրիստոնյա սրբերից ամենատառապածի: Բանաստեղծուհին ցավի մեջ տեսնում է աստվածային մի ծածկագիր, որը դեռևս ոչ ոք չի վերծանել, սակայն չի մոռանում հիշեցնել, թե հոգուն ծառայողներն ավելի զգայուն են, և ցավը նրանց առավել է տանջում: Ցավի տառապանքի խորհրդանիշը խաչված Քրիստոսն է, և այդ կերպարով նա երևում է բանաստեղծուհուն.

*Բաց թները*

*նշան են ազատության,*

*Բայց նաև կերպարն են*

*Տանջված մի Քրիստոսի:*

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական հարստության մեջ մեր կողմից նկատվել է անհայտ հեղինակի մի ուշագրավ բացատրություն՝ հեթանոսական և քրիստոնեական ժամանակների որոշ խորհրդանիշերի մեկնաբանմամբ:<sup>7</sup> Այդ ձեռագրի բացատրությունները բանալի են Գրիգոր Նարեկացու «Վարդավառին» նվիրված տաղի վերջին տունը հասկանալու համար.

*Աստղունքդ ամեն շուրջ առին  
Դեմ լուսնին՝ գունդ-գունդ բոլորին.  
Գունդ-գունդ խաչաձեւ գնդակ,  
Յարիհնուած երկնից շրջանակ:<sup>8</sup>*

Առաջին պահ, սա մի տեսակ հիանալի հանգավորված բառախաղ է թվում. ինչ ասել է «Գունդ-գունդ խաչաձեւ գնդակ, յարիհնուած երկնից շրջանակ»՝ տիեզերական մարմինների վերացարկված ընկալում, թե՞ բանաստեղծական հնարանք, ուր ձևը առաջնային է բովանդակությունից: Չմոռանանք, սակայն, որ Գրիգոր Նարեկացու տաղն է, այն բա-

---

<sup>7</sup> Դոլուխանյան Ա.Գ., Ներբողական որոշ խորհրդանիշերի բացատրությունը Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 7703 ձեռագրերում, տե՛ս «Լրաբեր» հասարակական գիտությունների, ամսագիր, 1988, թիվ 11, էջ 62-68:

<sup>8</sup> Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, Երևան, 1981, էջ 119:

նաստեղծի, որի քերթվածների իմաստավորվածությունը շատ հաճախ ապշեցուցիչ է: Ուրեմն ի՞նչ է նշանակում այս: Բացատրությունը տալիս է ձեռագրի անհայտ գեղինակը. «...արդ զկոսածին մարմինն ասէ, որ գնդաձեւ ի խաչին կարմրափայտ եւ կայլակնացնցուղ արեան շիթք հեղան»<sup>9</sup>: Գրիգոր Նարեկացին իր «Վարդավառի» տաղի վերջում պատկերում է Տիեզերքի համայնապատկերի վրա խաչված Քրիստոսին, սա Աստծու որդու խորհրդանիշ պատկերն է: Այդպիսին է Քրիստոսի կերպարը նաև միջնադարյան հայ մանրանկարիչների որոշ պատկերներում:

Նորից ու նորից պիտի շեշտենք Ալիսիա Կիրակոսյանի ներհայեցողությունը Քրիստոսի կերպարի ընկալման խնդիրներում:

Որպես կենսասեր մարդ բանաստեղծուհին ասում է մահը և այն որակում չորս բառերով.

*Նոր մի ուղղագրություն է ստեղծվել  
Մահվան վճիռի համար՝  
Էություն անհեթեթ,  
Ի ժաձև,  
Տ ազնապայի,*

---

<sup>9</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 7703, թերթ 107ա:

### *Մասնիկ (էջ 41):*

Որքան էլ սիրելի է կյանքը, նույնքան էլ լի է կորուստներով, մորմոքուն ցավերով. հարազատներ, ընկերներ, սերեր, հերոսներ հեռանում են աչքիդ առաջ՝ կեղեքելով հոգիդ: Ամբողջ մի նոր սերունդ է եղեռնը կլանել, և սադայելը տոնել է իր խրախճանքը՝ ճզմելով անմեղներին և ցայտեցնելով գոհերի արյան կայլակները: Եվ մի՞ թե անմեղների արյան այդ ցայտերը չեն ներկել Տիրոջ ճերմակ ու մաքուր պատմուճանը: Օ՛, ծանր է մարդու կյանքը, վախերը, տագնապները, սպասումները շարունակ փոթորկում են մարդու ներաշխարհը: Անշուշտ, բանաստեղծուհին երբ ասում է, որ «մեռյալներն իմ գերեզմանում չեն», վերատին հիշում է 1915 թվականի եղեռնի այն մեկ ու կես միլիոն հայ նահատակներին, որոնք ի խախտումն քրիստոնեական ավանդույթի և ծեսի, անգերեզման հեռացան այս աշխարհից:

«Հարցազրույց Աստծո հետ» պոեմի երկրորդ գլուխը սկսվում է «Նախանձ» խորագրով: Նախանձի մասին շատ է գրվել, հենց քրիստոնյաների սրբազան մատյանը՝ Աստվածաշունչը, լի է մարդկային նախանձի ավերածությունները պատկերող դրվագներով: Նախանձը մարդկային հասարակության համար գրեթե մահվան հավասար անխուսափելի կատեգորիա է, և ոչ ոք նրանից դուրս չէ, ոչ ոք երաշխա-

վորված չէ նրա հարվածներից խուսափելու, չնայած նախանձը, ըստ Սուրբ գրքի, մեծագույն արատ է: V դարի պատմիչ Եղիշեն, իր ոսկեղենիկ Մատյանում ներբողելով հայ ազնվական կանանց հոգու գեղեցկությունն ու վարքագծի արիությունը, չի մոռանում նշել. «...կռիվ բաց արին ու մարտնչեցին ծայրագույն մեղքերի դեմ, կտրեցին և դեն գցեցին նրա մահաբեր արմատները: Միամտությամբ հաղթեցին խորամանկությանը և սուրբ սիրով լվացին նախանձի կապտագույն ներկվածքը, կտրեցին ազահության արմատները, և չորացան նրանց ոստերի մահաբեր պտուղները»<sup>10</sup>: Սա քրիստոնեական բարոյագիտության պահանջն է՝ մարդու նախանձի արատը նրա միջից հանելու. ընդհանրապես նախանձը գույն ունի միջնադարյան գրականության մեջ. նրա գույներն են դեղինը, կապույտը, իսկ քանաստեղծուհու մտապատկերում այն նաև նեխած է ու զարշահոտ: Նախանձի մասին այնքան շատ է գրվել, որ համաշխարհային գրականությունից ելնելով կարելի է հատորներ կազմել, չէ որ նախանձը նաև իրական կյանքի շարժիչ ուժերից է և կործանարար հզորություն ունի: Միայն Մոցարտի և Սալյերիի պատմությունը հերիք է նախանձի՝ որպես

---

<sup>10</sup> Եղիշե, Վարդանանց պատմությունը, թարգմանությամբ և ծանոթագրություններով պրոֆ., դ-ր Ե.Տեր-Մինասյանի, Երևան, 1958, էջ 179:



մարդկային արատի սարսափելիությունը պատկերացնելու համար:

Նախանձը այնքան է բարգավաճել մարդկային ցեղի մեջ, որ բանաստեղծուհին Արարչին խնդրում է բացել մի նոր օր, մի նոր դարաշրջան, ուր նախանձը չտոնի իր հաղթանակը և կասեցվի նրա հաղթարշավը.

*Ուղարկիր մեզ*

*մի ուրիշ դարաշրջանի*

*օրն առաջին (էջ 48):*

«Հարցազրույց Աստծո հետ» պոեմի երկրորդ գլուխը բաղկացած է նաև «Անարդարություն», «Խորհուրդ» հատվածներից: «Անարդարություն» հատվածն ամբողջությամբ նվիրված է 1915 թվականի եղեռնին և Հայ դատին.

*Ծնվել եմ ես*

*մի հայ արգանդից*

*Ու ծանոթ եմ ես*

*ողբերգությունների*

*ու ցեղասպանության.*

*հատկապես այն մեկին,*

*որ թույլ տվիր պատահի,*

*չգիտեմ ինչ գաղտնի  
ու գերմարդկային  
նպատակով:*

Ասեա մեր դյուցազնական «Մասնա ծներ» էպոսից է առել բանաստեղծուհին խաղաղության ու սիրո իր պատգամը, ասեա մեր ժողովրդի դարավոր փորձից իմաստնացած միտքն է թևածում պոեմի այս հատվածում, մենք հանդուրժողականության բնածին ազգային մի զենք ունենք, որն այնքան կարևոր է և հիմա պահանջվում է բոլոր ժողովուրդներից քաղաքակիրթ աշխարհում: Մենք սիրում ենք խաղաղություն, մենք ուզում ենք արարել, կառուցել, նույնիսկ օտարին օգնել, ձգտում ենք սիրո և բարեկեցության: Մեր ժողովրդի այս երազանքը մեծ Թումանյանը հանճարեղ է ձևակերպել.

*Լինե՛ր հեռու մի անկյուն,  
Լինե՛ր մանկան արդար քուն,  
Երագի մեջ երջանիկ,  
Հաշտ ու խաղաղ մարդկություն:<sup>11</sup>*

---

<sup>11</sup> Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. II, Երևան, 1990, էջ 28:

Բանաստեղծուհին հայերին անվանում է Աստծու ժողովուրդ, չնայած բոլոր մարդիկ էլ Աստծուն են, քայց Հայ դատը՝ այն ցնցող է, և Աստված էլ պիտի միանա հայերի վշտին: Աստված պարտք ունի հայերի առաջ և պետք է վճարի այն, թեպետ ինքը Տեր Ջորի մահերի ժամանակ դեռ ծնված չէր և լույս աշխարհ չէր եկել, սակայն հոգին էր այնտեղ, նրա հոգին մի մասնիկ է իր ժողովրդի հավաքական հոգու, նա սկանատեսն էր Տեր Ջորի Գողգոթայի, և հիմա հայերի ընդհանուր գերեզման դարձած այդ լուռ անապատը պահում է իր մեջ մի խոր խորհուրդ՝ հիշատակի և արդարությանը հասնելու խորհուրդը: Բանաստեղծուհին պատկերավոր ձևով մարդկայնացրել է Տեր Ջորի հողը, այնտեղ՝ Տեր Ջորում, դեռ զարկվում են անթաղ ոսկորները, ու դեռ մնում է անմեղ գոհերի չորացած արյունը, որից էլ ցնցվում է հողը վշտահար: Հողը ըստ քրիստոնեական կրոնի ընդունված է կոչել մայրական գիրկ, հողը մարդու վերջին հանգրվանն է, որովհետև.

*Ապա ցածացաւ երկինքն*

*Ու գլուխ եղիր ի գետնի...*

*Դուք այլ ցածացէ՛ք, մանկտի՛ք,*

*Ու գլուխ դրէք ի գետնի.*

*Քան գերկինքն ի նշ բարձր կայ,*

*Որ գլուխ եղիր ի գետնի.  
Այսօր վրան կու քայլենք,  
Վաղն մտնունք ներքև գետնի...<sup>12</sup>*

Այդպես է հողը, երկիրը գնահատում 17-րդ դարասկզբի փիլիսոփա Բանաստեղծ Ներսես Մոկացին՝ հողը համարելով մեր գոյության միակ օրրանը: Հայկական ժողովրդական մտածողության մեջ հողը այնքան է սրբացվել, որպես մարդու վերջին կայան, որ գերեզմանը կոչել են հանգստարան: Ահա Բանաստեղծուհին Տեր Զորում է և տեսնում է հողի վիշտը՝ առաջացած անթաղ մեռյալներից. լսվում է հողի տնքոցը, որովհետև երկինքը հայերի գլխին պայթել է անարդարության ռումբով: Ի վերջո, որքան անգոր է մարդն այսօր այդ ոճրագործության իրողությունն ընկալելիս.

*Անապատը այրում է ներքաններս,  
որ կանգնել են  
մեր պապերի աճյունների վրա (էջ 53):*

Նարեկյան մի պոռթկում է ժայթքում Բանաստեղծի սրտից. նա որոտում է Աստծու, աստվածների դեմ, որոնք հա-

---

<sup>12</sup> Ներսես Մոկացի, Բանաստեղծություններ, Երևան, 1975, էջ 43:

վանաբար խմում էին մոռացության հաշիշը և հարության կոչով, լույսով ու ավյունով լեցուն մոզական դիմումով վերակենդանացնում է իր նախնիներին՝ կենսահաստատությունը նշելով որպես հայի էություն: Պոեմի այս հատվածը հայ քնարերգության եզակի էջերից է.

*Անապատը ճեղքեցէ՛ք  
ու հարություն առեք,  
որ այսօր,  
այս րոպեին  
միասին ճանապարհ ելնենք՝  
հավաքելու  
երկրագնդի ձայները ցիրուցան  
ու կերտենք  
որոտումներն իսկ խլացնող  
մի կանչ վիթխարի:  
Եվ հին արյունով,  
Նոր ավիշով  
մազլցենք ճառագայթն ի վեր,  
մինչև որ պայծառ մի ժամանակ  
մեզ դիմավորի  
գրկաբաց երկնքում  
ու տարբեր շնչով հյուսենք*

*մի ապառանի ժպիտ,  
որ տարածի անվերջ  
լույսերի դողանջներով  
մի ալեղուիա,  
թե պապերը մեր  
հարություն են առել,  
թե հայր բարձրանում է նորոգելու  
պատմության տոմարները փոշիացած  
և իր գոյությունը կնքելու  
իբրև պատգամ էության (էջ 54):*

Տեր Ջորի պատկերներին նա հյուսում է Արցախյան հերոսամարտի պատկերները. Սոււմգայիթի եղեռնը կրկնությունն էր անպատիժ մնացած 1915 թվականի ազգակործան նախճիրի, և հիմա հայր ոտքի է ելել՝ էլ բավ է մորթվելը:

Բանաստեղծուհին բարձրացնում է իր ցեղի բողոքի ձայնը՝ հանուն արդարության, որքան էլ թշնամին չընդունի այդ բողոքը և կեղծիքի դիմակը քաշի իր դեմքին, միևնույն է պետք է վերջ տալ անիմաստ արյունահեղությանը, պետք է ոչ մեկը չբռնանա մարդու ազատության վրա, հայի ազատության վրա.

*Թողէք ազատ ապրի մարդը,*

*Թողեք ազատ ապրի հայր (էջ 59):*

Ալիսիա Կիրակոսյանի կոչը ավելի ընդգրկուն է. այն ասվում է ամեն մի բռնություն կանխելու համար, այդ թվում նաև իր ժողովրդի նկատմամբ կրկին գործադրվող բռնությամբ մեկընդմիջտ վերջ դնելու համար:

Ինչ-որ տեղ բանաստեղծուհին ակնարկում է աշխարհի քրիստոնյաների անտարբերությունը դեպի իրենց եղբայրակիցները. մի թե նրանք չեն տեսնում հայերի նկատմամբ կատարվող անարդարությունները: Թող որ այդպիսի քրիստոնյաները քննադատվեն, նա պահանջում է Նոր կտակարանի միջից դուրս թափել դատարկ բառերը, նրանցում սուտ քարոզիչները կարող են դառնալ հոգու վաճառականներ: Այլևս կայծակ, շանթ, որոտում պիտի տեղալ անարդարության գլխին, արդարությունը երկար չի կարող լռել, ժամն է հայերի նկատմամբ գործադրվող անարդարության ավարտի:

Սահակ Պարթևի խաչելության շարականներից մեկում պատկերված է ավետարանական այն մոտիվը, ըստ որի Հիսուսին խաչ բարձրացնելու ժամանակ Տաճարի վարագույրը այդ անարդարությանը ի պատասխան պատռվել է՝ վերից վար.

*Ո՛վ սքանչելի տեսիլ ահաւոր*

*զԱրարիչն երկնի և երկրի՝  
Այսօր տեսաք ի իսաչին:  
Տեսեալ զՏէրն ի իսաչին  
Խաւարեցաւ արեգակն,  
Եւ վարագոյր տաճարին  
Յելոյր վերուստ մինչ ի վայր:  
Անարգաքար իսաչեցաւ Տէրն  
ի մէջ անօրինաց,  
Զի լցցի գիրն, որ ասէ, թէ՝  
Ընդ անօրէնսն համարեցաւ:<sup>13</sup>*

Նույնատիպ անօրինություն է համարում Ալիսիա Կիրակոսյանը հայերի նկատմամբ ժամանակ առ ժամանակ մեթոդիկ ծրագրվող և իրականացվող ցեղասպանությունը, որը մերժված է աշխարհի քաղաքակիրթ մարդկության կողմից:

Բայց ինչո՞ւ է կյանքը այդքան բարդ, երբեմն այնքան ցավատանջ. պատահական չէ, որ Եզնիկ Կողբացու խրատներից մեկում կյանքը բնորոշվում է որպես պատերազմ<sup>14</sup>, իսկ պատերազմում մարտիկը միշտ պատրաստ պիտի պահի

---

<sup>13</sup> Հայ քնարերգություն, Անտիկ շրջանից մինչև Ը դար, Երևան, 1981, էջ 40:

<sup>14</sup> Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 187:



զենքը, գոնե պաշտպանվելու համար: Բանաստեղծուհին կյանքի Բարդության մեջ էլ խոր իմաստ է տեսնում: Մարդկանց հոգեկան ցավերն ունեն խոր իմաստ, նրանց միջոցով կարելի է տարբերել ճշմարտությունը ստից, արդարը՝ կեղծից, մաքուրը՝ կեղտից, վսեմը՝ ստորից, արժանավորին՝ ստահակից.

*Ճշմարտությունը որոնելով*

*սովորում ենք,*

*Բարձրանում ենք ցավի միջից... (էջ 64):*

Բանաստեղծուհին էլ անտիկ իմաստասերների նման կրկնում է կյանքի համար այնքան կարևոր ճշմարտությունը՝ հոգու տեսողությունն ամենաառաջնայինն է, հոգու կուրությունը՝ ամենավտանգավորը, և նրանք, ովքեր հեռանում են աստվածային, իրական տեսողությունից, նրանք չեն տեսնում իրական կյանքը: Այդպես է դատում նաև հայ փիլիսոփա պատմիչը 5-րդ դարում. «Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկվում է կատարյալ կյանքից: Լավ է աչքով կույր լինել, քան մտքով

կույր: Ինչպես որ հոգին մեծ է մարմնից, այնպես էլ մտքի տեսողությունը մեծ է մարմինների տեսողությունից»<sup>15</sup>:

Բանաստեղծուհու կարծիքով Աստծու թելադրածը միայն կարող են տեսնել հոգու թռիչք ու հոգու տեսողություն ունեցողները, որովհետև հոգու թռիչք ունեցող մարդիկ հեռու են կյանքի ճահճից ու նրա առաջացրած գարշահոտությունից, կեղտից, մրուրից, նրանք առավել մոտ են աստվածայինին, քան մյուսները.

*Միայն նրանք,  
ովքեր կարող են թռչել,  
Ընդունակ են տեսնելու  
և հասկանալու  
Հոգիները սավառնող (էջ 65):*

Մարդը մեն-մենակ ոչինչ է, նա ամբողջության մի մասնիկն է, մարդու ձգտումն է լինել եզակի մասնիկ՝ չհամահարթվել մյուսների հետ: Տարբեր մարդիկ յուրովի են գիտակցում իրենց հոգեկան տարբերությունը այլ մարդկային էակներից: Առավել օժտվածները այդ զգում են, ինքնագիտակցում և կամենում են իրենց տարբերակված լինելը

---

<sup>15</sup> Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1989, էջ 29:

ուրիշներն էլ գիտակցեն, ընկալեն: Այդ տարբերակվածների շարքում է դնում բանաստեղծուհին նաև իրեն ու խոստովանում է, թե ինքն ունի իր «ուտոպիան», որին հավատում է, որին փաստորեն նվիրված է ողջ կյանքով: Ինքնատարբերակման, ինքնագնահատման այսպիսի օրինակներով հարուստ է համաշխարհային, ինչպես նաև հայ պոեզիան:

Սայաթ-Նովան գրում է.

*Ամեն մարթ չի կանա իւրմի՝ իմ ջուրըն ուրիշ ջրրեն է,  
Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գրրեն է:  
Բունիաթըս ավագ չիմանաս՝ քարափ է, քարուկրրեն է:<sup>16</sup>*

Հովհաննես Թումանյանն էլ դիմելով Արարչին՝ մի շարք քառյակներով հավաստում է իր հանճարի բացառիկ լինելը.

*Ամեն անգամ Քո տրվածից երբ մի բան ես Դու տանում,  
Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ի՛նչքան է դեռ մնում,—  
Զարմանում եմ, թե՛ ո՛վ Շրտայ, ի՛նչքան շատ ես տրվել ինձ,  
Ի՛նչքան շատ եմ դեռ Քեզ տալու, որ միանանք մենք նորից:<sup>17</sup>*

---

<sup>16</sup> Սայաթ-Նովա, Հայերեն..., էջ 20:

<sup>17</sup> Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. II, էջ 50:

Եղիշե Չարենցը ավելի քան համոզված է, որ իր անունը պիտի հնչի դարերում որպես հազարամյա Նաիրիի անգուգական պոետ.

*Ե՛ս եմ հիմա – մի պոետ և իմ անունը –*

*Չարենց –*

*Պիտի վառվի դարերում, պիտի լինի բա՛րձր ու մեծ:*

*Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական*

*Դեպի դարերը նորից՝ դեպի վառվող Ապագան:<sup>18</sup>*

Ալիսիա Կիրակոսյանը Աստծուն ուղղված իր պերճախոս ու հանգամանավի դիմումի մեջ ունի ինքնախարագանման, ինքնագոջման, ապաշխարության պահեր.

*«Քարմա», - մեղանչում – վերածնունդ,*

*«Քարմա», - մեղանչում – գոյություն,*

*ու մահ ու ճակատագիր,*

*ու նորից ծնունդ (էջ 67):*

Մահն ու ճակատագիրը բախվում են բանաստեղծի ներաշխարհում՝ գոյի իմացյալ և ոչ իմացյալ

---

<sup>18</sup> Եղիշե Չարենց, Հատընտիր, Երևան, 1987, էջ 302:

սահմանագծերում: Մարդը իր երկար, թե կարճ կյանքում ունի անձնական պարտություններ, ունի տիրակալի անցողական փառք, գահի ժամանակավոր հարստություն, ժողովրդի իղձերի շտեմարան: Ինքն իրեն համեմատում է առասպելի աշխարհակալ Շամիրամի հետ, միայն թե իր տիրույթները հոգևոր ոլորտներում են, և ինքը մարդու հոգեկան հարստության գանձարան է, կամենում է այն լցնել մնայուն արժեքներով՝ սերնդեսերունդ փոխանցելու նպատակով, դրա համար էլ հանուն սեփական ազգի իր վրա է վերցրել մի մեծ առաքելություն: Բանաստեղծը հավատում է իր ժողովրդի մեծությանը, որը գալիս է զարմանալիորեն հին՝ նախապատմական ժամանակներից: Աստվածաշնչային ջրհեղեղից սկսած գալիս են իր ազգի արմատները և պատմականորեն այնքան հալածված ու ծեծված լինելով հանդերձ, հայերը պահել են իրենց դիմագիծը՝ ազգային կեցվածքի մեջ շատ քիչ բան փոխելով: Հայր խիստ ինքնատիպ է, տարբերակվում է նրա առավելությունը, սակայն այդ առավելությունները խամրում են գորավորի ուժից, մի ուժից, որը հնձանահար է դարձրել իր ժողովրդին, յուրացրել նրա հոգևոր ու նյութական արժեքները՝ չթողնելով, որ հայր ստանա իր ճշգրիտ գնահատականը, խուճապի և նվաստացման չենթարկվի: Ահա ինքը որոշել է պաշտպանել իր ժողովրդի դարավոր իրավունքը, ոտնակոխ արված իրավունքը, այդ

կանի իր միջոցով: Որպես նվիրյալ զավակը այդ հին ժողովրդի՝ հավատում է ինքն իր նախաձեռնությանը. այդ հավատը հզոր է և համոզիչ.

*Ես պարտական եմ ազգին  
ու եկել եմ  
մոռացված այս ժողովրդի  
ճակատագրի հետ կիսվելու  
և աղոթքներով օժելու  
արդարությունն ուշացած (էջ 68):*

Նա լավատեսորեն հավատում է ժողովրդի դատի ճշգրիտ լուծմանը, մարգարեաբար մի նոր արշալույս է սպասում, և դա ասում է ազգի բանաստեղծը, բանաստեղծը ազգի ոգին է, և եթե աննկուն է նա, ապա մարգարեությունը կիրականանա.

*Մի նոր արշալույս  
պիտի հայտարարի  
հին թագավորությունը  
տապալված,  
և ճշմարտությունը  
բացումն է կատարելու*

*անհունի (էջ 71):*

«Հարցազրույց Աստծո հետ» պոեմի երրորդ դրվագը ունի երեք ենթավերնագրեր՝ «Բառ», «Երագ», «Սեր»:

Ամեն մի երևույթի ընկալման մեջ առաջին հերթին կա երևույթի ընկալման արտաքին կողմը, կա նույն երևույթի տարակողմ դիտարկում, կա երևույթի էության մեջ թափանցելու հնարավորություն, կա նաև առավել անտեսանելիի մեջ թափանցելու ճիգը, բայց չէ որ մնում են անիմանալի խորություններ. ահա իմաստասիրական նմանօրինակ հարցադրումներով է փորձում բանաստեղծուհին բացատրել բառի փիլիսոփայական և բանաստեղծական կատեգորիաները:

Բառը նրա կարծիքով հզորագույն զենք է, ամեն ինչ կատարվում է բառով, բառը Աստծունն է, այն միտքն է, և բառով են նման Աստված ու մարդ: Բառով է մարդը աստվածանում, և դրա համար էլ երբեք չի կարելի բառը վաճառքի հանել: Իր խորհրդածությունների այս կետում բանաստեղծուհին վերստին հիշեցնում է Գրիգոր Նարեկացուն՝ նրա Մատյանի 56-րդ դրվագը: Հայ միջնադարի մեծագույն մտածողն ու բանաստեղծը ողբերգություն է ապրում վաճառված ավանդի համար, մի՞ թե ազգային ավանդը կարելի է վաճա-

ռել:<sup>19</sup> Ըստ Գրիգոր Նարեկացու դա մարդու մեծագույն արատներից է և անշուշտ ասվել է իր ժամանակի և բոլոր ժամանակների համար: Բառը հնարավորություն ունի արտահայտելու գիտակցականը և ենթագիտակցականը, որոնց փոխադարձ և հաճախ դժվար ընկալելի կապը հրաշալի է մատուցված Ալիսիա Կիրակոսյանի մի շարք քերթվածներում: Բանաստեղծուհին շեշտում է գրողի և բառի առանձնահատուկ, ոչ սովորական կապը: Բառը պետք է իմաստավորվի իր տեղում, չէ որ բառն աստվածային է, բառն Աստծունն է, մինչդեռ մթնոլորտը լի է փուչ ճառերով ու բառերով, որոնք պայթում են փուչիկների պես: Դրանց կողքին կան բառեր, որոնք բեմեր են լցնում, ու դահլիճը ծփում է բառի ունկնդիր հանդիսատեսից, կան հզոր բառեր, որոնք հոգին են ցնցում, կամ ջերմ բառեր, որոնք հնարավոր չէ լսել առանց արցունքների: Բառը երբեմն կարող է փրկչի դեր կատարել, մարդը կարոտ է այդ բառին, որը իրեն է պետք, մարդկային ամենաթանկ ավանդները հենց փոխանցվում են բառերով:

Կիրակոսյանի կարծիքով բառը ոգեղեն է դառնում, երբ իր ուժով մի մարդու հոգուց անցնում է մյուսին, բացի այդ բառերը ունեն իրենց մեղեդիները, նրանք տխուր են, ուրախ,

---

<sup>19</sup> Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, էջ 335:



կարող են հուսադրել հուսահատներին, գյուտ դառնալ, աշխարհը ցնցել, անգամ անմահությունը հիմնել: Սակայն բառը կարող է նաև սպանել, ինչպես թունավոր դանակը կամ մահացու փամփուշտը: Ինչպես ժողովրդական իմաստությունն է ասում. «Մրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը՝ ոչ», հիշեցնելով, թե որքան զգույշ պետք է վարվել բառի ու խոսքի հետ:

Բանաստեղծուհին հավաստում է՝ բոլոր կենդանիները ծնվում ու մեռնում են, սակայն իմաստուն խոսքը մնում է անմահ՝ դառնալով մարդկային կյանքի և տիեզերքի հավերժական բնակիչը:

Բանաստեղծուհին բացահայտում է, որ բառն ունի իր միջուկը, ուղիղ, վերացական, փիլիսոփայական իմաստները: Բառի կիրառական հնարավորություններն անսահման են, և նրա դերն է նախանշել մարդու մտքի լայնությունը. բառը նաև պետք է ազդարարի մարդու հաղթանակը ժամանակի և տարածության վրա: Մա, ըստ էության, ձոն է՝ ուղղված աստվածային այդ եզակի պարզևին՝ բառին: Ակամայից հիշում ես Մաքս Մյուլլերի ասույթը լեզվի և բառի մասին. «Եթե լեզուն բնության ստեղծագործությունն է, ապա դա բնության ամբողջ ստեղծագործությունը պսակող մի հրաշալիք է, որ պահպանված է եղել մարդու համար, եթե դա մարդկային ստեղծագործության արդյունք է, ապա նա բարձրացնում է ու հասցնում մարդուն աստվածային աստիճանի, եթե Աստծո

պարզն է, ապա դա նրա ամենամեծ ու ամենաթանկագին պարզն է...»:

Պոեմի «Երագ» հատվածը խոսում է մարդու երազելու հատկության մասին. ամեն բանական և ախտածին շեղումներ չունեցող արարած երագում է գտնել իր կեսը՝ լինի կին, թե տղամարդ: Սակայն գտնում են քչերը, ցավալիորեն քչերը: Ու մնում է իր կեսին չգտած մարդու երազը, որը նրան ուղեկցում է ողջ իրական կյանքում՝ մինչև գերեզման:

«Մատյան ողբերգության» գլուխգործոցում տեսականորեն և տարբեր եզրահանգումներով Գրիգոր Նարեկացին բացահայտում է մարդու անսահման կենսասիրությունը և ողբում է նրա անկատարությունը Աստծու համեմատ: Քննելով նույն խնդիրները՝ Ալիսիա Կիրակոսյանը կոնկրետացնում է մարդու կենսասիրության ամեն մի բանագավառ – դրսևորում և տեսանելի ձևով այն տեղավորում մարդկային սիրող զույգի, մայրական սիրո, հայրենասիրության ոլորտներում:

Մարդը շարունակ երագում է՝ քնած, արթուն, աշխատելիս: Կենսասիրությունից բխած երազանքի մասին բացառիկ տպավորիչ է գրել 16-րդ դարի Աղթամարի կաթողիկոս Գրիգորիս Աղթամարցին.

*Գինո՛վ եմ, գինով, հարբեր եմ սիրով,*

*Գինն՝ վ՛ էմ, գինով, ցորեկս արևով,  
Գինն՝ վ՛ էմ, գինով, գիշերս երազով:*<sup>20</sup>

Մարդու կյանքը ինչ-որ առումով երազների ու երազանքների հանրագումար է, որի մեջ խելացի մարդիկ տեղադրում են իրենց գործնական ստեղծագործական նպատակները ևս, և դրանց մի մասը հաճախ մնում է երազի տարածքներում ու իրականության դաշտ չի փոխադրվում:

Դեռ առաջին մարդիկ թերացան Աստծու առաջ և չկարողացան կատարել Արարչի առաջադրած պարտավորվածությունները, և առաջացավ մի դարավոր պարտք, որը չի մարվում և կարծես գնալով մեծանում է. որքան դժվար է պարտքի գիտակցումը և նրանից ձերբազատվելու մշտական մղումը: Բանաստեղծուհին ուզում է մարած տեսնել մարդու պարտքերը, իսկ մարդուն՝ հոգեպես նորոգված:

«Մեր» հատվածը բնականոն ձևով շարունակությունն է Ալիսիա Կիրակոսյանի երիտասարդ տարիների հուզիչ սիրերգության, սակայն այս անգամ սերը այլ բովանդակություն ունի. այն ուղղված է Արարչին, այս կետում նա միջնադարյան քրիստոնեական հոգևոր երգի կրողն է, նրա թարմաշունչ վերածնողը:

---

<sup>20</sup> Գրիգորիս Աղթամարցի, Տաղեր, Երևան, 1984, էջ 105:

Շատ-շատերն են Աստծուն խոստովանում սիրո մասին, բայց կա գոնե մեկը այդ խոստովանողներից, որ վայելած լինի Աստծու հետ անմիջական հանդիպման պահը.

*Լինելու համար*

*պետք է փակեմ աչքերս*

*կամ բացեմ*

*դեպի այն դռները հարյուրավոր,*

*որ գոյություն չունեն*

*քո բնակարանում*

*ու համենայնդեպս*

*միակ մուտքերն են*

*քեզ հետ հանդիպման (էջ 84):*

Ալիսիա Կիրակոսյանի այս ծավալուն պոեմում գերի-րապաշտական մտածողությունը իշխող է, նրա խորհրդածությունները, պատկերները հիշեցնում են Սավադոր Դալիի նկարները, Ինգմար Բերգմանի և Փարաջանովի ֆիլմերը:

Բանաստեղծուհին տեղափոխում է մարդուն իր էության մյուս կողմը. նա միայն հոգի է, հավերժական և այլևս անմեռ, սակայն մինչև տեղափոխելը ինքն այնքան է ուզում հիմա իմանալ, նախապես պարզել, թե ինչպիսին է մյուս կողմն էության: Իսկ որքան մարդիկ են երազել իմանալ

իրենց ապագան. անհաշվելի են գերեզմաններն աշխարհում, նույնպես անհաշվելի են նրանց տերերի հոգիները: Աստվածային սերն ի վերջո տիեզերական երևույթ է և տիեզերական մի հսկա մենքի համար:

Մարդը սիրում է, բայց որքան է նա երագում սիրվել: Բանաստեղծուհին Աստծուն բացատրում է, որ մարդը սիրո կարիք ունի, նա մղվում է, որ իրեն սիրեն, թեպետ հաճախ այդ չի ցուցադրում, այդ սիրով նրա կյանքը նոր իմաստ է ստանում: Սիրո միջոցով հնարավոր է ճանաչել անսահմանությունը, կտրվել առօրեական հոգսերից, կյանքի բարդույթներից.

*Որպեսզի կյանքս*

*իմաստ ունենա,*

*սերն իմս պիտի լինի*

*բացարձակապես (էջ 87):*

Կա նաև սիրո անմահություն, այն արտահայտվում է ըստ բանաստեղծի, Աստծու և մարդու վերջնական միավորմամբ, բայց մի թե այդ հնարավոր է, չէ որ այնքան տարբերություն կա նրանց մեջ: Եվ նա դնում է հավերժական սիրո պահանջը.

*Մի՛ հեռացիր ինձնից:  
Մերն այն, որ գնում ու անցնում է՝  
Մեր չէ, սիրելիս, այլ պատրանք (էջ 86):*

Իսկական սերը Աստծու, թե մարդու նկատմամբ չի ճանաչում ընդհատում, այն հավերժ է: Իրական մարդկային սիրո մեջ էլ կա մղում սիրող էակների հոգեկան միավորման: Երբ ես-ը և դու-ն կամ ես են կամ դու՝ նրանք միասին են, և չկա առաջին կամ երկրորդ դեմքի տարբերակում, կա միայն միասնություն: Հոգեկան այդ երանելի կապը Վահան Տերյանը իր մի բանաստեղծության մեջ հրաշակերտել է և խորագրել «Երկու ուրվական»:

*Ես եմ, դու ես, ես ու դու  
Գիշերում այս դյութական,  
Մենք մենակ ենք՝ ես ու դու,  
Ես էլ դու եմ՝ ես չկամ...  
          Չրկան օրերն ահարկու,  
          Չրկա ժամ ու ժամանակ,  
          Ուրվական ենք մենք երկու  
          Միշտ իրար հետ, միշտ մենակ...*

*Մոռացել ենք անցյալում*

*Տրտունջ, թախիծ ու խավար,  
Մի ուրիշ լույս է ցոլում  
Մեղմ ու անուշ մեզ համար...  
Ես եմ, դու ես, ես ու դու  
Գիշերում այս դյուրական,  
Մենք մենակ ենք՝ ես ու դու,  
Ես էլ դու եմ՝ ես չկամ...<sup>21</sup>*

Այսպես վերերկրային է պատկերում սիրո առեղծվածը նաև Ալիսիա Կիրակոսյանը.

*Ես ու դու՝  
մի հսկա աշխարհ,  
ուր զարկերն էության  
ձուլվում են իրար,  
ուր միտքը կառուցվում է  
անմեղ ու զտված:  
Մրտի մեջ ստեղծվում է  
տարօրինակ թվաբանություն:  
Երկուսը սիրո  
երկու չէ բնավ*

---

<sup>21</sup> Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1960, էջ 163:

*այլ կատարյալ մեկ (էջ 91):*

Բանաստեղծուհին բազմիցս կրկնում է, թե սերը անմահ է, սերը մահից էլ ուժեղ է, նա հաղթում է մահվանը: «Այս գիշեր ես մահվան եմ հաղթել», - հայտարարում է նա:

Ուշագրավ մի վիպական երգ կա հայ ժողովրդական բանահյուսության մեջ, կոչվում է «Ասլան աղա»: Սյուժետային գիծը հեշտ հիշվող է: Ասլան աղան երիտասարդ, գեղեցիկ տղամարդ է, ունի ջահել, չնաշխարհիկ կին՝ Մարգարիտ անունով, ծնողներ, հարստություն, ծառաներ: Վիպական տաղը քրիստոնեական մարդասիրության ոգով է շարադրված: Ասլան աղայի ծառան, որն ուղարկված է գործով, ուշանում է, որովհետև ճանապարհին հանդիպում է մի աղքատ մեռած մարդու և, քահանա կանչելով, թաղել է տալիս նրան: Երբ զայրացած Ասլան աղան իմանում է ծառայի ուշանալու պատճառը, պատերազմ է հայտարարում Գաբրիել հրեշտակապետին և իհարկե պարտվում կովում, օրհասական ընկնում անկողին և խնդրում է Գաբրիել հրեշտակապետին խնայել իր երիտասարդ կյանքը: Հոգեառը դրա դիմաց պահանջում է ծնողների կյանքը, ծնողները հրաժարվում են, և սիրասուն կինը առաջարկում է իր կյանքը: Կատարվում է հրաշքը. ծեր ծնողները մեռնում են, Ասլան աղան առող-



ջանում է և իր սիրելի կնոջ հետ ապրում է երկա՛ր:<sup>22</sup> Այս հե-  
քիաթային վերջը հավերժական սիրուն ուղղված հիմներգն է:

Միրո անմահության ուժը բացառիկ տպավորիչ է բա-  
նաստեղծել Սայաթ-Նովան՝ իր սիրելիին խոստանալով  
անհնարինը՝

*Թեկուզ անմահութիւն ուզիս, սիրով կու ճարիմ քիզ ամա:*<sup>23</sup>

Իր ուրիշ բանաստեղծություններում էլ հաճախ կրկ-  
նում է, թե պատրաստ է մեռնել, միայն իմանա, որ իր սիրելին  
կենդանի կմնա:<sup>24</sup>

Սրանք տղամարդու խոստովանություններ են՝  
ուղղված իր սիրելի կնոջը, իսկ բանաստեղծուհի Ալիսիան  
կին է, այն էլ գեղեցիկ ու զգայուն, և նա խոստովանում է նույ-  
նը ոչ միայն իր անունից, այլ բոլոր սիրող կանանց, որի հա-  
վաքական կերպարը տեսանք Հովսեփ Օրբելու գրառած վի-  
պական տաղում:

Ալիսիա Կիրակոսյանի «Հարցազրույց Աստծո հետ»  
պոեմը ուղղված է աշխարհի բոլոր ժողովուրդներին՝ մեծ, թե  
փոքր, հինավուրց, թե ջահել, ռազմատենչ, թե խաղաղասեր:

---

<sup>22</sup> И.А.Орбели, Избранные труды в двух томах, т. II, Ереван, 2002, с. 169-171.

<sup>23</sup> Սայաթ-Նովա, Հայերեն..., էջ 36:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 34 և այլուր:

Մարդկությունը՝ Աստծու հիմնած այդ մեծ ընտանիքը, խաղաղության կարիք ունի, ապրելու և արարչագործելու պահանջ:

Որքան ժամանակակից է և հրատապ այդ պահանջը ատոմային այս դարերում, երբ ատոմային աղետը կարող է ջնջել երկրի երեսից ընդհանրապես ողջ մարդկությանը՝ իր դարավոր նվաճումներով, իրական կյանքի գեղեցկագույն երազներով:

«Հարցազրույց Աստծո հետ» պոեմի չորրորդ հատվածը բաղկացած է «Խաղաղություն», «Հույս», «Վերջին հատված» մասերից:

«Հարցազրույց Աստծո հետ» պոեմը շեշտված փիլիսոփայական բնույթ ունի, ուր բանաստեղծի խորհրդածությունները պտտվում են գոյի, մարդու, ունայնության, վաղանցիկի, հավերժականի, սիրո, ազգային ճակատագրի, արդարության, մեղսապարտության, երազանքի, կամքի, նպատակի իրագործման, մարդու խիզախման, բանաստեղծության անսահման տարողության, բառի փիլիսոփայական ըմբռնման, կյանքի, մահվան, անմահության խնդիրների շուրջ:

Նա իր վրա է վերցնում տիեզերական վիշտը և մի ընդհանրացված դամբանական խոսք է ուղղում մարդկության

ընդհանուր գոհերին, թե՛ հավատի, թե՛ անկախության համար նահատակվածներին:

Այդ դաժան ու անարդար մահերը պետք է ունենան իրենց խորհուրդը. նրանք, ովքեր նահատակվեցին անժամանակ մահով, իրենց կերպարների տեսիլները տպեցին մարդկության պատմության թռիչքի վրա: Նրանք հեռացան մարմնով՝ մարդկությանը թողնելով իրենց երազները, և նրանցից շատերի երազներն այժմ շրջում են ողջ աշխարհով մեկ, նրանք կարծես երգում են երգեր արդարության համերգներում և կոչում են աշխարհի համայն հոգիներին եղբայրության:

Հայ ազգային հերոսական էպոսի ավարտում էլ՝ «Վերջերգում», կա մեր խաղաղասեր ժողովրդի երազանքը: Նրա ազգային հերոսը, որը համապատասխանում է հեթանոսական ժամանակների Միթրային, հոգնում է անարդարության դեմ մղած իր կռվից ու փակվում է Ագռավաքարում, սակայն փակվում է ժամանակավոր՝ հավատալով, թե հին ու անարդար աշխարհի ավարտը գալու է, և ծնվելու է ազատության, արդարության, բարեկեցության օրը.

*Քանի աշխարք չար է...*

*Մեջ աշխրքին ես չեմ մնա:*

*– Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,*

*Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի,  
Ու գարին էղավ քանց ընկուզ մի,  
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էղտեղեն.<sup>25</sup>*

Միերը մտահոգ է ոչ միայն հայերի բարեկեցության համար, այլև համայն աշխարհի, որովհետև նա երագում է Փրկչի նման, իսկ Փրկիչը կիսատ երագանք չունի, և չկա կատարյալ բարեկեցություն բազում թշվառությունների կողքին, սա ևս մեր էպոսի աստվածային խորհրդի դրսևորումներից է:

Խաղաղությունը Ալիսիա Կիրակոսյանին երևում է միջազգային խորհրդանիշով՝ աղավնու կերպարանքով: Սակայն կոտրված են այդ աղավնու թևերը, և պետք է դրանք բուժել, ու խաղաղության աղավնին կբացի իր թևերը և կսավառնի աշխարհի վրա: Բանաստեղծուհին բացահայտում է, որ պատերազմը հրեշների ոլորտն է, այն կապ չունի Աստծու և աստվածայինի հետ, հատկապես աստվածայինը իր մեջ կրող մարդու հետ: Ուրեմն պետք է պայքարել պատերազմի դեմ, պայքարել համայնաբար, ողջ աշխարհով մեկ, բոլոր ժողովուրդներին խաղաղ ապրելու ի վերուստ շնորհված իրավունքով.

---

<sup>25</sup> Սասունցի Դավիթ, Հայկական հերոսական էպոս, Երևան, 1961, էջ 319-320:

*Հարկ է ռումբերը թաղել  
ու ձերբակալել ընդմարդիկ  
մինչև որ լուծվի*

*ասելությունը հրեշներին:*

*Պայթյուններ:*

*Հրդեհ:*

*Աղաղակներ:*

*Չարիքը՝ սունկի ամպով*

*դժոխքը բարձրացրել է երկինք:*

*Կյանքը ոչ ևս է արդեն*

*Հարկ է*

*բոլորս միասին հեզենք ու հնչենք*

*խ-ա-ղ-ա-ղ-ու-թ-յ-ու-ն բառը,*

*որ դառնա*

*ավելի քան լոկ մի բառ...*

*Լինի*

*համերաշխության մի սրսկում (էջ 98):*

Բանաստեղծուհին խաղաղությունը դիտում է որպես մի բալասան ողջ մարդկության համար, այն աշխարհի երեսից կվերացնի չարիքը, կփարատի մարդկության բանականությունը խաթարող մութը, և կարբի ամեն մի արցունք, կսփռվի ամեն մի քաղցած երեխայի:

Խաղաղությունը հրեշտակների ոլորտն է, և հաղթանակի դափնին պետք է լինի հրեշտակների և ոչ թե հրեշների ձեռքին, պետք է վերանան անիմաստ մահերը, ջարդերը, գաղթերը, պետք է ամրանա մարդուն կյանքի հետ կապող հույսի պարանը:

Բանաստեղծուհու երազանքը ներկայից թևածում է դեպի ապագան, նա նորից իր վառ երևակայությամբ խախտում է ժամանակի և տարածության սահմանները, հանդես է գալիս որպես պայծառատես, նա լսում է երգեր, որոնք լսելի չեն սովորական ականջներին, թարգմանում է խորհրդանիշ խոսքեր, որոնց բանալին իր ձեռքին է: Եվ ինչպես Աստծու երկնային հոգևոր թագավորության մեջ հնչում է հավերժական կյանքի լուսավոր երգը, այնպես ինքը այն հարազատորեն փոխանցում է մարդկանց.

*...Ու թրթիռ առ թրթիռ  
տիեզերքից այն կողմ՝ գնանք  
հավաքելու՝ ամեն մի էակ  
գերագույն մի ցանկության շուրջ  
ու երգենք  
կյանքի երգն ամենահունչ  
և մի նոր տիեզերք կառուցենք  
իբրև համակարգ*

*սիրո (էջ 98):*

Բանաստեղծուհին որպես մոգական խոսքեր, օրհնանքի խոսքեր, փոքրիկ այս հողագնդին մաղթում է իրական կյանքում կառուցել մի նոր համակարգ, որը լինելու է համակարգ սիրո, ժողովուրդների սիրո, մարդկության սիրո: Անշուշտ ամեն քրիստոնյա մտածող ունի սրբազան մատյանում պատգամված Ավետարանական իր ըմբռնումը: Սիրեցեք միմյանց պահանջը բանաստեղծուհին ընկալում է լայն աշխարհատիեզերքի առումով:

«Հույսի» մասին խոհերը վերստին ծավալվում են խորհրդապաշտական տարածականության մեջ: Հույսը մարդու մեծագույն հենարանն է: Հայ նկարիչ Հովսեփ Փուշմանն ունի մի տպավորիչ կտավ, կոչվում է «Հույսը»: Կտավի վրա պատկերված է մի մանկամարդ հայուհի՝ չքնաղ դեմքով, հայկական աղջկական ազգային տարազով, նուրբ և արտահայտիչ դիմագծերով, աստվածային ծով աչքերով, բարակ մատներով բռնած հույսի ծաղիկը՝ բրաբիոնը: Այդ նկարը 1917թ. նոյեմբերի 27-ին նկարչի կինը նվիրել է Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնին՝ ի նշան շնորհակալության այն ջանքերի, որ նախագահ Վիլսոնը օգնել է եղեռնից տառապած Հայաստանին և արժանացել բոլոր վերապրած հայ կանանց կողմից ուղղված այդ սրտաբուխ նվերին:

Հույսը միշտ ուղեկցել է հային, հույսը ուղեկցում է մարդուն և պետք է ջանալ, որ չկորչի հույսը, ասում է Բանաստեղծուհին, ապա թե ոչ, այդ կլինի մարդկության աղետներից ամենասարսափելին, այլապես առանց հույսի անգամ Աստծուն դժվար է ապավինել, անհնար է թռչել կյանքի խորխորատների վրայից և չգահավիժել անդունդը.

*Դու իմաց արա մեզ,  
թե չարիքն անտեսելու ենք,  
թե թռչելու ենք  
ավերի ու խելագարումի վրայից  
և ստանձնելու ենք սերն իսկական (էջ 100):*

Հավատը, սերը, հույսը պահապաններ են կյանքում, սակայն Աստված պետք է ամուր պահի դրանց հիմքերը, այլապես կյանքի զգացական տիղմը կարող է կլանել նրանց: Առանց հույսի մարդու մարմինը արագ է ծերանում, հույսը ապագային ուղղված հենարանն է, հույսը ժամանակավորապես հետ է վանում մարմնի մահը, թողնում է զգալու կյանքի քաղցրությունը, որն այնքան սիրելի է ամեն մարդու համար:

Ալիսիա Կիրակոսյանը քրիստոնեական կրոնի վարդապետությունը, որում շատ բան կա հին աշխարհի իմաս-



տությունից, կոնկրետացնում է, տեսանելի դարձնում կյանքի պատկերներով:

Մարդը միշտ երագում է գալիք օրերի բարօրության, այլապես նա կխեղդվի հուսահատության մեջ, որովհետև մարդու վիշտը հաճախ այնքան է մեծ, որ արցունքն անգամ չի կարող արտահայտել այն.

*Առանց այդ խոր գիտակցության  
գալիք լավ օրերի՝  
անքնությունս եմ արագացնում  
օրատեսերեր հալեցնելով  
սաստիկ անհամբերությամբ  
սպասելով այն պատասխաններին,  
որ կարող են թշվառությունը ջնջել  
ու նրանով ջնջել ցավն այն,  
որ չափազանց մեծ է  
արտասովելու համար (էջ 102):*

Պոեմի ներքոհիշյալ տողերը ակամայից հիշեցնում են Սավադոր Դալիի հայտնի նկարը՝ ժամացույցը, որ կտորի նման ծավվել է ժամանակի հեղիեղուկ հոսքից.

*Հետո ուզում եմ ձևավորել*

*առանց ժամանակների մի ժամացույց,  
որ կարողանամ  
այդ ծաղիկների բույրը շնչել  
առանց շտապելու (էջ 103):*

Հար և նման Գրիգոր Նարեկացու Մատյանին, Ալիսիա Կիրակոսյանը մարդու անունից Աստծուն պահանջներ է ներկայացնում: Արարիչը պետք է խոստանա, որ մեր պղծված հուզումները պիտի անհետանան դժոխային պահեստներից՝ դեպի կյանքի խաղաղ հանգրվանը, դեպի ամառային աստղազարդ խաղաղ գիշերը, լիալուսնով ու զմայլելի երաժշտությամբ:

Բանաստեղծուհու հավաստմամբ իրավը, ճշմարտությունը կա երևի բոլորի սրտում, այն ծնվում է Աստծու կամքով, ինչպես վկայում է ավետարանական վարդապետությունը: Հույսը նաև մարդուն ներշնչում է շարժման, ձգտման, ինքնակատարելագործման, շարունակ նորոգվելու բուժիչ ցանկությունը: Հոգու ինքնամաքումը, Աստծու հետ կապվելու, հավերժանալու միակ և ճշգրիտ ճանապարհն է:

Պոեմի այս հատվածը ավարտվում է բոլոր բարի մարդկանց ուղղված բանաստեղծուհու օրհնանքով: Երազային թող լինի ապագան և հիպնոսված մոտենա ներկային,

թող բոլոր բարի և արդար մարդիկ թեևն հրեշտակների հետ,  
թռչե՛ն, թռչե՛ն առ Աստված...

«Հարցազրույց Աստծո հետ» պոեմն ավարտվում է «Վերջին հատված» խորագրով: Այս բաժնում Ալիսիա Կիրակոսյանը քննում է կյանքի և մահվան, հոգու և մարմնի խնդիրներ: Նա ուզում է բացատրել մարդկանց կյանքի սրբազան օրենքները, որոնք հեռու են պատեհապաշտությունից. չնայած մարդը ժամանակավոր է իր մարմնական կյանքով, սակայն նա միայն իր մասին մտածելու իրավունք չունի, նա պետք է վերանա իրենից, իր մարմնից.

*Մարմնի հալքը  
արգելք չի լինելու  
անավարտ հոգիներին,  
որ իդձեր կտակեն  
ու մեծացնեն  
ու սփռեն  
տիեզերքով մեկ (էջ 109):*

Ֆրանսիացի գրող Թալի դը Մոլենն ունի մի փոքրիկ վիպակ «Իմ անունն է Արոկիամարի», նրանում կրիշնայական կրոնի իմաստությունը իր մեջ ամբարած ծերունին ութամյա աղջնակին բարության դասեր է տալիս, միաժամա-

նակ հիշեցնում. «Մի՞ թե ես քեզ չեմ սովորեցրել նայել, անգամ քեզ, Բարձրից, քան այն տեղից, ուր գտնվում է քո գլուխը»<sup>26</sup>:

Ալիսիա Կիրակոսյանն էլ պատգամում է նույնը, որովհետև այդ ճանապարհով աշխարհը կնորանա, կբացվեն խաղաղ արշալույսներ, իր ժողովրդի ճակատագիրը կնորոգվի ու կհնչեն նոր զանգակներ, որոնք կազդարարեն իր ազգի նոր արշալույսը, ու հայերը համայն ազգով՝ իրենց իրավունքների ուժով, կփոխեն նույնիսկ աշխարհի աղճատված քարտեզը՝ վերագտնելու իրենց արդար իրավունքները:

Պոեմի վերջում Բանաստեղծը վերստին խոսում է կյանքի խորհրդի մասին, մարդը ոչինչ չի տանում իր հետ, սակայն թողնում է իր վաստակը, իսկ Բանաստեղծն, իհարկե, իր քերթվածները, իրենից մնացած թանկ հիշողություններն ապրողների հուշերում, որոնք նրան իրավունք են տալու գումարվելու տիեզերքի անմահությունը:

Լայնսիրտ պետք է լինի մարդը, նա մտահոգ պիտի լինի իր Բարի անվան համար, նա պետք է ների բոլոր նրանց, ովքեր ցավ են պատճառել իրեն, պետք է ներում հայցի նրանցից, ում գուցե ինքն է ցավ պատճառել:

*Մեկնում եմ առանց ռիսի՝*

---

<sup>26</sup> Thalie de Molènes, Je m'appelle Arokiamari, Paris, 1980, p. 58.

*խաղաղությամբ՝  
ներելով նրանց,  
որ տառապանքիս ակունք դարձան  
և ներողություն խնդրելով  
նրանց, որոնց ցավ պատճառեցի (Էջ 112):*

Մեծն Թումանյանն էլ իր քառյակներում խոստովանում էր.

*Ի՛նչքան ցավ եմ տեսել ես,  
Նենգ ու դավ եմ տեսել ես,  
Տարել, սիրել ու ներել,  
Վատը՝ լավ եմ տեսել ես:<sup>27</sup>*

Բանաստեղծուհին հանդուգն է իր ինքնարժևորման մեջ: Նա համոզված է՝ թեպետ Աստված անհասանելի է ու անիմանալի, բայց ինքը գիտի, որ մի սովորական մահկանացու չէ, այլ մի հավերժական հյուլե է՝ տիեզերքին ձուլված:

Բանաստեղծը կենդանի է, քանի մարդկանց համար կենդանի են նրա գրածները, նրա հիշատակը, նրա ներշնչումը:

---

<sup>27</sup> Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. II, էջ 21:

Այս համոզմունքն ուներ նաև հանճարեղ Պետրոս Դուրյանը՝ քսանամյա վաղամեռիկ բանաստեղծը, երբ «Իմ մահը» բանաստեղծությունն ավարտում է իր հիշատակի անմահությունը գիտակցելով.

*Իսկ աննշան եթե մընա  
Երկրի մեկ խորշն հողակույտն իմ,  
Եվ հիշատակս ալ թառամի,  
Ո՛հ, այն ատեն ես կը մեռնիմ:*

Ալիսիա Կիրակոսյանը վերստին հավաստում է Արիստոտելի ժամանակներից եկող այն եզրահանգումը, թե բանաստեղծությունը ճշմարտության որոնման մի ուղի է, որով ընթանում են շատերը:

Ճշմարտությունը խորհրդանիշ ունի լույսը, լույսը նաև Աստծու խորհրդանիշն է թե հեթանոսական ժամանակներում, թե քրիստոնեության օրերին: Բավական է հիշել 12-րդ դարի հայ բանաստեղծ Ներսես Շնորհալու «Առաւօտ լուսոյ» շարականը.

*Առաւօ՛տ լուսոյ  
Արեգակն արդար*

*Առ իս լոյս ծագեալ.<sup>28</sup>*

Ուրեմն Աստված լոյս է, և դա կրկնվում է հայ միջնադարյան բանաստեղծության մեջ բազմիցս: Բավական է հիշել միայն Կոստանդին Երզնկացու Արեգակի և Լույսի բանքերը, որոնք մեծ մասամբ այլաբանական բնույթ ունեն, և Կոստանդին Երզնկացին շարունակ զգուշացնում է, թե չպետք է դրանք ուղղակի իմաստով հասկանալ, այլ փոխաբերական. այն առակախոսություն է, և Արեգակ նշանակում է Քրիստոս, ու ինքը երագում է՝ մասն ունենալ այդ լույսի, ինքը կամովին ծառայագրվել է Լույսին, ու իր մարմնական մահն անգամ կուզեր զգալ արշալույսին.

*Թէ ինձ կեանք կամ խընդութիւն  
բաժին կայ ի դուռն ի սիրուն,  
Մէկ պահու սէրն ի սրբոտ՝  
թող լինի ինձ յառաւօտուն.  
Թէ հոգի տալ կու պիտի,  
կամ թէ հոգի հանել մարդուն,  
Նա յօժար եմ ես հոգով՝  
զհոգիս փոխան տալ իմ սիրուն.<sup>29</sup>*

---

<sup>28</sup> Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 18:

<sup>29</sup> Կոստանդին Երզնկացի, Լոյսն առաւօտուն, էջ 128:

Ալիսիա Կիրակոսյանի կարծիքով էլ Աստված Լույս է, Լույսի մասնիկն է նաև քանաստեղծը, որը ձգտում է միանալ աստվածային էությանը: Այս կետում էլ քանաստեղծուհին իր նախնիների ավանդույթի շարունակողն է, իր արմատի ծլար-ձակումն է և Լույսի որոնման ճամփորդն է, ինչպես իր նախնիները.

*Թերևս հիմա*

*կարողանամ հասկանալ*

*անբացատրելին*

*ու դառնալ*

*լույսի մասնիկն այն,*

*որ կարող է*

*ճշմարիտը որսալ (էջ 115):*



## ԱՆԴԵՆԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Այս գերիրապաշտական պոեմն ունի «Տրամախոսված բանաստեղծություն» ենթախորագիրը, միաժամանակ բաժանված է երկու հատվածի՝ «Սեր Բուենոս Այրեսում» և «Հիմնարկներ Աստծո համար»:

Անդենական գրույցները հին ծագում ունեն, նրանց կարելի է հանդիպել անտիկ դիցաբանության, գրադաշտական կրոնի մատյաններում, տարբեր ժողովուրդների միջնադարյան քրիստոնեական գրականության մեջ, արդի բազմալեզու գրականություններում: Անդենական գրույցների առումով հարուստ է նաև հին և միջնադարյան գրականությունը:

Հին պարսկական գրականությունից պահպանվել է «Արտա Վիրապ նամակը», որը պատկերում է անդրաշխարհի երևակայական պատկերը, այն իր բովանդակությամբ զուգահեռվել է Դանթեի «Աստվածային կատակերգության» հետ:<sup>1</sup> Անդրաշխարհի հետ կապ ունեն նաև մեր գրականության մեջ տեսիլային որոշ գրական դրսևորումներ, որոնցից մեկն է Գրիգոր Լուսավորչի տեսիլը:<sup>2</sup> Հայ միջնադարում գրվել են

---

<sup>1</sup> Արտա Վիրապ Նամակ, Յուշտի Ֆրիան, Երևան, 1958:

<sup>2</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 3206, թերթ 50բ:

նան ծավալուն գործեր, որոնք պատկերում են անդրաշխարհը: Դրանցից ամենակարևորը 15-րդ դարի քանաստեղծ Առաքել Սյունեցու «Աղամգիրքն» է:<sup>3</sup>

Ալիսիա Կիրակոսյանի անդենական պատկերները ներհայեցողական միտվածություն ունեն: Բանաստեղծուհին տեղափոխվում է մի աշխարհ, ուր միայն սերն է թագավորում և, իհարկե, խաղաղությունը, նաև աննյութականը: Նրա պատկերած անդենում այլևս չկան մարմնական ցանկություններ, սիրելի կերակուրներ, ցանկալի պարեր և երաժշտություն: Այն մի աշխարհ է առանց աշխարհի: Անդենական զրույցների կենտրոնում քանաստեղծուհին է՝ հենց իր՝ Ալիսիա անունով: Նա արդեն մեռած է հողի օրենքով և միայն ուրվական է, միայն հոգի: Նա պատկերացնում է իր հոգու մարմնավոր ծնունդը: Երբ տիեզերքից իր ոգին որոշում է ծնվել, ապա ընտրում է մի մոր, որն ազգությամբ հայ է, իր ոգին ինքնական ցանկանում է ծնվել որպես հայ:

Ահա այդպես Բուենոս Այրես քաղաքում ծնվում է Ալիսիան և ապրում է իր սիրելի քաղաքում: Իրական կյանքին զուգորդվում է անդենականը, և լսվում է ձայն, անդենական մի ձայն, այն Աստծու ձայնն է.

---

<sup>3</sup> Առաքել Սյունեցի, Աղամգիրք, աշխատասիրությամբ Ա.Մադոյանի, Երևան, 1989:

*Ալիսիա...*

*Ո՞ր ես դու:*

*Չգիտեմ,*

*բայց մենակ եմ՝*

*մենակ,*

*մենակ,*

*մենակ,*

*մենակ,*

*կորչում եմ քաղաքում (էջ 269):*

Պոեմում դրսևորված է աստվածային սիրո մի նոր մեկնաբանում: Լույսի և մութի, վերստին սպասվող լույսի և սիրո մի անհանգիստ մարգարեություն է այն՝ հարցականներով ու խորհրդանիշերով լի: Անդենում կորչում է եսը, կորչում է մարդու անունը, որով մեկ մարմինը ջոկվում է մյուսից, մեկ մարդու տեսքը զատվում է մյուսից, բոլորից:

Այս խորհրդածություններից գումարվում է «Հիմնարկներ Աստծո համար» հատվածի փիլիսոփայությունը: Այստեղ բաղդատվում են ժամանակի, տարածության, թվի հասկացությունները, և թիվը դառնում է գոյության գիտակցումը: Բացարձակ Աստծու կողքին այլևս անգոր են

տարածությունն ու ժամանակը, և նրանց տիեզերական ու  
աստվածային չափանիշներն անհասանելի են մարդուն:

Անդենական զրույցների ընթացքում կան իմաստուն  
եզրահանգումներ, որոնք միայն բանաստեղծուհունն են.

*Հաճախ*

*երազ ունենալու համար*

*հարկ է մի կարգ երազներ փշրել:*

*...Ճշմարտությունը*

*Ճշմարիտ է լինում,*

*երբ կաղապարից*

*դուրս է նետվում:*

*Գեղեցկությունը*

*գեղեցիկ է լինում,*

*երբ օրենքներից դուրս է աճում:*

*Խաղաղությունը*

*խաղաղ է լինում,*

*երբ առօրեայից*

*դուրս է շնչում:*

*Բարոյականը*

*բարոյական է լինում,*

*երբ սովորամոլությունից*

*դուրս է կշռվում (էջ 84):*

«Անդենական գրույցներում» վերստին մղում կա մարդուն պոկել իր հողեղեն էությունից, նրա հոգուն թռիչքի թևեր տալ՝ կյանքի սովերից երկնքի լույսում սավառնելու համար:

Մարդու վերածնունդը փիլիսոփայական պոեզիայի առանցքն է, այն նաև կիզակետն է Ալիսիա Կիրակոսյանի անդենական գրույցների: Այս գրույցներից նորից ու նորից երևում է, թե որքան իրական կյանքը կարիք ունի մաքրվելու, որքան մարդը դեռևս պիտի ձգտի հոգեպես կատարելագործվելու:

Պոեմի շարահյուսական ընթացքում առկա է աշխարհաստեղծման առասպելի պարզ կրկնությունը՝ Հին կտակարանի «Ծննդոց» գրքից: Անդենից այսաշխարհ է գալիս Բանաստեղծուհու մտքի թռիչքը՝ աշխարհաստեղծման օրից շատ ու շատ այս կողմ՝ 1968 թվական, և կոնկրետանում է վայրը՝ Բուենոս Այրես քաղաք: Ուրեմն կոնկրետացված են և՛ ժամանակը, և՛ տարածությունը, և՛ մարմին ստացած անձը, նրա ոգին, գոյը իր մարմնով մահկանացու:

«Անդենական գրույցներ» պոեմն ավարտվում է Բանաստեղծուհու այն եզրահանգմամբ, որ ճշմարիտ Բանաստեղծները Աստծու ներկայացուցիչներն են երկրի վրա, նրանք հար և նման են Աստծուն: Նորպլատոնական փիլիսոփայությունը ներկայացնող Դավիթ Անհաղթը, որը 5-6-րդ

դարերի բարոյագիտական իմաստասիրության ամենակարկառուն ներկայացուցիչն է, իր «Փիլիսոփայության սահմանները» երկում հավաստում է, թե փիլիսոփան ըստ մարդկային կարողության պետք է նմանվի Աստծուն. «Սրանից հետո Պլատոնը բարձրանում է դեպի հեռավոր նպատակը, և ոչ թե սովորական հեռավոր, այլ ամենահեռավոր, որից այն կողմ այլևս ոչինչ չկա, որովհետև նա սահմանում է փիլիսոփայությունը որպես աստվածանմանություն, ըստ մարդկային կարողության: Որովհետև էլ ի՞նչ կարող է լինել ավելի երանելի և վայելուչ նպատակ, քան ըստ մարդկային կարողության Աստծուն նմանվելը»<sup>4</sup>:

Մարդու՝ դեպի Աստված ձգտելը, ըստ Բանաստեղծուհու, նույնպես հավերժական է և այդ ձգտումը արտահայտվել է նյութականացված ձևերով՝ տաճարներ, եկեղեցիներ: Եվ ինչպես տաճարներն ու եկեղեցիները կառուցվել են հանուն Աստծու, այնպես էլ Բանաստեղծները ծնվում են հանուն Աստծու և աստվածային կամքով, և նրանք մարդկանց բերում են աստվածային ոգին ու սերը.

### *Ոգուց:*

---

<sup>4</sup> Դավիթ Անհաղթ, Երկեր, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ս.Ս.Արևշատյանի, Երևան, 1980, էջ 80:

*Միբուց:*

*Նա հիմնարկներ կառուցեց*

*հոգիներում՝*

*նոր ծնված ոգուց,*

*նոր ծնված սիբուց:*

# Մ Ի Բ Ո Մ Ե Կ Ո Ւ Ի Կ Ե Ս Հ Ա Ջ Ա Բ Ա Մ Յ Ա Կ Ը

Միրո քանալին ունեն բոլոր այն քանաստեղծները, որոնք միաժամանակ այդ հավերժական զգացմունքի արարիչներ են թվում ու նրա առեղծվածային խորհրդի փիլիսոփաներն են: Ահա այսօրինակ քանաստեղծների տիեզերական անսահմանության մեջ մշտապես իր շողարձակող աստղն ունի Ալիսիա Կիրակոսյանը, որի նոր դրսևորումն է քանաստեղծուհու «Միրո մեկ ու կես հազարամյակ» նոր հայերեն ժողովածուն:

Այս ժողովածուն լիովին նորաշունչ է. «Ժողովողի» ոգով քանաստեղծուհին էլ հավատում է, թե այս լուսնի տակ ոչինչ նոր չէ, ինչպես նաև սերը: Այդ նոր թվացող սերը այնքան նման է վաղնջական այն ժամանակներին, երբ լուսինը Աստծու տիրույթներում էր միայն ու անհասանելի, իսկ հիմա՝ հթիռների դարում, սերը հին բովանդակությամբ վերածնվում է՝ ավետելով, թե այն միշտ երիտասարդ է և կապ չունի աշխարհի արտաքին փոփոխությունների և մարդու նորօրյա նվաճումների հետ: Բանաստեղծուհու կարծիքով սիրո խորհուրդը նույնն է, և անշուշտ մարդիկ, տարբեր ան-



հատներ դարերի երկար բաժանումից հետո նույնն են զգում, և այդ նույնը զարմանալիորեն անգուգական նորովի է շարունակ և թարմացած:

Զարմանալի դիտողականությամբ բանաստեղծուհին գծում է սիրո էվոյուցիան, որն ինչ-որ առումով վերադարձ է դեպի սիրո սկիզբը, և որ ուշագրավ է, ամեն մի անհատ և գուցե ավելին, ամեն մի սիրո գույգ այդ զգացման հնամյա պատմության մեջ գրանցում է իր էջերը: Ի վերջո, ըստ նրա, իսկական սերը.

*Անարատ ու մեղավոր  
հեթանոս մի պաշտամունք է:*

Սիրո հիմնական հատկանիշը մարդու էությանը ձուլվելն է, որովհետև սերը արյան նման պտտվում է մարմնի բոլոր մասերում՝ հոգուն հանձնելով սիրո մշտական թանկագին բեռը: «Ճշմարտության ջրվեժ կա» հյուսվածքում բանաստեղծուհու խոհերը պատմում են սիրո նոր հրաշքների մասին: Նա բացատրում է, թե ինչ հրաշք է մարդկային հույսը, այն անվերջանալի է, այն բոլորինն է, սակայն հույսը լրացյալն է սիրո, առանց հույսի երբեք և ոչ ոք չի սիրում, ու հրաշքի օրենքով մարդը երագում է հույսի իրականացումը, որ պահված է իբրև սրբազան գաղտնիք, սակայն մի օր ի տես ամենեցուն թող, որ

*Մի հողմապտույտ  
օդն է թռցնում  
պահ դրված հույսերը,  
և ձյան փոխարեն  
հույսն է տեղում  
աշխարհի վրա,  
որ փշրի վերջնականապես  
իմ մենության տիպարը  
կատարյալ:*

Ալիսիան պեղում է մարդու ձգտումների հնարավոր աշխարհը և տեսնում է, որ մարդը ձգտում է անկարելիին: Նա շատ լավ գիտի, որ իր ձգտումը անկարելի ոլորտից է, բայց մղվում է, աստվածային էություն է ուզում տեսնել իր մեջ, սակայն այդ անկարելին հաճախ նրան տանում է դեպի մահվան ուղին:

Ալիսիայի բանաստեղծություններում կա մարդու հանելուկային էության բացահայտումը: Սիրո առեղծվածային կողմերից մեկն էլ այն է, որ հաճախ սիրո փոխարեն մարդը սիրում է իրեն սիրելու, իրեն նվիրվելու կերպը:

Ինչպես Գրիգոր Նարեկացու «Մատյանը» ինքնակենսագրության ձևով ընդունելը անհնար է, այնպես էլ Ալիսիա Կիրակոսյանի սիրո երգերում կան զգացումներ, որոնք անձ-

նական ներկայանալով՝ հեռու են կոնկրետացումից, քանաստեղծուհու եսի հետ նույնանալուց: Պարզապես մեծերն ունեն կյանքի ճանաչողության ի վերուստ ծրագրված մի դաշտ, ուր ծնվում է ամենատեսությունը, ունեն զգացողության մի կերպ, որի մեջ հավաքական են բոլորը, առանձին ընկալվելու պատրանքն ունենալով, խոսում են իրենց մասին, բայց դու տեսնում ես քեզ ու միայն քեզ, եթե պարզունակ ընթերցող չես ու հաղորդակիցն ես մարդկային ոգու գաղտնիքներին ու գաղտնաբաններին:

Սիրո հեքիաթը շարունակվում է: Իրոք, փոքր-ինչ երջանիկ լինելու համար սերը պետք է ընկալել իբրև հեքիաթ, որպեսզի ըմբռնես նրա գոյության հետ կապված ակնկալիքները:

Այս ժողովածուի մեջ Ալիսիան բնութագրում է սիրո հրաժեշտը, վերստին հանդիպումը, մոռացումը, մարդկային էության անմնացորդ նվիրումը. սրանք էջեր են, որոնք թերթվում են քանաստեղծուհու խոհերի հետ հյուսվելով, այդ սիրո անվերջանալի մի հեքիաթ է՝ բարու և հավերժության հաղթանակի լույսերով լի: Նրա կարծիքով բաժանման մեջ անգամ կա մի խորհուրդ. այդ պահից գուցե ծնվելու է մեկ ուրիշը, գուցե այն լրացնելու է կարևոր մի բաց, որն անհրաժեշտ է լցնել այդ բաժանմամբ: Ալիսիայի այս ժողովածուն մի նրբահյուս հեքիաթ է, փոքր-ինչ շղարշված, երևութական, վերնականների

երգեցողություն կա նրանում, և եթե անտիկ աշխարհում ու միջնադարում բանաստեղծությունը երգից անջատ չկար, ապա Ալիսիայի սիրերգությունը հոգևոր փիլիսոփայական հնչերանգով լսվող մի եզակի մեղեդի է, ուր մահը անհետանում է հավերժի առաջ, ուր մարմինն ազատված է երկրային հոգսերից, բայց պահպանել է ապրելու իր կենսասիրությունը, գեղեցիկ սիրելու հրաշապատումը: Այս քերթվածներից երևում է, որ սերը մարմնական լինելով նաև հոգևոր երևույթ է, այն տեղափոխում է մարդուն դեպի վերին ոլորտները, ուր գուցե սիրահարների կողքին անտես սուրում են քերովբեները՝ հաստատելով կարծես, թե սիրահարները կտրվում են իրական կյանքից և հիմնում են իրենց ժամանակը:

Իսկ որքան հզոր է կարոտի շենքը, ավելին՝ այն վերածվում է կոթողի.

*Լսում եմ այն խոսքերը քո, որ  
քանդեցին  
պաշտպանողությանս  
պատերը հաստատուն  
և որ զարկ առ զարկ  
կառուցում են  
հսկա մի կոթող կարոտի:*

Կարոտը նույնպես հավերժական ուղեկիցն է սիրո, և ամեն մարդ ինքն է կառուցում իր կարոտի ամրոցը: Կարոտը վեր է ժամանակից ու տարածությունից, այն նույնպես հավերժական է այնքան, քանի կա մարդը, և հաճախ տիեզերքի գաղտնիքների նման անհասանելի են կարոտի գաղտնիքները:

Անվարան կարող ենք ասել, որ գերիրապաշտական երանգավորում կա Ալիսիայի այս ժողովածուի մեջ:

«Սիրո մեկ ու կես հազարամյակ» գիրքը սիրո բազմամտիվ ու բազմաձայն մի օրհներգություն է: Ալիսիա Կիրակոսյանի մեկնաբանումների զարմանահրաշ գանձարանը, սովորական մտքին ու ականջին փոքր-ինչ անհասկանալի է, բայց և անսահման դյուրօրիչ մեղեդիներով հմայող:

## Խ Ա Ղ Ա Ղ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ք Վ Ա Ն Տ Ա Յ Ի Ն

Իր կյանքի վերջին տարիներին Ալիսիա Կիրակոսյանը սեփական բանաստեղծությունները հայերին ու աշխարհի ժողովուրդներին ներկայացնում էր երեք լեզուներով՝ իսպաներեն, անգլերեն և հայերեն: Այդ լեզվափոխությունը կատարում էր հենց ինքը՝ սեփական խոսքի ուժը գիտակցելով: Ի դեպ, նա խոսքի մեջ տեսնում էր ներգործող մեծ ուժ, խոսքի

մեջ զգում էր մարդու և տիեզերքի կապ: Նրա վերջին բանաստեղծություններում և խոհերում աստվածային սիրո կողքին շարունակ դրվում է խաղաղության պահանջը: Հայ միջնադարի մտածողներն էլ համոզված էին, թե աստվածային պատվիրաններից հեռանալը հանգեցնում է բռնության ու պատերազմների, որը Գերագույն արդարության միջոցով պատժում է մարդկանց: «Խաղաղություն Քվանտային» շարքի համար գրված «Երկու խոսքում» բանաստեղծուհին գրում է. «Երկրագնդի վրա չի պատահում մի բան, որ իր բախումը և արձագանքը չունենա տիեզերքի մեջ ու մեզ չվերադառնա բազմապատկված ուժով:

Բումերանգ: Գիտությունը կոչում է պատճառ և արդյունք հարաբերություն, արևելյան փիլիսոփայությունը քարմա է անվանում նրան, ամերիկյան ժողովրդական իմաստությունն ասում է. «Այն, ինչ որ գնում է, վերադառնում է», և Սուրբ Ավետարանը հաստատում է. «Ինչ որ ցանենք, այն կհնձենք»<sup>1</sup>:

Հետո նա հստակորեն բացատրում է երևույթի իմաստը: Մարդկային հուզումները ազդում են մարմնի բջիջների վրա: Բջիջների միջոցով փոփոխված զգացումները փոխանցվում են ուրիշներին, և նորից տեղի են ունենում փոփոխու-

---

<sup>1</sup> Ալիսիա Կիրակոսյան, Ամբողջական երկեր, Երևան, 2005, էջ 457:

թյուններ: Մարդու «եսի ուժը» կապվում է «նոր եսի» ուժի հետ և առաջ է բերում շղթայական հակազդեցություն:

Ալիսիան անգլերեն TEIWAS factor-ը, որը բաղկացած է հետևյալ բառերից՝ Thoughts, Emotions, Words, Actions and Sounds, հայերեն դարձնում է հետևյալ հապավումը՝ «ՄՁԲԱՁ ֆակտոր»՝ Մտքեր, Չգացումներ, Բառեր, Արարքներ ու Չայներ:<sup>2</sup>

Միկրոկոսմի ու մակրոկոսմի, մարդու և տիեզերքի փոխկապակցությունը բանաստեղծին հանգեցնում է XX դարի չորս նշանավոր մարդկանց գործի և էության մեկնաբանմանը: Այդ հզոր անհատներն են Մահաթմա Գանդիին (1869-1948), Մարտին Լուտեր Քինգը (1929-1968), Մայր Թերեզան (1910-1997), Նելսոն Մանդելան (1918-2013): Այս նշանավոր մարդկանցից վերջին երեքը արժանացել են Նոբելյան մրցանակի՝ աշխարհում խաղաղությունը պաշտպանելու համար:

Մահաթմա Գանդիին նվիրված բանաստեղծության սկիզբը ազդարարում է, թե խոսքը խորապես հավատացյալ գործչի մասին է.

*Ինչպես մի սուրբ  
որ քայլում է*

---

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 458:

### *ջրերի վրա...<sup>3</sup>*

Մահաթմա Գնադին, իրոք, եղել է արտասովոր մարդ: Կենսակերպով խորապես ասկետ, նա հզոր հոգեկան ուժ է ունեցել: Մահաթմա հենց նշանակում է «Մեծ հոգի»: Ովքեր եղել են աշխարհի մումե արձանների տարբեր թանգարաններում, տեսած կլինեն նաև Մահաթմա Գնադիի մումե արձանը՝ փոքրամարմին, նիհար ու ազգային սպիտակ տարագով: Գնադին մեծ հեղափոխական էր, և Հնդկաստանը Մեծ Բրիտանիայի գերիշխանությունից ազատողն ու Հնդկաստանում իրավական դաշտը ուժեղացնողը: Հայտնի է, որ նրան շատ շուտ են ամուսնացրել՝ 13-14 տարեկանում, և նրա առաջին բարեփոխումներից էր Հնդկաստանում վաղ ամուսնությունը արգելելը: Նա փայլուն գիտելիքներ է ցուցաբերել, երբ Լոնդոնում սովորում էր իրավաբանություն, ու Անգլիայի թագուհին այցելել է այդ արտասովոր հնդիկ ուսանողի շատ համեստ կացարանը, ուր նա սնվում էր իր խնամած այծի կաթով:

Գնադին հսկայական առաջադիմական գործ է կատարել Հարավային Աֆրիկայի սևամորթների իրավունքները պաշտպանելու գործում: Նա ջանքեր չի խնայել հարթելու կրոնական այն հակասությունները, որոնք կային Հնդկաս-

---

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 461: Այսուհետև այս գրքից բերվող մեջբերման էջերը կնշվեն վերևում – Ա. Դ.:



տանի մահմեդականների և հնդկական կրոնները պաշտողների միջև: Տարել է բանտի, հալածանքի, գրկանքների հարվածները և ի վերջո սպանվել է 1948 թվականի մոլեռանդ մեկի արձակած երեք գնդակներից: Անշուշտ այս և այլ մանրամասներ Գանդիի կյանքի վերաբերյալ հայտնի էին բանաստեղծուհուն, սակայն նրա հետաքրքրողը իր սիրելի կերպարի հոգու արիությունն էր ու աստվածային առաքելությունը:

Ալիսիան Գանդիին համարում է աստվածային առաքյալ, որն անսահման նվիրված էր մարդ արարածին ու հոգեպես հարազատ է իրեն, օգնում է տանելու կյանքի դժվարությունները և հերթական թռիչքի պատրաստվելու: Դրա համար էլ խոստովանում է.

*Ինչպես*

*ճշմարտության հրեշտակ*

*քո նայվածքը*

*արձագանքում է*

*սրտիս մեջ (էջ 462):*

Մարտին Լուտեր Քինգը Բոստոնի համալսարանի դոկտոր էր, և ռասայականության դեմ մարտնչող: Նա սպանվեց 1968-ին՝ ցնցելով ողջ առաջադեմ մարդկությանը:

Հոլոքոստի վերապրած բանաստեղծ ու գրող Սոնյա Վայցը, փոթորկված Մարտին Լուտեր Քինգի սպանությունից, նկարել է Սև ու սպիտակ ձեռքերի բարեկամական սեղմումը՝ դրանով հավաստելով, թե մեծագույն հանցանք է ռասիզմը:



*Սոնյա Վայցի նկարը պատվելի դոկտոր Մարտին Լուտեր Քինգի սպանվելուց հետո:*

Ալիսիան էլ մեծ համակիրն է սևամորթ գործչի վարդապետության.

*Դու երազեցիր*

*ու մենք սովորեցինք...  
Արար աշխարհը սովորեց  
թե ոչ մի գույն մաշկի  
կարող է տարբերել  
էությունը հոգու.  
թե Աստված ապրում է  
ամենքիս մեջ (էջ 463):*

Այն, ինչ արել է Մարտին Լուտեր Քինգը, դարերի համար է, նրա նվիրումը մարդկությանը ապագայի տարածքում է նաև, այն, ինչ նա կատարել է և որի համար գոհվել է Աստծու պատգամները մարդկանց հասցնելու մղում է եղել, և հենց դրա շնորհիվ նա ապրելու է հավերժական կյանքով.

*Գիտեմ որ գիտես  
բայց թող  
որ բարձրաձայն հայտարարեմ  
որ մեզ հետ ես դու  
և միշտ պիտի լինես  
որքանով որ երազը  
գոյություն ունենա կյանքում (էջ 464):*

Նելսոն Մանդելան եղել է Հարավային Աֆրիկայի առաջին սևամորթ նախագահը (1994-1999), սակայն մինչ այդ

27 տարի բանտում է եղել: Նա ռասայական խտրականության դեմ մաքառող խիզախ մարտիկ էր, հեղափոխական նշանավոր գործիչ, նաև բարերար:

Ահա այս լուսավոր գործչին Ալիսիան մեկնում է հիացմունքի ու բարեկամության զգացումով լեցուն իր ձեռքը, որպես համակիրը վերջինիս ձգտումների.

*Եվ այդ է պատճառը,  
որ երբ քեզ եմ բարևում  
վերին ակնածանքով՝  
ճակատագրի վարպետ,  
գիտեմ, որ բարևում եմ  
մեծության (էջ 467):*

«Մայր Թերեզա» քերթվածում Ալիսիան վերջինիս դատում է սրբերի դասին ավելի շուտ, քան նրան կաթոլիկ եկեղեցին կոներ կանոնիկ սրբերի շարքում: Այդ կինը գթասրտության ճշմարիտ մայր էր, որն աշխարհի 133 երկրներում ուներ իր հիմնած գթասրտության քույրերի կենտրոնները: Նա իր գթասիրտ քույրերի հետ հասնում էր աշխարհի բոլոր այն վայրերը, ուր կար մարդասիրական օգնության ու մխիթարանքի կարիք: Պատահական չէ, որ Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո նա իր բարության հրեշտակներով եկավ նաև Հայաստան:

Ալիսիան հոգևոր հիացմամբ ներբողում է այդ կնոջ գործը, որը երդվել էր թեթևացնել մարդու տառապանքը: Փոքրամարմին այդ կինը կատարում էր հսկայի գործեր.

*Քո անսահման ուժը  
լեռներ շարժեց  
կաղապարելու  
անտարբերությունը մարդոց  
և աշխարհի ձեռքերը  
հավաքեցիր  
կերտելու համար  
մի նոր արեգակ (էջ 465):*

Մայր Թերեզային նվիրված Ալիսիայի բանաստեղծությունը շատ համահունչ է միջնադարյան սրբախոսական քերթվածներին, որոնք ներկայացնում են սրբի ծնունդը և ապա նրա աստվածահաճո գործունեությունը: Այդպիսի անհատները միանում են հրեշտակների խմբին, հավերժական կյանքով ապրում լույսի ու հանգստության մեջ և երբեմն-երբեմն իրենց լույսն իջեցնում են երկիր՝ մարդկանց ապրած ցավը մեղմելու.

*Այժմ ճանփորդում ես  
միշտ դեպի վեր*

*ամպերից անդին  
հրեշտակների երգչախմբով  
մինչև լույս դառնա  
Ու վերադառնաս  
հյույե առ հյույե  
փափկությամբ լցնելու  
Ճեղքերը ցավի (Էջ 466):*

«Խաղաղություն Քվանտային» շարքի սևեռնամիտը բանաստեղծուհու այն պնդումն է, թե «սերը հանճարն է գոյության»: Սա վերջնագնահատական է այն ամենից հետո, երբ նա խղճի մանրադիտակով շատ ուշադիր գննում է մարդկային կյանքը, որն այնքան խճճված է մտքերից, հուզումներից, մարդկային ստոր ու վսեմ գործերից, տագնապներից ու կորուստներից: Եվ այդ խելացնոր շրջապտույտում, որին ենթակա են բոլոր ապրող մարդիկ անխտիր, կա մի լուսավոր ու աստվածային ելք՝ ապրել աստվածային պատգամներով սիրո ու խաղաղության մեջ:

ՀԱՎԵԼ ՎԱԾ

## АЭЛИТА ДОЛУХАНЫН

### МИССИЯ ПОЭТА

Начало жизни Алисии Киракосян сложилось так же, как и у многих ее сверстников. Дети армян, чудом спасшихся от геноцида, они родились на чужбине – гражданами тех стран, что заменили им родину и чья образовательная система, морально-психологическая атмосфера стали черенками, привитыми к живому стволу, который издревле питали армянские корни.

Корни рода Алисии питала земля Вана, давшая на удивление много талантливых писателей, артистов, художников. Достаточно упомянуть тоже оказавшегося в Америке гениального Аршила Горки, чьи воспоминания и картины так проникновенно представляют навсегда потерянный им отчий край и чья тоска по родной земле как бы сосредоточилась в знаменитом портрете матери, в ее грустных и прекрасных глазах. Точно так чувствовала и воспринимала землю своих предков и Алисия Киракосян.

В Армении ее стихи впервые были изданы отдельной книгой в 1967 году в отличных переводах Ваагна Давтяна („Корень и сущность”). Молодая поэтесса, родившаяся в Аргентине, писала тогда по-испански. С годами, однако, ее творчество осваивает новые языки: армянский и английский.



Ныне Алисия одинаково свободно пишет на трех языках – явление поистине уникальное!

Вторим после Ваагна Давтяна открывателем стихов Алисии Киракосян в Армении стал композитор Роберт Амирханян, создавший на ее слова цикл песен, популярных в среде армянской интеллигенции с конца 60-х и до 80-х годов. Не зря поэтесса неоднократно утверждала, что настоящая лирика имеет цвет, колорит, мелодию.

Две книги Алисии Киракосян (вторая - „Письмо в Армению” – вышла в Ереване в 1979 году также в переводе В.Давтяна) открыли армянскому читателю автора весьма и весьма своеобразного. Да, это были переводы с испанского языка на армянский, и естественно, что творчество Алисии Киракосян не могло оказаться вне богатейших традиций испаноязычной поэзии. Однако в ней так же отчетливо, так же явно прослеживалась связь с литературой армянской. Судите сами, разве не является это маленькое стихотворение как бы продолжением любовных айренов Наапета Кучака?

Любовь – единственный гений бытия.

Альтернатива любви  
вовсе не нелюбовь,  
а смерть.

Влюбленные воскрешают бессмертие.

*(Здесь и далее подстрочный перевод мой. – А.Д.)*

Во втором ереванском сборнике Алисии Киракосян отчетливей становятся гражданские мотивы. В него, в частности, вошло полюбившееся читателям „Письмо в Армению” – яркий образец патриотической лирики, под которым подписались бы многие наши разбросанные по миру соотечественники.

Знаешь,  
мое и твое единство  
очень древнее.  
Я существую в твоих  
первых воспоминаньях.

Страстная, эмоционально насыщенная гражданская лирика этой новой книги явилась приятной неожиданностью для читателя. Вторым его открытием можно считать тему материнства, глубоко и мощно разработанную поэтессой во многих стихах. Человек – частица космоса, и эту частицу создает мать, фактически она созидательница микрокосма, его разумного атома. Мать любит свое дитя еще до его рождения, обожает после появления на свет, при этом прекрасно понимая, что подарив ребенку жизнь, она обрекает его на многие трудности и испытания, что ему придется не только пользоваться благами земного существования, но и нести тяжкий крест на этом тернистом пути. В этом великое счастье и великая трагедия материнства.

Тема эта получила развитие в книге стихов „Алтарь”, написанной на армянском языке и вышедшей в свет Лос-Анжелесе в 1989 году. Книга как бы обобщает пройденный поэтессой путь: здесь приведены биографические данные Алисии Киракосян, наиболее значительные этапы ее жизненного пути, библиография произведений, перечень литературных премий, рецензий на ее книги и многое другое. Издание оформлено с большим вкусом, иллюстрировано работами многих известных художников, в числе которых Пабло Пикассо и Гарзу, которые рисовали специально для Алисии Киракосян.

Но главное, конечно, стихи. „Алтарь” – яркое, тематически разнообразное и в то же время удивительно цельное полотно. На страницах книги, помимо традиционных для поэтессы тем, нашли отражение новейшие события и в первую очередь – Карабахское движение. Алисия Киракосян рассматривает его в контексте всего исторического пути своего народа и потому уверена, что голос его непременно будет услышан и понят во всех уголках планеты, ибо это клич свободы, это скопившееся в душах, спрессованное временем и вырвавшееся наружу, точно буря, стремление нации самой вершить свою судьбу. И конечно же, поэтесса вновь и вновь стремится переосмыслить трагическую участь соотечественников, понять причины этой „величайшей несправедливости”. Обращаясь к Богу, она упрекает его в том, что он на какое-то время забыл о преданном ему народе.

Справедливость приходит  
после многих веков.

Не молчи, Господь,  
ты не можешь  
быть соучастником  
мировых бедствий.

Ты не можешь  
оставить нас одних.

-----  
Но я тебя спрашиваю:  
на какое путешествие  
по вселенной  
ты тратил время,  
когда гибли армяне?

Понимая, что свободу невозможно завоевать без борьбы и без жертв, Алисия Киракосян в то же время матерински относится ко всему живому, ей ненавистны война, насилие, кровь, смерть. Мир видится ей раненым голубем с кровоточащими крыльями, и его необходимо излечить, чтобы он мог снова воспарить над планетой. Мир способен стереть зло с лица земли, утешить и накормить голодных детей, высушить каждую слезу...

Стихи Алисии Киракосян переведены на многие языки. Ее рисовали и ваяли многие художники и скульпторы: Мартирос Сарян, Кнарик Варданян, Армине Каленц, Ара Шираз, Хуан Карлос Бенитес, Сара Ребул, Элинио Фернандес и другие. Ее творчеству посвящено множество статей, в которых даны самые лестные характеристики. Среди тех, кто о ней писал, – Уильям Сароян и Хорхе Луис Борхес, Жак Превьер и Хуана де Ибарбуру. Паруйр Севак назвал ее одним из великих поэтов XX века, Жак Превьер сравнил с ярчайшей кометой на небосклоне мировой поэзии. Председатель Союза писателей Уругвая Хуан Иллариа в 1970 году написал: „Такие женщины, как Алисия Киракосян, творят историю души”. Пожалуй, этим, многое сказано.

## АЛИСИЯ КИРАКОСЯН

ИЗ КНИГИ „АЛТАРЬ”

*Перевел Альберт Налбандян*

\*\*\*

Я руки распахнула  
тебе навстречу.  
Руки  
раскрытыми остались.

Распахнутые руки –  
преддверие  
объятья.

Распахнутые руки –  
знак воли  
и свободы.

Но также скорбный образ  
распятого Христа.

\*\*\*

Возвратилась усталая  
с пышного бала-банкета.

Спотыкающиеся каблуки  
скинула с ног.

На вешалке  
одежду разместила  
поверх нее  
набросила улыбку.

С себя стряхнула  
сопение  
титулы  
должности  
маленьких людей.

Старательно почистила зубы  
чтобы содрать с них клейское эхо  
пустых разговоров  
и праздного шума.

И помыла лицо  
чтобы снова общаться с природой  
чтобы смыть этот вечер  
и смыть вместе с ним  
это зря изведенное время  
убывающей жизни.

\*\*\*

Я жажду полноты.

Открыла свой дневник  
и разглядеть сумела  
лишь суетность полулюбви  
в полуосвященных буднях  
в окружении  
полупочтенных людей.

Даже мои мечты  
обрываются на середине.

И теперь задаюсь вопросом:  
убеждена ли я  
что нуждаюсь в другой половине  
чтобы себя восполнить?

Или две половины  
в итоге —  
вдвое большая половина?

УВЕДОМЛЕНИЕ

Продаются дома



фильмы  
идеи  
деньги.

Продается еда  
одежда  
бумага и слово  
пол и смерть.

А еще – почему бы и нет? –  
премии  
титулы.

Об этом мы постоянно  
читаем в газетах.

И никто не объявит  
но каждый знает  
что так же легко  
продается низкопоклонство.

А наивные покупатели  
уверены что покупают  
почет.

\*\*\*

Я в звеньях бытия  
бывала всем.

Царицей  
сиделкой  
солдатом  
и сиротой...

Но почему  
почему я должна была стать  
еще и поэтом  
самозабвенно влюбленным  
в слова и в любовь  
в этом чуждом любви и поэзии  
мире?

\*\*\*

Если даже угаснет память  
кровь моя будет помнить  
нацией пройденный путь  
на котором старые смерти  
воскресают  
даже в улыбках.

Невозможно стереть  
песни брошенные в пучину

цепи сковавшие взлет  
и на каждом трепещущем стяге  
следы от бесчисленных пуль.

Глаза моего отца  
увлажненные воспоминаньем  
еще отражают  
бесконечные караваны страданий  
на дорогах изгнания.

И я отправляюсь с ним вместе  
в разбитое детство – услышать  
горький безвинный плач.

В мои шарики кровавые  
это боль  
навечно вошла  
я будущим поколениям  
ее передам в наследство.

И если когда-то исчезнут  
все воспоминания разом  
и останется на земле  
только капля армянской крови  
я знаю она повторит  
гулким голосом ветра:

–Я помню!

Я все еще помню!

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
Հայերեն

- 1) ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՄԵՆ, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ, քննական տեսություն, Երևան, 1998
- 2) ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑԻ, Աղամզիրք, աշխատասիրությամբ Ա.Մադոյանի, Երևան, 1989
- 3) ԱՐՏԱ ՎԻՐԱՊ ՆԱՄԱԿ, Յուշտի Ֆրիան, Երևան, 1958
- 4) ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840
- 5) ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, Մատյան ողբերգության, Տաղեր, թարգմանություն Վազգեն Գևորգյանի, Երևան, 1979
- 6) ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, Տաղեր և գանձեր, Երևան, 1981
- 7) ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ, Տաղեր, Երևան, 1984
- 8) ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Ա., Ներբողական որոշ խորհրդանիշերի բացատրությունը Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 7703 ձեռագրում (տե՛ս «Լրաբեր», հասարակական գիտությունների, ամսագիր, 1988, թիվ 11)

9) ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ, Երկեր, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ս.Ս.Արևշատյանի, Երևան, 1980

10) ԵՂԻՇԵ, Վարդանանց պատմությունը, թարգմանությամբ և ծանոթագրություններով պրոֆ. դ-ր Ե.Տեր-Մինասյանի, Երևան, 1958

11) ԵՂԻՇԵ, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ե.Տեր-Մինասյանի, Երևան, 1989

12) ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, Եղծ աղանդոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Երևան, 1970

13) ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, Երկերի լիակատար ժողովածու, հ. II, Երևան, 1990

14) «ԺՈՂՈՎՈՂ»

15) ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱԼԻՍԻԱ, Արմատ և էություն, Երևան, 1967

16) ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱԼԻՍԻԱ, Նամակ առ Հայաստան, Երևան, 1979

17) ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱԼԻՍԻԱ, Երկեր, Գլենդել, 1997

18) ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱԼԻՍԻԱ, Ամբողջական երկեր, Երևան, 2005

19) ԿՈՄԻՏԱՍ և Մ.ԱԲԵՂՅԱՆ, Հազար ու մի խաղ, Ժողովրդական երգարան, Երևան, 1969

20) ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ, Լոյսն առաւօտուն, Երևան, 1981

21) ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ, Անտիկ շրջանից մինչև Ը դար, Երևան, 1981

22) ՄԱՏԹԵՈՍ, Զ

23) ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՅՆԱՆ, Ծիսական բառարան, Երևան, 1992

24) ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ձեռ. թիվ 3206

25) ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՑԻ, Բանաստեղծություններ, Երևան, 1975

26) ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Բանք չափաւ, Վենետիկ, 1830

27) ՉԱՐԵՆՑ ԵՂԻՇԵ, Հատընտիք, Երևան, 1987

28) ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաթյանը, Երևան, 1963

29) ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ, Հայկական հերոսական էպոս, Երևան, 1961

30) ՏԵՐՅԱՆ ՎԱՀԱՆ, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1960

31) ՏԵՐՅԱՆ ՎԱՀԱՆ, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, 1961

## Այլ լեզուներով Ռուսերեն

- 1) ОРБЕЛИ И.А., Избранные труды в двух томах, т. II, Ереван, 2002
- 2) „ЛИТЕРАТУРНАЯ АРМЕНИЯ”, N 4, июль-август, 2004
- 3) „ПОЭЗИЯ АРМЕНИИ с древнейших времен до наших дней”, редакция, вступительный очерк и примечания Валерия Брюсова, Москва, 1916
- 4) ХВОСТОВ В., Очерк истории этических учений, Москва, 1912

## Ֆրանսերեն

- 1) „LA ROSERIE D'ARMÉNIE, t. I, Paris, 1918, t. II, 1923, t. III, 1929
- 2) THALIE DE MOLENES, Je m'appelle Arokiamari, Paris, 1980.



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան -----	5
Մուտք -----	9
-	
Առաջաբան -----	10
Առաջին հայտնությունը հայրենիքում -----	24
Նամակ առ Հայաստան -----	34
Խորան -----	46
Զրույցներ Աստծու հետ -----	63
Անդենական զրույցներ -----	111
Միրո մեկ ու կես հազարամյակը -----	117
Խաղաղություն Քվանտային -----	122
<b>Հավելված</b>	
Миссия поэта -----	131
Алисия Киракосян – Из книги „Алтарь”	
Перевел Альберт Налбандян -----	136
-	
Օգտագործված գրականություն -----	142